



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material



1862

4184

491.99-8  
7-29





y-4 w 6

2010

# Պ Ա Ր Գ Ե Ւ



ԱՐԱԿԱՆՑ

491.99-8

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱԼ

Ի ՄՔԱՅԵԼԻ ՍԵՐՈՎՔԵԱՆ ՊԱՏԿԱՆԵԱՆՑ.




ՉՈՐՐՈՐԴ ՏՊԱԴՐՈՒԹԻՒՆ :

Հրամանաւ Կյխանութեան ընդու-  
նած է բոլոր Ուսումնարաններումը  
Կովկասեան Ուսումնական Շրջանին

491.542-82

Դ-31



ԹԻՖԼԻԶ:

Ի Տպարանի Գ. Մելքոնմեանց և Հ. Էնթիաճեանց :

1862

2002

11757

**ОДОБРЕНО ЦЕНЗУРОЮ**

Тифлисъ. 5-го Ноября 1862 года.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
Կ Յ Ա Տ Ա Կ

ՅՈՒՂԱԲԵՐ  
ՄԵՐՈԲՅԱՆ - ԻՆՃԻԿՅԱՆԻ

491.99-8


Դ. 29

№ 57

# ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ԱՐ

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ



ԲՈՐԵԿԻՐԹ ՄԱՆՈՒԿ

Ի ՅԻՇԱՍ  
Ի ԻՂԱԲԵՐ

ՍԵՐՈԲԵԱՆ - Ի ՆԱԽԱ

23 ՀՈՒՆԴԻ 1929

1

**Առաւոտը**, ինչպէս որ զարթնում եմ, ես շուտով վեր  
եմ կենում տեղից, և շուտով երես լուանում եմ խտակ:  
Երես լուանալու ժամանակը քինջս և ականջներս էլ խտա-  
յում եմ և մազերս թրչում եմ: Ես խկի տաք ջրով երեսս  
եմ լուանում, այլ միշտ սառը ջրով, էնդուր համար, որ  
տաք ջուրը վեաս է, խկ սառը ջուրը օդուտ է և զուար-  
թայնող: Երեսս լուանալց յետոյ՝ երեսս, ականջներս և  
ձեռներս խտակ սրբում եմ, գլուխս սանդրում եմ և շո-  
րերս հագնում եմ: Յետոյ գնում եմ պատկերքի առաջեր  
երեսս խաչ եմ հանում, ծունը եմ գնում և աղօթք եմ  
անում: Աղօթքները ինձ սորվեցնում են իմհայրս կամ իմ  
վարժապետս: Աղօթք անելու ժամանակը ես կանգնում եմ  
ահով և ջերմեռանդութիւնով. էնդուր համար, որ աղօթք  
անել նշանակում է Աստրծու. հետ խօսել: Երբ որ մարդ Աս-  
ուծու հետ խօսում է և նրանից բան է ինդրում, պէտք  
ահով և երկիւղով և մեծ ջերմեռանդութիւնով խնդրի:  
Դւրիշ վատ մանկունք աղօթքի ժամանակը համեստ և ջերմ-  
եռանդ չեն կենում: Էդ շատ վատ բան է և Աստուած է-  
տուր համար կը բարկանայ: Աղօթքի ժամանակը պէտք է  
հանդարտ կանգնել ոչ ծիծադել, ոչ շարժիլ և ոչ ձեռքով  
կամ ոտքով խաղալ. պէտք է միայն պատկերին մտիկ տալ և

1

միտքը Ասալծու մօտ ունենալ։ Աղօթքի ժամանակը խնչ-  
րում եմ Աստծանից իմ հօրս և մօրս եղբօներին, քու-  
րերիս և բոլոր մարդկանց համար կեանք, առողջութիւն և  
բազգաւորութիւն։

**Առաւօտեան** աղօթքից յետոյ գնում եմ իմ հօրս և  
մօրս ձեռքը խոնարհութիւնով համբուրում եմ և առում  
եմ ԲԱՐԻ ԼՈՅՍ: Յետոյ իմ եղբօներիս և քուրերիս ա-  
սում եմ ԲԱՐԻ ԼՈՅՍ: Մինչեւ որ ինձ իմ ծնողքս թէյ  
(այս ինքն չայ) կամ հայ կամ ուրիշ բան չըտան, ես չեմ  
պահանջում, այլ հանդարտնատում եմ; Երբ որ ինձ մէկ բան  
են տալի, ես հանդարտ ուտում եմ կամ խմում եմ. ոչ  
ինչ չեմ թափում վըես կամ նստած տեղս և ուտելու կամ  
խմելու ժամանակը զգոյշ եմ լինում, որ ոչինչ չըկոտրեմ;  
Նմանապէս ուտելու կամ խմելու ժամանակը չեմ խաղում;  
Երբ որ չայըս կամ նախաճաշ աւարտում եմ, ես իմ հօրս  
և մօրս ձեռքը համբուրելով շնորհակալութիւն եմ անում:  
Յետոյ եթէ ազատ օր է, նստում եմ կարդալու, խակ եթէ  
ազատ օր չէ, գնում եմ ուսումնարան։

**Ուսումնարան** գնալու ժամանակը ես շուտով հաւաքում  
եմ իմ գրքերս, թղթերս, գրիչս և ուրիշ ինչ որ հար-  
կաւոր է, կազում եմ աղլուխիս միջումը կամ դնում եմ  
տոպրակիս մէջ, որ տանելու ժամանակը չըկորցնեմ։ Տնից  
գուրս գալու ժամանակը, առաջ երեսս խաչ եմ հանում,  
և յետոյ սկսում եմ հանդարտ գնալ։ Ճանապարհին չ'եմ  
վաղում և ոչ ոքի հետ չ'եմ խաղում։ Ուրիշ վատ տղէր-  
քը ճանապարհին փողոցումը (քուչերումը) վաղում են, խաղ

Ինչ գաս որ ինձ վարժապետս տալիս է , ես պէտք է  
առաջ լաւ հասկանամ , մէկքանի անդամ միտք անելով կար-  
դամ , և եթէ հրամայած է անդիր սերտել պէտք է լաւ  
անսխալ սերտեմ : Դասս սերտելու կամ գիրք կարդալու ժա-  
մանակը ես պէտք է բոլոր միտքս հաւաքեմ կարդացած բանի  
վրա և ուրիշ բաների վրա միտք չ'անեմ : Եթէ միտքս ու-  
րիշ բաների վրա տանեմ , չեմ կարող շուտով հասկանալ և  
էնդուր համար վարժապետս կըբարկանայ : Կարդալու կամ զա-  
սերտելու ժամանակը պէտք չէ ձեռքով կամ ոտքով խաղալ .  
գիրքը պէտք է լաւ պահել , որ չըկեղաստուի . պէտք է հան-  
դարտ կանգնել կամ նստել և մտադրութիւնով կարդալ : Կար-  
դալու ժամանակը պէտք չէ ուրիշ բաների վրա միտք անել  
այլ միայն կարդացած բանի վրա : Վարժապետիս և ամէն պա-  
տուաւոր մարդկանց հետ խօսելու ժամանակը ես նստած չ'եմ  
խօսում , այլ ոտքի վրա եմ կանգնում . էնդուր համար որ  
մեծի հետնստած խօսելը անքաղաքավարութիւն է :

Եթէ ես գասս լաւ չըսերտեմ , վարժապետս կըբարկանայ և  
ինձ կըպատժի , ես էլբան չ'եմ սովորիլ և իմ անունս կըգնեն  
ԾՈՅՆ (Ժամբալ) : ԾՈՅԼ աշակերտին ոչ ոք չի սիրում և նա  
ոչինչ չի սովորում : Ես ուզում եմ աշխատասէր լինիմ , որ  
բան սովորիմ և լաւ գիտուն մարդ դառնամ : Էն ժամանակը  
ինձ ամէն մարդ կըսիրի , իմ ծնողըս ինձ համար լաւ շորեր  
կըկարեն և ինձ պարդեներ կըտան և վարժապետս միշտ կը-  
գովի : Դասսից յետոյ , երբ որ հրաման կըտան խաղալու , ես  
պէտք է հանդարտութիւնով խաղամ : Խմընկերներիս միջեց  
ես պէտք է էնպէս տղերքի հետ խօսեմ և խաղամ , որք բերա-  
նից վատ խօսքեր չեն հանում և միշտ պարկեշտ են . իսկ  
էնպէսի տղերքի հետ , որք վատ խօսքեր են խօսում կամ  
շարութիւն են անում , ես չ'եմ խաղալ և չ'եմ խօսիլ , էն-  
դուր համար , որ վատ ընկերից ես էլ վատ բաներ կըսորվեմ

և ինքս էլ վատ կը լնիմ; Ես չ'եմ ուզում վատ աշակերտ լիւ  
նիւ, այլ միշտ հետեւում եմ լաւ, խելօք, հնազանդ և ուշ  
առ մնասէր աշակերտ լինիլ, որ ամենքը ինձ սիրեն և գովեն:

7.

Երբ որ ուսումնարանից արձակեն, ես հանդարտ պէտք  
է հաւաքեմ զրքերս, թղթերս և ուրիշ բաներս և կապեմ  
աղլուխիս, միջումը որ չըկորցնեմ ճանապարհին:

Յետոյ պէտք է խոնարհութիւնով գլուխ տամ վարժաւ  
պետիս և զնամ տուն: Ճանապարհումը պէտք է համեստ և  
պարկեշտ գնամ, ինչպէս որ վերը զրած էր: Նրբ որ հաս-  
նեմ տուն, պէտք է հօրս և մօրս ձեռքը համբուրեմ, յե-  
տոյ զրքերս պահեմ իրանց տեղումը և ոչթէ ուրիշ վատ աը-  
զէրքինման վէր զցեմ ինչ տեղ համնի: Եթէ կարդով իրանց  
աեղումը, չոպահեմ, զրքերը խարար կը լնին, կը պատառուին և  
կը կորչն: Եթէ ես զրքերս կեզտուեմ կամ կորցնեմ, իմ ծը-  
նողքս և վարժապետներս կը քարկանան: Ես չ'եմ ուզում, որ նը-  
րանք ինձ վրա բարկանան: Տանը ես պէտք է խաղամ շատ  
համեստութիւնով և պարկեշտութիւնով: Քուչէքումը խա-  
ղալը ամոթ է. ես կարող եմ խաղալ տանը կամ մեր բակու-  
մը: Ես պէտք է խաղամ իմ եղբօրներիս կամ քուրերիս հետ:

Ես իմ եղբօրներիս և քուրերիս շատ սիրում եմ, երբէք  
նրանց հետ կռիւ չ'եմ անում, ինչ որ ունենում եմ մենակ  
չ'եմ ուտում, այլնրանց հետ բաժանում եմ: Եթէ ես իմ  
եղբօրներիս և քուրերիս չըսիրեմ, ինձ էլ իմ ծնողքս չ'են  
սիրիլ և ես վատ տղայ կը լնիմ: Եթէ ես իմ եղբօրներիս կամ  
քուրերիս հետ կռվեմ և կամ նրանց ծեծեմ, Աստուած ինձ  
վրա կը բարկանայ: Ես նրանց պէտք է շատ սիրեմ: Էնդուր հա-  
մար, որ նրանք իմն են, մէկ մօրից ենք ծնած և աշխարքու-  
մը նրանցից աւելի մօտիկ ոչ ոք չ'ունիմ: Ինչպէս տանը, էն-

տեղ և ամէնքի հետ ես պէտք է սիրով կենամ, որ Աստուած ինձ սիրի և խելօք մարդիքը գովեն :

Եթէ դրացիների երեխերքը լաւ տղերք են և վատ խօսքեր չ'են խօսում, ես կարող եմ նրանց հետ էլ խաղալ, բայց ծառաների հետ երբէք չ'եմ խաղալ: Խաղալու ժամանակը պէտք չէ բարձր ձէնով կանչել և գոռալ կամանկարդ վազել և շորերը պատառել և կեղտոտել, այլ պէտք է էնպիսի խաղ խաղալ, որ ոչինչ վնաս չըրերի ոչ ինձ և ոչ ուրիշին :

Ես գիտեմ փողով խաղալը շատ վատ բան է և իմ հայրըս շատ սաստիկ արգելելէ ինձ: Նմանապէս պէտք չէ քար գձել կամ փէտով խաղալ: Էնդուր համար որ քարով կամ փէտով կարելի է, որ մէկին վնաս համար կոտրուի: Ես պէտք է էնպիսի խաղ խաղամ, ինչ որ հրաման տան ինձ իմ ծնողքս կամ վարժապետոս: Մէկ երկու սհաթ խաղալուց յետոյ, պէտք է նստեմ և միտքս հաւաքած դասերս սերտեմ: Որ վարժապետիս մօտ գնամ: Եթէ դասերս տանը չըսերտեմ ուսումնարանումը վարժապետոս կըբարկանայ:

8.

Երբ որ ճաշի սեղանը պատրաստ ըլնի և ինձ կանչեն հայ ուտելու, ես առաջ պէտք է երեսս խաչ հանեմ ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ասելով և յետոյ նստեմ: Սեղանի վրա շատ բաներ կան, որոց անունները ես գիտեմ և թէ ընչե՞ համար են դործ ածավում: Գդալը, դանակը, չանկալը (պատառաքաղը) դրած են, որ ձեւով չըկտրեմ և չ'ուտեմ կերակուրները: Դէնջակը (աալ-վետը) դրած է, որ բերանս սրբեմ և ուտելու ժամանակը ծնկանս վրա գձեմ: Աղամանը դրած է, որ եթէ կերակուրիս միջի աղը պակաս ըլնի, դանակի ծայրով վեր առնեմ փոքր աղ և կերակուրիս մէջ խառնեմ: Ստաքանը (բաժակը) դրած է, որ նրա մէջ ինձ համար ջուր կամ փոքր դինի ածեմ և

նրանով խմեմ։ Ես սեղանի մօտ ճաշի ժամանակը նստում եմ հանդարտ, ուղիղ և առանց խօսելոյ։ Մինչեւ ինձ մօտ չ'են բերում կերակուրը, ես ուրիշ վատ տղերքի նման չ'եմպաշանջում։ Երբ որ բերում են, ես պարկեցութիւնով վեր եմ առնում և փոքր ինչ ածում եմ իմ առաջս դրած ամանի մէջ։ Եթէ շատ վեր առնեմ և չըկարողանամ ուտելու, ամօթէ։ Շատ վեր առնելը նշանակումէ աղահութիւն։ Ես էնքան պէտք է ուտեմ, ինչքան ինձ տան իմ ծնողքը կամ ինձանից մեծերը։

Եթէ սեղանի վրա ինձ բան են հարցնում, ես համեստ և պարկեցտ պատասխան եմ տալի։ Բայց երբ որ մեծերը խօսում են, ես հանդարտ նստած լսում եմ և ինքս չ'եմ խօսում։ Մինչեւ որ ինձ չըհարցնեն։ Սեղանի վրա պէտք է ըզդուշութիւնով ուտել և խմել չափաւոր, որ չըլնի թէ կերակուրը թափեմ սեղանի ծածկոցի (սուփրի) վրա, կամ սեղանի վրայից գդալը կամ չանկալը կամ դանակը և կամ ուրիշ բան վէր գձեմ։ Ուտելու ժամանակը պէտք է զգոյշ լինիմ, որ կերակուրը վրէս չըթափեմ և շորերս չըկեղտում։ Պէտք է հանդարտ ուտել և խմել առանց շտապելու և ազահութիւնի, բայց էնպէս, որ ուրիշները ինձ չըսպասեն։ Երբ որ սեղանից վեր կենամ, ես պէտք է երեսս խաչ հանեմ ՑԱՆՑՈՒՆ ՀՕՐ ասելով և յետոյ հօրս և մօրս ձեռքը համբուրեմ, շնորհակալութիւն անեմ, եթէ մեր տանն եմ։ Իսկ եթէ ուրիշի տանն եմ հրաւիրուած, պէտք է սեղանից վեր կենալուց և երեսս խաչ հանելուց յետոյ, տան տիկնոջ ձեռքը համբուրեմ և տան տիրոջը գլուխ տամ։

Ինձանից մեծերի և պատուաւոր մարդկանց հետ խօսելու ժամանակը ես պէտք է շատ քաղաքավարութիւնով խօսսեմ։ Եթէ իմ անունս տան, ես պէտք է ասեմ ՀՐԱՄՄԷ

կամ ի՞նչ էք ՀՐԱՄԱՅՈՒՄ : Պէտք չէ ասել Հ'Ա, այլ ՀՐԱ-  
ՄԵՐԵՔ, պէտք չէ ասել ԶԵ, այլ ՈՉ, պէտք չէ ասել ԴՈՒ,  
այլ ԴՈՒՔ : Ես պէտք է մտիկ անեմ, թէ պատուելի և քա-  
ղաքավար մարդիկը ինչպէս են խօսում, նստում և մանգալի,  
և աշխատեմ նրանց նմանիլ : Երբ որ մէկի տուն գնամ, պէտք  
է քաղաքավարութիւնով դրու խ տամ տանտերներին և միուս  
հիւրերին (զօնաղներին) :

Ուրիշի տանը եթէ Էնպէս բան տեսնեմ, որ մեր տանը  
չըկայ, պէտք չէ որ շատ զարմանամ և կամ ինդրեմ, որ ինձ  
տան, այլ պէտք է միայն մտիկ անեմ և կամ դովեմ : Եթէ  
ինձ բան ընծայեն, ես պէտք է շնորհակալութիւնով վեր առ-  
նեմ : Բայց ամէն բանը ես վեր առնել չեմ կարող, մինչեւ  
որ իմ հայրս կամ մայրս չըհրամայի : Ես ամենեին չեմ կա-  
րող ոչ մեր տանը և ոչ ուրիշի տանը թագուն կամ առանց  
հրամանի ուրիշի բանը վեր առնել : Ով որ ուրիշի բանը ա-  
ռանց հրամանի կամ թագուն վեր կ'առնի, նա ԳՈՂ է : Գող  
անունը շատ վատ անուն է, և Աստուած գողին չի սիրիլ և  
կըպատժի : Գողին ամէն մարդ էլ չի սիրիլ և ես տեսել եմ, ինչ-  
պէս գողերին ձեռերը և ոտերը կապած տանում են պատժելու :

10 .

Ես պէտք է կիրակի օրը և ամենայն մեծ տօների օրերին  
գնամ եկեղեցի աղօթք անելու : Եկեղեցին հասարակ տեղ չէ,  
այլ Աստղծու տունն է. Էնդուր համար, պէտք է եկեղեցի  
մասել մեծ ահօվ և պարկեշտութիւնով : Երբ որ եկեղեցւոյ  
Դրանը մօտենամ, պէտք է դդակս հանեմ և հանդարտ մըտ-  
նեմ երեսս խաչ հանելով : Երբ որ հասնեմ իմ կանգնելու  
տեղս, պէտք է առաջ երեք անգամ երեսս խաչ հանեմ  
ՅԱՆՈՒՆ ՀՕՐ ասելով և երեք ծունը դնեմ. յետոյ պէտք է  
կանդնեմ և հանդարտ ցած ձէնով իմ աղօթքներս ասեմ :

Եկեղեցումը պէտք է կանգնել համեստ, պարկեշտ և մեծ երակիւղով: Պէտք չէ էս կողմը էն կողմը մտիկ անել ժողովուրդին: ոչ խօսիլ ոչ ծիծաղել և ոչ ման գալ: Երբ որ տէրտէրները չոքում են, պէտք է ես էլ չոքեմ: Ինչոր եկեղեցումը կարդում են և երգում են, ես պէտք է ականջ դնեմ, և եթէ գիտենամ, ինքս էլ ցած ձէնով նրանց հետ հանդարտ ասեմ: բայց իմ ձէնս պէտք է էնպէս հանեմ, որ միայն ինքս լսեմ:


Ես տեսել եմ որ ուրիշ վատ տղէրքը եկեղեցումը խօսուում են, ծիծաղում են, խաղում են, վազում են և ուրիշ անկարգ բաներ են անում: Եղ շատ վատ բան է: Աստուած էտուր վրա կըբարկանայ, տէրտէրները էնպիսի տղէրքին եւ կեղեցուց դուրս կ'անեն, և նրանց ծնողքը նրանց կըպատճեն:

Ովոր եկեղեցումը համեստ չի կանգնիլ և աղօթք չի անիլ նաև լաւ տղայ չի դառնալ և Աստուած նրան չի սիրիլ:

Երբ որ ժամերգութիւնը կ'աւարտուի, ես պէտք է երեք ծունք գնեմ և համբուրենիմ սուրբ խաչը կամ սուրբ աւետարանը և կամ սուրբ պատկերները, համեստ դուրս դամ եկեղեցուց և գնամ տուն: Ճանապարհումը, եթէ Ճանաչ մարդ պատահի, պէտք է ասեմ ՈՂՈՐՄԻ ԱՍՏՈՒԱԾ: Եսկ եթէ ինձ ասեն եղ բանը, ես պէտք է պատասխան տամ: ՈՂՈՐՄԻ ԾՆՈՂԱՅԴԻ: Նմանապէս պէտք է ասեմ: Երբ որ տուն մանեմ:

Ինչ կարգ որ սորվեցայ էս գրքից առաւօտուայ չայի և Ճաշի ժամանակի համար, էն կարդն էլ պէտք է պահեմ իւրիկուան չայի և իրիկնահայի ժամանակը: Երբ իմ քնելու ժամանակը գայ, պէտք է առաւօտվայ նման գնամ պատկերքի առաջել երեք անգամ երեսս խաչ հանեմ ՑԱՆՈՒՆ ՑՈՐ ասելով և երեք ծունք գնեմ, և աղօթքներս ասեմ:

Առաւոտվայ աղօթքի ժամանակը պէտք է Աստծանից շնորհակալ լինիմ, որ նա ինձ և իմ ծնողացը, եղբօրներիս և քուրերիս առողջ զարթեցրուց և արժանի արաւէս օրին, և խնդրեմ, որ էն բոլոր օրը և միշտ էլափահի ինձ իրա ողորմութիւնով և իրա շնորհը ինձ պարզ եմի: Իսկ զիշերը պէտք է շնորհակալ լինիմ Աստծանից, որ նա ինձ, իմ ծնողացը, եղբօրներիս և քուրերիս առողջութիւնով պահեց բոլոր էն օրը և հասցրուց զիշերի: Նմանապէս պէտք է ինդքսիմ, որ էն զիշերն էլ պահի մեղառողջութիւնով և արժանի անի առաւօտին: Աղօթքից յետոյ ես պէտք է խոնարհութիւնով հօրս և մօրս ձեռքը համբուրեմ և ասեմն նրանց ԲԱՐԻ ԳԻՇԵՐ: Յետոյ պէտք է շորես հանեմմեկտեղ կարգով դնեմ, որ առաւօտը առանց գժուարութեան գտնեմ, և ապա պառկեմ քնելու:



### ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

Ամենահարկաւոր մանկական զիտելիք:

### 1.

Ես զիտեմ, որ ինձ ստեղծել է Աստուած: Աստուած ստեղծել է աշխարհը և նա է էս ամեն բանի տէրը և պահողը:

Առանց Աստղու կամքին ոչինչ չի լինիլ մինչեւ ծառի տերեւն էլ չի շարժիլ: Ես շատ շնորհակալ եմ Աստծանից, որ նա ինձ ստեղծել է և պահում է: Նմանապէս շնորհակալ եմ իմ հօրից և մօրից, որ նրանք ինձ ծնել են և իմ մանկութեան ժամանակը պահել են, մեծացրել են և մինչեւ էս օր էլ պահում են, կերակրում են և հազցնում են: Նրանք ինձ համար շատ նեղութիւններ են քաշել և միշտ էլ քաշում են: Իմ հիւանդութեան ժամանակը նրանք շատ զիշերներ անքուն են մնացել ինձ համար բժիշկ են բերել:

գեղեր են առել, և ինչքան ես ցաւից նեղացել եմ։ Նրանց սիրաը իմ ցաւից առելի է ինձ համար ցաւել։ Ես պարտական եմ իմ ծնողացը շատ պատիւ տալ հնազանդ լինել նրանց խօսքից դուրս չըգնալ։ Ովոր երա ծնողաց երախտիքը, աշխատանքը և բարերարութիւնը կըմոռանայ, նրան Աստուած չի սիրիլ և բախտաւորութիւն չի տալ։ Նմանապէս պարտաւոր եմ շնորհակալ լինիլ իմ վարժապետներից և նրանց պատիւ տալ, որ նրանիք ինձ լաւ բաներ են սորվեցնում։ Էնպէս էլ պէտք է պատիւ տամ ամէն պատուաւոր և ծերմարդկանց :

Երբ որ ես մեծանամ և իմ ծնողքս ծերանան, ես պէտք է նրանց առելի պատուեմ և նրանց իմ աշխատանքով պահեմ և նրանց ծերութեան ժամանակը իմ հնազանդութիւնով քաղցրացնեմ։ Իսկ եթէ նրանց մէկ կերպով կընեղացնեմ և նրանց սիրու կըդառնացնեմ, Աստուած ինձ վըա կըբարկանայ և ինձ կըպատժի։ Ես իսկի մէկ ժամանակ պէտք չէ մոռանամ իմ հօր և մօր աշխատանքը և նրանց երախտիքը։ Երբ որ նրանիք մեռնեն, ես պէտք է նրանց հոգւոյ համար աղօթք անեմ և էնդրով իմ որդիական պարտաւորութիւններս հատուցանեմ։ Նմանապէս պէտք է իմ հօր և մօր անունը պատուով և յարդանքով յիշեմ և բարի վարքով հետևեմ, որ նրանց անունին պակասութիւն չըլնի, այլ նրանց պատուով պահեմ։

Մեր տան միջումը և ուրիշ տեղերքումը ես շատ բաներ եմ տեսնում և լսում, և ամէն տեսած և լսած բանս ուզում եմ իմանալ, թէ անունը ի՞նչէ, ընչի՞ համար է և ի՞նչպէս է շինած և կամ ի՞նչպէս պէտք է գործ ածուի։ (\*)

\* ) Շատ օգտաւէտ կըլինի, եթէ վերտղեալ բարեկեցութեան կանոնները աշակերտաները եւ մանկունք սերտեն բերան։ Իսկ ծնողքը եւ վարժապետները դանազան կերպով մեկնեն հարկաւոր դիտելիքը։

Ես դեռ ևս մանուկ եմ։ Մանկունք շատ բան չ'են իւմանում և էնդուր համար մանկանցը ուսումն են տալի, որ սովորեն։ Ինձ ուսումն են տալի ուսումնարանումը և քանի որ ես ուսումն եմ առնում, ես աշակերտ եմ։ Լաւ աշակերտը լսող կրնի և ականջ կրդնի միայն էն բանին, ինչ որ ուսուցիչը ասում է։ Լաւ աշակերտը պէտք է միտք անի էն բանի վրա, ինչոր պէտք է անի, հասկանայ և մտքին պահի։ Լաւ աշակերտը յօժարութիւնով է զնում ուսումնարան, միշտ աշխատասէր է կարգին, խատակ, պարկեցտ և խաղաղասէր։ Նա խիլի մին ժամանակ ու շչի գնում ուսումնարան, անկարգութիւն չի անում ուսումնարանից զուրս զալու ժամանակը և առանց բանի փողոցներումը չի ման գալի, այլ ուղղակի տուն է գընում։ Ես ուզում եմ լաւ աշակերտ լինիլ։

Ես գիրքը, որ ես կարդում եմ, զրած է իմ ուսման համար։ Ինձ համար շատ օդուտ է, երբ որ ես կարդում եմ միտք անելով և հասկանալով։ Ես կ'աշխատեմ հասկանալ ամեն բանը, ինչ որ կարդամ։ Խիլ եթէ մէկ բան չըհասկանամ, ես կըլինդրեմ իմ վարժապետից, որ ինձ հասկացնի։ Ես գիւտեմէս զըքի անունը։ Նա զրած է էս զըքի առաջին երեսումը։ Էն երեսումը նմանապէս զրած է, թէ ո՞ր քաղաքումն է տըպած սա և ո՞ր թուին։ Իմ գիրքս ունի կազմ։ Էն տունը. որ տեղ գիրք են տպում, ասում են տպարան։ Ես տեսել եմ շատ ուրիշ տպած զրքեր։ Ես գիտեմ էն զըքի անունը, որ ամենից առաջ սկսեցի կարդալ։ Գիրք շինողը առաջ զըռում է թղթի վրա, յետոյ տալիս է տպելու։ Մէկ գիրքը, որ տըպում են, փոքր ժամանակումը շատանումէ քանի մին հազարի չափ։

Յ.

Ամէն զրքի միջումը կան շատ թերթեր : Կաղմարարը կարումէ ևս թերթերը մէկմէկու հետ, որ նրանք չըթափառ ուեն , չըկորչեն կամ չըխառնուեն : Երբ որ ես կըմեծանամ, հիմիկվանից աւելի խելօք կըլնիմ, եթէ հիմի ծուլութիւն չ'եմ անիլե պարապ չ'եմ ման գալ այլ կ'աշխատեմե ուսումն կ'առնեմ : Պարապ ման եկողը ոչինչ չի սովորիլե ոչոք նրան չի սիրիլ : Ուսումնարանումը ես պէտք է սովորեմ ոչ թէ մէնակ վարժ կարդալը, այլե իստակ եւ պարզ դրելը եւ շուտով համարելը : Ով որ ինքը զրել չըդիտի եւ ուրիշի դրածը չի կարող կարդալ, նա աշխարհքի միջումը շատ յետ կըմնայ ուրիշներից : Ով որ համարել չըդիտի, նրան շատ անդամ խարումեն ենա չի կարող ինքը իրան պէտքական լինիլ : Ես շատ կըհետևիմ, որ շուտ սովորեմ կարդալ, զրել եւ համարել : Ես սովորել եմ համարել մէկ, երկու, երեք մինչեւ հարիւր կամ հազար : Իմ հայրս կամ վարժապետս ինձ զանազան դրամներ (փողեր) են ցոյց տալի եւ հասկացնումեն, թէ ամէն մէկը ինչ աժի : Ինչ բան որ տեսնում եմ, ես ուզում եմ լաւ մտիկ անել եւ իմանալ եւ եթէ չ'եմ հասկանում, պէտք է հարցնեմ հօրս կամ վարժապետիս, կամ ուրիշ մեծ մարզու եւ խնդրեմ որ ինձ հասկացնեն :

Երբ որ ես մէկ տարեկան էի, չ'էի կարողանում ոչ մանական զալ, ոչ իսօսել եւ ոչ ինչ չ'էի հասկանում : Երկու տարեկան ժամանակս ես սովորեցայ խօսիլ եւ ման գալ . բայց ամէն բանը չ'էի հասկանում, ինչ որ ինձ ասում էին: Իմ անունս է — , աղջանունս է — , ես գիտեմ քանի տարեկան եմ :

4.

Ես գիտեմ, թէ ժամանակը ինչպէս է բաժանվում : Շաբաթը եօթն օր ունի : Օրերի անուններն էլ գիտեմ :

առաջին օրը ԿիերԱԿԵ, ԵՐԿՐՈՒԸ ԵՐԿՈՒՇԱԲԹԻ, ԵՐՊՈՐԴԸ  
ԵՐԵԲՇԱԲԹԻ, ՀՈՐԾՈՐԴԸ ԶՈՐԵԲՇԱԲԹԻ, ՀԻՆԳ-  
ՇԱԲԹԻ, ՎԵցերրորդԸ ՈՒԹԲԱԹ, և ԿօՇՆԵՐՐՈՐԴԸ ՇԱԲԱԹ : Զորս  
շաբաթը ԵՐԲ որ անց կենան, կրնի մէկ ամիս : Ամիսը ու-  
նի կամ 50 կամ 51 օր, բացի մէկ ամսից, որի անունը  
ՓԵՏՐՎԱՐ է : Էս փետրվար ամիսը կամ 28 կամ 29 օր ու-  
նի : Ես գիտեմ ամիսների անունները : 1. ՅՈՒՆՎԱՐ, 2. ՓԵ-  
ՏՐՎԱՐ, 3. ՄԱՐՏ, 4. ԱՊՐԻԼ, 5. ՄԱՅԻՍ, 6. ՅՈՒՆԻՍ,  
7. ՅՈՒԼԻՍ, 8. ՕԳՈՍՏՈՍ, 9. ՍԵՊՏԵՄԲԵՐ, 10. ՀՈԿՏԵՄ-  
ԲԵՐ, 11. ՆՈՅԵԲՄԲԵՐ, և 12. ԴԵԿՏԵՄԲԵՐ : ԵՐԲ որ էս տաս-  
ներկու ամիսները անց կենան, կրնի մէկ տարի : Տարին ու-  
նի 52 շաբաթ, կամ 12 ամիս, կամ 365 կամ 366 օր :  
Առաջին ամսի (յունվարի) առաջին օրը առում են ՆՈՐ ՏԱ-  
ՐԻ : Էն օրը աղջականները և բարեկամները մէկ մէկու շը-  
նորհաւորումնեն և ցանկանում են, որ տարին բաղդաւոր լի-  
նի : Քրիստոնեանները տարիների համարքը սկսում են Քրիս-  
տոսի ծնունդի օրից, և էն օրից համարելով մինչև հիմի անց  
է կացել 1862 տարի : Հրեանները իրանց տարիների հա-  
մարքը սկսում են տշնարհքի ստեղծելու օրից : Մահմեդա-  
կանները իրանց համարքը սկսում են Մահմէդի Մերքա քա-  
ղաքից Մէջինա քաղաք վախչելու օրից, որ նրանց լեզուով  
ասում են Հիջրէթ :

5.

Դեկտեմբեր, Յունվար և Փետրվար ամիսներին շատ ցուրտ  
է լինում, ձիւն է գալի և ջուրը սառում է : Էս ժամանա-  
կի անունն է ԶՄԵՌՆ : Մարտ, Ապրիլ և Մայիս ամիսներին  
էնքան ցուրտ չէ, սառուցը հալվումէ, ձիւնը քիչ է գալի.  
ծառերը ծլումնեն, ծաղկումնեն, և տերեններ են դուրս տալի.

Ճիծեռնակները սկսում են թռչել և բայց վումեն Ճաղեկները : Ես գեղեցիկ ժամանակի անունն է ԳԱՐՈՒՆ : — Յունիս, Յուլիս և Օդոստոս ամիսներին արեգակը այրումէ և շոք է լինում մարդ շոքումէ, բայց շոքը հարկաւոր է էնդուր համար, որ շոքը հասացնումէ շատ լաւ միջքեր և պոտոլներ, զորօրինակ՝ տանձը, լանձորը, գեղձը, սալորը : Ես ժամանակի անունն է ԱՄԱՌՆ : Սեպտեմբեր, Հոկտեմբեր և Նոյեմբեր ամիսներին հովէ լինում. հաւաքումեն և քաղում են միքքերը քու բաստաններումը, այդիներումը (բաղերումը) և տաշիերումը : Ես ժամանակի անունն է ԱՇՈՒՆՔ : Յուլիս և Օդոստոս ամիսներին գեղցցիքը հնձումեն ցորեն մանդաղով (զեւրանդով), կապում են խուցեր և տանում են կալը և էնտեղիանում են : Յետոյ գեղցցիքը հանումեն գետնի տակից գետնախնձորը (կարտոֆիլը) : Ինչ որ իրանց համար բաւական է, որ համար ամբարտ է ամբարտ ամբարտ ամբարտ են քաղաք Տախելու : Կալսած ցորենը աճում են ամբարը. յետոյ քիչքիչ հանելով աճում են մեծ տոպրակների մէջ և տանում են ջաղացքը աղալու համար, որ ալիւր դառնայ : Ուրեմն տարին չորս եղանակ ունի: Ի՞նչպէս է նրանց անունները : Հեմիկ մեղանումը ի՞նչ եղանակ է : Երբ կրվերջանայ էս եղանակը : Արանից յետոյ ո՞ր եղանակը կրգայ : Ո՞ր եղանակն է ողջից լաւը :

Չմեռվայ ժամանակը, թէսկէտ և շատ ցուրտ լինի, ես պէտք է սիրով գնամ ուսումնարան : Իմ պատուելի վարժապետ ասում է, թէ ցուրտը մարդու համար օգուտ է : Իմաստութիւն և զիտութիւն սիրող տղան ամէն դժուարութիւնները պէտք է յանձն տռնի : Դու բոլից որ տուն մտնեմ. պէտք չէ գնալ իսկոյն կրակի կամ վառարանի (փէշի) մօտ : Եթէ գնամ շատ վնաս կը լինի : Գեղցցիքը մեզ շատ օգուտ են. եթէ նրանք չ'աշխատեն և մեզ համար ուտելու բաներ չը-

բերեն, մինք պէտք է ինքներս գնանք վար ու ցանքս անենք, որ մնդ համար շատ զժուար կոլի : Գեղըցիքը պահում են և ծախումեն հաւ, ստդ (խազ), բադ (օրդակ), աղաւնի, ոչխար, այծ, կոլ, եղն, ձի, ևայլն :

6.

Ով որ քաղցած է, ուզումէ ուտել : Ով որ դադրած է, ուզումէ հանգստանալ : Ով որ բարեսիրտ է, ուզումէ ուրիշն օգնել : Ով որ կամակոր (իրասածի) է, ուզումէ ամեն բանը իրա կամքով անել : Ով որ կռվասէր է, չի կամենում սիրով և խաղաղութիւնով կինալ ուրիշների հետ : Ով որ խաղաղասէր է, չի ուզում ուրիշի հետ կովել : Ով որ հիւանդ է, ուզումէ շուտով առողջանալ : Շուտով առողջանալու համար պէտք է, որ հիւանդը բժշկի հրամանները կատարի և տուած գեղը խմի : Ով որ ուզումէ առողջ լինիլ, պէտք է որ չափաւոր ուտի և խմի : Ով որ ուզումէ բան սորվել պէտք է աշխատասէր լինի և մտքով հասկացող : Ով որ ուզումէ գիշերը լաւ քնել պէտք է ցերեկը աշխատի և չափաւոր ուտի և խմի : Ով որ ուզումէ, որ տաննեցիքը իրան սիրեն, պէտք է կարդին պահի իրան, քաղաքավար լինի և խտակ սիրտ ունենայ : Ով որ ուզումէ բան հասկանալ, պէտք է միտք անի : Ով որ ուզումէ իրան գովեն, պէտք է իրան խելօք պահի և քաղաքավար : Ով որ ուզումէ իրա ծնողայը ուրախայնել պէտք է ուսումնաւրանումը աշխատասէր լինի, տանը պարկեցած և հնաղանդ, ուրիշ մարդկերանց հետ քաղաքավար : Ով որ ուզումէ իրա շորերը երկար ժամանակ հագնել պէտք է խտակ պահի : Ով շատ դրամ (փող) ունի, կարողէ մսխել, բայց պէտք է չափաւոր մսխի և մնացածը պահի : Եթէ ինձ հայրս կամ մայրս փող բաշխեն, ես չ'եմ խարջել և չ'եմ կրցնիլ այլկը պահեմ կամորս կըտամ, որ պահի ինձ համար : Եթէ բան

ուղենամ առնելու, առաջ հրաման կ'առնեմ. էնդուր համար,  
որ ես զեռ մանուկ եմ և բաների գինը չեմ խմանում: Եթէ  
ես առանց հարցնելու առնեմ, ինձ կրիստոն: Ով որ սորվելէ  
մէկ արշեստ (փէշակ), նա կարող է իրան կերակրել: Հիւան-  
դը և տկարը չեն կարող իրանք իրանց կերակրել: Ով որ ու-  
սումնարանումը աշխատասեր և ականջ գնող չէ, նա չի  
կարող ոչինչ բան սովորել: Մեր տանը շատ սենեակներ (օ-  
թախներ) կան՝ խաչանոց (կուխնեայ), սառնատուն, նկուղ  
(սարդափ) և վերնատուն (չերդակ): Ես մեր գերդաստանի  
(ընտանիքի, օղլուշաղի) մէկն եմ. հայրս, մայրս, ես, եղ-  
բայրներս և քուրերս՝ միասին մէկ գերդաստուն ենք: Կենա-  
լու համար լաւ տունը էն է, որ կ'ունենայ լուսաւոր, լայն  
և ցամաք սենեակներ (օթախներ) և լաւ սանդուխտներ, լաւ,  
ցամաք խաչանոց (կուխնեայ), նկուղ (սարդափ): Էս ամէնքը  
պէտք է գուրսից քամի անց կենալու տեղեր ունենան: Ես կե-  
նում եմ էնպիսի տանը, որ շատ յարկեր (էտաժներ) ունի:  
Ամէն մէկ յարկումը շատ սենեակներ (օթախներ) կան, որք  
զանազան անուններ ունին, զորօքնակ՝ առաջնասենեակ  
(պէրեզնեայ), դահլիճ (զալա), հիւրանոց (գօստինայեա),  
սառնատուն, նկուղ (պօղբեր, սարդափ), և այլն: Մեծ տը-  
ներումը լինումէ կենալու աեղանասունների համար կամ ձիա-  
նոց (թաւիլայ): Զիանոցումը վառարան (փէչ) չի ըլնում: Նմա-  
նապէս չի ըլնում աթոռ, սեղան, պահարան (շկաֆ, դօլար):  
Բայց մէկ քանի ձիանոցումը ես աեսել եմ անկողինք (կողինք):  
Ում համար է: Ում որ տունը կրպատկանի, նրան ասում են  
ՏԱՆ ՏԵՐ: Ով որ իրա սեփիհական (սակութար) տուն չ'ունի  
նա պէտք է իրա համար կացարան (կենալու աեղ) վարձի (քրեհի)  
ուրիշի տանը, այսինքն. ուրիշի տան միջումը կենալու հա-  
մար նա տալիս է տան տիրոջը աւարեկան գինը, ինչըան խօ-  
սած են և էս տուած փողը ասում են ՏԱՆ ՎԱՐՁ (քրէհ):  
Էն աները, որոց պատերը շինած են ակուռից կամքարից,

ասում են ՔԱՐԵ ՏՈՒՆ, և շատ երկար ժամանակ դիմացողենս  
Քարէ տունը կարող է կինալ շատ հարիւր տարիներ, եթէ  
նրան ժամանակ առ ժամանակ լաւ կարկատեն կ ամ պահպա-  
նեն (զամբն տան) :

7.

Ես մարդ եմ, էնդուր համար որ կարողանում եմ միաք  
անել և հասկանալ և ինչ որ խելքս կտրումէ, էնպէս անել:  
Կարողանում եմ զգալ, կամիլ (ուզել) և խօսել: Անասուններն  
էլ կարողանում են զգալ ուրախութիւն և յաւ: Շունը ու-  
րախանում է, երբ որ տեսնումէ իրա տիրոջը: Երբ որ շանը  
խփում են, կամ ուրիշ շուն կծում է նրան, նա տնկումէ և  
բղավումէ: Իմ ուրախութիւնս կամցաւս ես կարող եմ խօս-  
քով յայտնել կամ ասել: անասունը չի կարող խօսել: Ես ման  
եմ գալի ուղիղ կարողանում եմ գ ուխա բարձրացնել և ա-  
մեն կողմ դարձնել: Անասունները ման են գալի զլուխը կռա-  
ցրած և չեն կարող երկնքին մախկ տալ: Ես կարող եմ տես-  
նել, լսել, շօշափել (ձեռսքսել), համը տեսնել և հոտքաշել:  
Անասուններն էլ կարող են էդ ամէնը անել: Նրանք էլ, ինչ-  
պէս մարդը, ունին հինգ զգայարանք: Մէկ քանի անաս-  
սուններ կան, որ մարդից աւելի լաւ են տեսնում և հոտ առ-  
նում: Ես գիտեմ, որ Աստուած ինձ ոտքեր է առել ման  
գալու համար, աչքեր է տուել ակնելու համար, ականջ-  
ներ է տուել լսելու համար, լեզու է տուել համը իմանալու  
և խօսելու համար: Գիտեմ, որ բոլոր մարմինովս կարող եմ  
շօշափել (բանի զպչել): Անասունն էլ թէպէտ էս ամէնքը  
անում է, բայց նա չի հասկանում: Ես կարող եմ հասկա-  
նալ: Թէ ընչի համար են պետքական երկաթը, քարերը,  
կիրք, փայտը, և ուրիշ բանները. բայց անասունները չեն կա-  
րող հասկանալ: Ես գիտեմ, թէ ընչի համար տունը ունի

դոներ, պատուհաններ (փէնջէրէ) և ծիսնելոյվ (բուխեր) : Ընչը համար վառարանը (փէջը) շիռում են կաւից (ցելսից), և ոչ թէ փայտից: Ընչը համար պէտք է ծաղիկներին ջուր տալ: Աս գիտեմ, թէ ընչի իմ կոշիկներս չեքմէքս կարած են կաշից և ոչ թէ փայտից, կամ երկաթից, կամ մահուզից: և թէ ընչը համար սայլը պէտք է ունենայ չորս աշնիւ (ակը):

Աս հասկանում եմ, թէ ընչու միշտ չ'եմ կարողանում էն անել, ինչ որ ուզում եմ: թէ ընչը համար պէտք է էն անեմ, ինչ որ ուզում են իմ ծնողքը և վարժապետները: Աս կարող եմ հասկանալ, թէ ընչի համար ամեն բանը էնպէս պէտք է լինի. ինչպէս որ կայ զորօրինակ՝ Աս գիտեմ, թէ ընչի համար դուռըքարձր է, տանիքը (կառւըը) տափակ է, թէ ընչի համար վառարանը (փէջը) և բովքը (քուրան) շինում են քարից և ոչ փայտից. զիտեմ թէ ընչի համար են քարով շինում փողոցը (քուչէքը): — Աս հասկանում եմ, թէ ընչի համար կաթսան (զազանը) ունի ականջներ, ընչի համար դանակի մէկ բերանը սուր է, խկ միւսը գութ: Ընչի համար ես պէտք է լինիմ լսով, աշխատող և ականջ զնող: Ետեսնում եմ, որ սեղանը (ստոլը) և աթուը մէկ մէկունման են, և գիտեմ, թէ ընչով են նման: Տեսնում եմ որ երկուսն էլ շինած են փայտից, երկուսն էլ այրվում են կրակումը, երկուսն էլ ոտքեր ունին: Բայց ես հասկանում եմ, որ էդ երկուսը մէկ մէկունման չ'են. էնդուր համար, որ տեսնում եմ էնպիսի բան, որ սեղանը ունի բայց աթուը չ'ունի, զորօրինակ . . . . .

Վարդը նման է միխակին էնդուր համար, որ երկուսն էլ ծաղկե են, երկուսն էլ լաւ հոտ և լաւ գոյն (ռանկ) ու ա-

նին. երկուսն էլ ունին արմատ, տերեւ և ոստ (Ճիւղ) : Երկուսն  
էլ ծլում են, երկուսն էլ ծաղկում են քիչ ժամանակումը  
և յետոյ թառամում են : Բայց վարդը զանազանվում է մի-  
խակից էնդրով որ ուրիշ հոռ ունի : Վարդը ըստ մեծի մա-  
սին մէկ դոյն ունի, թէպէտ և պատահում են վարդեր ըստ  
պիտակ. կարմիր և դեղին. իսկ միխակը լինում է սպիտակ և  
նախշուն : Վարդի թերթերը լինում են բոլորակ և լայն,  
իսկ միխակինը նեղ և երկայն : Վարդը փուշ ունի, իսկ միխ-  
ակը չ'ունի : Խօ կարացայ համեմատել վարդը միխակի հետ.  
Խոկ անասունը չ'էր կարող համեմատել և հասկանալ էնդուր  
համար, որ բանականութիւն չ'ունի : Արտերումը բունում  
են ցորեան, բրինձ, գարի, կանեփ, ոսպ, լորի, սխեռ, գետնա-  
խնձոր (կարտօֆիլ) : — Պարտէզներումը դուրս են գալի տանձ,  
խնձոր, սալոր, կեռաս, կաղին, մոր և այլն : Ես ամեն պառա-  
ները կարելի է ուտել, եթէ հասած ընթին : Խոկ կամ չը-  
հասած պառազները կամ մրգեղինը վնաս են. և շատ մրգե-  
ղին միխակն ուտելը կը հիւանդացնի :

Ծառերը ոչ թէ միայն տալիս են մեղլաւ պառազներ, այլ և  
գարնան ժամանակին ուրախացնում են սպիտակ, կարմիր և  
կանանչ տերեւներով և ծաղիկներով : Խոկ տմառվայ շաք օրեւ-  
րին հովացնում են շուռաբով և ձմեռը տաքայնում են մեզ,  
տալով մեղլիսյտ : Անտառներումը (մէշաններումը) շատ ծառեր  
կան, որ պառազն չ'են տալի. էն ծառերը կտրատում են վա-  
ռելու համար . կամ սղոցով բարակ բարակ խէրխում են և  
տախտակներ են շինում : Ծառը կանդնած է պինդ և հաստատ.  
Էնդուր համար, որ ունի պինդ արմաններ (տակոի), որը խորը  
մանում են երկրի մէջ : Ծառը և իրա արմանները պատած  
են հաստ կեղեռվ (կը ճեղով), որ է երբեւ հաղուստ ծառի :  
Ծառի վօա գուրս են գալի ոստերը (Ճիւղերը), ոստերի վօա  
տերեւները իրանց կոթերով : Գարնան սկզբումը ծառի վօա չ'  
երիում ոչ տերեւ և ոչ պառազն բայց միայն երեսում է ծիլը :

Ես ծլածները փոքր փոքր բացվաւմ են և նրանից զառնում  
են տերեւներ և ծաղիկներ։ յետոյ ծաղիկներից դուրս են գալի  
պառւղներ։ Տերեւները զարդարում են ծառը և պահպանում  
են պառւղները արեգակի այլեւլից։ Եթէ ծառի տերեւները  
թափվեն պառւղների համար լուց առաջ էն ժամանակը պը-  
տուղները կը չորանան։ Եթէ ծառի կեղեւը պլոկուի՝ ծառը  
կը հիւանդանայ և վերջը կը մեռնի, այսինքն կը չորանայ։ Ենդուր  
համար շատ վատ են անում և մեծ պատժի արժանի են էն  
տղերքը։ որք պլոկում են կամքերթում են ծառի կեղեւը։  
Ես ըսկի չ'եմ պլոկիլ ծառի կեղեւը, այլ կ'ուրախանում մը-  
տիկ տալով առողջ և ծաղկած ծառի վրա։ Յանած բաներն  
էլ առաջ ծլում են խոտի պէս, յետոյ էս խոտերը բարձ-  
րանում են և նրանց գլուխների վրա դուրս է գալի ցրեն,  
կամ դարի կամ ուրիշ պառագ։ Յանում են զանազան հուն-  
տեր կամ կանանչեղեն, զրօրինակ՝ կաղամբ (քալամ), աղցան  
(սալաթ), սոլտ սխառու, վարունգ (խիար), ձմերուկ, սեխու դը-  
ղում, կանանչ լօրի, կարմիր լօրի, բաղրիջան, ոխոն, և  
այլն։ Պարտիզանները շատ աշխատանք ունին պարտիզի վրա։  
Նրանք ծառերը պահպանում են որդունքից և եթէ թոյլեն,  
փայտերով են հաստատում։ Եթէ ճիւղքերը պառւղների ծան-  
քութիւնից կռանում են, տակը փայտ են կանգնեցնում։ Հա-  
սած պառւղները քաղում են, ամէն օր ջըռում են, հողը դըս-  
տում են, սրբում են, և այլն։

Ամէն անասունները մէկ տեսակ չ'են, շատ մեծ զանա-  
զանութիւն կայ շան մէջ և կատուի մէջ։ Ճնձզուկի (ծալի)  
և ձկան մէջ, գորտի և սարդի (բովլ) մէջ։ — Շունը ունի չորս  
ոտք և իրա լակոտներին ծիծէ տալի։ Ճնձզուկը երկու ոտք  
ունի, ձու է ածում և նրա մարմինը ծածկած է վետուր-

ներով ։ Զուկը ո՞չ ոտք ունի և ո՞չ թեք և մարմինը պատաժ է թեփերով։ Նա չի կարող ման գալ շան նման, ո՞չ թռչել ձնձղուկի նման։ այլ կարողէ լողալ այսինքն ջրի միջումը շուտ շուտ փոխել իրա տեղը ։ Կողալու ժամանակը նա շարժում է իրա տուտը (պոչը) և լողական փետուրները ։ Նա կարողէ ապրիլ միայն ջրումը ։ Զինորսները (ձուկը բռնողները) ուռականով (թռոռվ.) կամ կարթով (չանկալով) շատ ձկներ են բըռանում ուտելու կամ ծախելու համար ։ Թէպէտ գորտը չորս ոտք ունի, բայց ետեի ոտքերը աւելի երկայն են, և նրանցով նա աւելի լաւ է կարողանում լողալ քան թէ ման գալ ։ Նա չի կարողանում ման գալ, այլ թռչոտում է ։ Նա կարողէ ապրիլ ջրումն էլ ։ Արդը (բովը) ունի ութն ոտք ։ Նրա արիւնը կարմիր և տաք չէ ուրիշների արիւնի պէս, այլ սառն է և սպիտակ ։ Նրա մարմնի վրա շատ խազեր (բիծեր) կան ։ Համարեալ թէ ամենայն անասուն ձայն ունի ։ Զուկները, որդունքը և սողունքը (Ճիճուները) ձայն չունին ։ Ողջեց լաւ ձայն ունի մարդը ։ Ես լսել եմ ի՞նչպէս է երգում սոխակը (բիւլբիւլը), ի՞նչպէս է հաջում և ունում շունը, ի՞նչպէս են ձայն հանում կովը, սիրամարդին (թաւուղը), ի՞նչպէս է խիսջում ձեն, ի՞նչպէս է մկնում այծը, և ի՞նչպէս է կոկը ռում գորտը ։

10.

Աստուած անասուններին տուելէ տաք հագուստ : Ոմանք վըէն ունին հաստ մազ կամ մորթ, ոմանք փետուրներ, ու մանք սաև (կոշտ մազ), կամ ոսկորի կեղեւ : Անասունների կերպարանքը շատ զանազան են : Նրանցից մէկ քանիսը ձեռքեր ունին, զորօրինակ՝ կապիկները . մէկ քանիսը ո՞չ ձեռք ունին, ո՞չ ոտք և ո՞չ ուրիշ անդամ, որ կարողանան շարժել զորօրինակ՝ օձերը և որդունքը . ոմանք երկու և ոմանք չորս

ոտք ունին, ոմանք վեց կամ ութն : Նամի ճիշուն 14 ոտք ունի, կան էնալիսիները, որ 100 ոտք ունին, զորօրինակ բաղմուն : Ոմանք թեքեր ունին, ոմանք լողալու փետուրաներ, ոմանք մլրատի պէս մատներ և բեներ : Ես կարող եմ էնողիսի անասունների անունները տալ, որք ունին մատներ և բեներ :

Մէկ քանի անասուններ շատ բարակ զգացմունք ունին. ադռաւները և շուները շատ բարակ հստոտելիք (հստով իսմանալ) ունին, իսկ արծիւր զարմանալի սրաաեսութիւն (սուր աչք ունի : Մէկ քանի անասուններ չ'ունին ոչ ականջ, ոչ քիթ, զորօրինակ՝ անձրեկի որդը : Գաղանները, որք կենում են անտառներումը (մեշեքումը) և որք մարդեց փսխում են, իրանք են գանում իրանց կերակուրը : Ոմանք սպանում են ուրիշ անասուններին և նրանց միսը ուտում են, և էնդուր համար նրանց անունն է ԳիշԱԿԵՐ (լէշ ուտող) անասուն : Ոմանք ուտում են սատկած անասուններին : Տնային անասուններին կերակրում է մարդը : Նրանց ուտելիքը շատ զաշնաղան են : Ոմանք ուտում են կանանչ խոտ, ոմանք բոյսեր, ոմանք արմատներ, տերևներ, ծառեր, ծաղիկների միջի ջուրը հատեր և այլն :

Եղերը, կովերը, ոչխարները, ձիերը և այծերը ուտում են կանանչ խոտ և պարտէզների (բոստանի) բոյսեր :

“Եռենը և կատուն ուտում են միս. հաւերը, թռչունքը և սագերը ուտում են հատեր և գարի : Մեղուները (մեղրա ճանճերը) ծծում են ծաղիկների միջի ջուրը. որդունքը ուտում են արմատներ : Որսորդը վերէ առնում իրա հրացանը (թօփը, թիւֆէնկլ) և մէկ լաւ վաղող շուն. զնում է անտառը և էնաեղ անասուններ կամ թռչուններ է սպանում ուտելու կամ ծախելու համար : Եթէ անասունը կամ թըռչունը թուփերի կամ ժայռերի միջումը թախ կացած ըլնի, շունը վախեցնում է և դուրս է քշում. կամ եթէ սպանածը

Վեր ընկնի թու փի մէջ շունը շուտով գնումէ և բերում է :  
11.

Ազռաւները և շուները շատ բարակ հոտառութիւն  
ունին, արծիւր շատ սուր աչք ունի : Անձրեի որդունքը ոչ  
ականջ ունին, ոչ աչք և ոչ քիթ :

Երբ որ անասունը գաղ ում է՝ պառկում է քնելու :  
Նրանցից մեկ քանիսը քնում են աչքերը բաց, զորօրինակ  
նապաստակները : Ոմանք քնում են կանգնած, զորօրինակ,  
ձիերը, ոմանք քնում են միայն ցերեկո, էնդուր համար որ  
գիշերը գուրս են գալի կերակուր գտնելու, զորօրինակ՝ բու  
(բայզու շը), ոմանք քնում են սաղ ձմեռը և զարթնում են  
էն ժամանակը, երբ որ օդը սկսում է տաքանալ : Թռչուն  
ները կենում են օդի միջումը և ունին թեթև հազուսա  
փետուրներից, ուրիշ անասունները կենում են ջրի միջումը  
և բատ մեծի մասին հագած են խլնքոտ փետուր, զորօրինակ  
շատ տեսակ ձիներ, ոմանք կենում են գետնի տակը, զոր  
օրինակ՝ մուկը, որդները, սրանք ունին հագած կամ բուրդ  
կամ բարակ ձգվող կաշի : Կաթնակեր անասունների վրա շատ  
զանազան տեսակ հագուստներ է ըլնում : Նրանց կաշին վրա  
դուրս եկած է լինում կամ մազ, կամ բուրդ, կամ ստե  
(կոշտ մազ) կամ փուշեր, կամ կեղեւ : Ամէն անասուն իրա հա-  
մար թշնամի ունի, վախենում է և իրան պահպանում է :  
Ամէն անասուն գիտէ, թէ ինչպէս պէտք է իրան պահպա-  
նի, երբ իրա թշնամին պատահի : Ոմանք պահպանում են  
իրանց մարմինը թշնամին կծելով, ոմանք ծակելով, ոմանք  
թաքչելով (թախ կենալով), ոմանք քայի տալով (այսի տալով),  
ոմանք պողահարելով (պողով խփելով), և այլ տեսակ հնարք  
ներով իրանց գլուխը պահում են և թշնամիից աղատվում են :  
Ջրի անասուններից ոմանք թշնամիից աղատվելու համար պըզ

տորում են ջուրը, ոմանք դարշելի (վատ) հատ են հանում, ոմանք սուտ մեռնում են կամ լալու ձայնով ուրիշներին օդնութիւն են կանչում :

21.

Անասունները շատ հոգացողութիւնով պահում են և կերակրում են իրանց ձագերին: Զագերի (բալէքի) ծնելուց առաջ պատրաստում են նրանց համար փափուկ, տաք և ապահով բոն: Մէկ քանի անասուններ, զորօրինակ՝ շները, կատունները, ձիերը, կովերը և այծերը ծնում են կենդանի ձագեր և ծիծ են տալի նրանց. Էնդուր համար նրանց առում են կաթնակեր կամ ծիծ ուտող: Ամէն անասուն, որ չորս ոտներ ունի, ասում են չորքոտանի: Թռչունները և ձրկները ձու են ածում: Էն հակիթներից կամ ձուերից փոքր ժամանակից յետոյ տաքութիւնի զօրութիւնով ծնում են ձագեր: Յուրա կողմերումը կամ երկիրներումը անասունները ունին շատ տաք հագուստ: Անասուններից ոմանք կենում են օդումը, ոմանք ջոխ միջումը, ոմանք գետնի (երկրի) վօա, ոմանք գետնի տակումը: Կաթնակեր անասունները մարդի համար շատ հարկաւոր են: Մենք չէինք կարող ապրել առանց ոչխարների, եղների և կովերի. Էնդուր համար, որ մենք ուտում ենք ոչխարի, կովի, եղի, յորդի, եղջերուի (մառալի) և այլ անասունների միուը: Ոչխարը մեզ տալիս է կաթը ուտելու համար, և բուրդ, որից մենք շինում ենք մեզ համար շորեր: Եղան միաը ամենից առողջարար կերակուր է մեզ համար, իսկնրա կաշին մեզ շատ հարկաւոր է, Էնդուր համար որ կօշկակարը (չէքմէք կարողը) կարում է մեզ համար չէքմէք (կօշկեներ): շատ երկիրներումը եղը հարկաւոր է զետինը վարելու համար: Կովը մեզ տալիս է կաթն, որից շենում են իւղ և պանիր, ձիերը մեզ շատ հարկաւոր են լը

ծելու և շեծնելու համար, նմանապէս զետին վարելու համար։  
Եշերն էլ հարկաւոր են սարոս տեղիբջումը, էնդուր համար որ  
նրանց վրա բարձում են ծանր բեռներ : Ինչ որ մեզ համար  
անում են ձիերը և եղերը, շատ ցուրտ երկրներումը մի և  
նոյն ժառայութիւնը անում են եղջերուները (մառալները)։  
Խոկ տաք երկրներումը ուղարկերը :

15.

Թուշունները մեզ ուրախացնում են երգելով, զործ են  
ածվում կերակուրի համար, և օգուտ են բերում մեզ իրանց  
գրիչներով (փետուրներով), ձուով, երբեմն ևս էնդրով, որ  
ուտում են սատկած անասուններին, զանազան վնասակար և  
տգեղ (գէշ) ճիճուններին, մանաւանդ օձերին, զորտերին և  
խլեզներին։ Թուշունները զանազան են լինում։ ոմանք տնաւ-  
յին են, զորօրինակ հաւերը, ոմանք ջրային են, զորօրինակ բա-  
ղերը, ոմանք երդիչ են, զորօրինակ սօխակը, ոմանք դիւ-  
շակեր են (լէշ ուտող), զորօրինակ ուրուրը (չայլազը)։

Զուկը պէտք է մարդուն ուտելու համար։ Էնդէս երա-  
կիրներ կան, որի բնակիչները սաղ տարի միայն ձուկն են ու-  
տում։ Զկան եղը և կաշին շատ բանի համար պէտքական  
են լինում։

Զեռունները (զետնի ճիճունները) մեզ հարկաւոր են էնդ-  
րով, որ ուտում են վնասակար խոտերը կամ նրանց սերմերը։  
Նրանք ուտում են սատկած անասուններին, որք եթէ ֆնան-  
իրանց վատ հոտովը կ'ասպականն օդը։ Մեղուն (մեղբաճանձը)  
մեզ տալիս է մեղը և մոմ (մեղբամոմ), խտակ մոմ։ — Սպունդը  
(ամիզը), որ ջրումը թրչած բանեցնում ենք սրբելու համար,  
մէկ որդնի շինած բուն է։ Տղբուկը (սուլուկը) շատ լաւ  
դեղ է։ Մէկ քանի անասուններ լաւ ներկ են տալի։ ԻՍՊԱ-  
ՆԻՈՑ ձԱՆՃԵՐԸ լաւ դեղ են։ Մէկ քանի ա՞ ասունների կա-

շին, որի վրա դուրս է եկած փափուկ մազ, գործ է ածվում մուշտակի (քուբքի) համար: Ի՞նչ է էն մարդի անունը, որ մուշտակ է կարում: Իսկ եթէ բուրդը մեծ չէ, քերում են և նրանից շինում են գտակ:

Անասունները, որոց միսը մենք ուտում ենք, են՛ եղը, յորդը, ոչխարը, գառը, խոզը, այծը, եղջերուն (մառալը), վայրենի այծը, հաւը, սագը, բաղը, հնդու հաւը, աղաւնին, և այն: Անասունները, որոց կաշին մենք գործ ենք ածում, սրանք են՛ եղերը, յորդերը, ոչխարները, ձիերը, խօզերը, այծերը, եղջերուները (մառալները), վայրի այծերը և էշերը: Փղե (Քիլի) կաշեից շինում են մագաղաթի թուղթը, որի վրա կարելի է զրել և զրածը ջնջել:

14.

Մէկ քանի, անասունների կաթը մորդիք ուտում են և խմում են, զորօրինակ՝ կովի, ոչխարի, այծի: Զիու կաթը նմանապէս խմում են մէկ քանի կողմերումը: Իշե կաթը շատ օգտաւէտ է և երբեմն գործ է ածվում զեղի համար շատ հիւանդութեանից միջումը: Մարդը ուտում է նմանապէս պտուղներ, որ հաւաքում է ծառերի և թռւփերի վրայից, գետնախնձորի, շալլսամի, գաղարի, մաղդանոսի արմատները, և կաղամբի, սպանախի և եղեղի (սալաթի) տերենները: Մարդը ոչթէ միայն ուտում է, որ կշտանայ, այլ ևուզումէ, որ կերածը լինի համով. Էնդուր համար Աստուած, որ իրա ողորամութիւնովը ամէն բանի համար հոգում է, Էնդէ, է կարդել որ շատ բաներէան, որով կարելի է կերակուրին լսու. համ տալ: Էսապիսի կերակուրի համեմիջները (համ տուողները) են՝ աղ, պրզպեղ (փլփիլ, բիբու), մարեմ, կաքաւախոտ, քեմոն (զիրայ), սամիթ (շվիթ), կարսոն (քարսոն), մաղդանոս, սոխ, ծօթրին, քրքում (գաֆրան), իւղ ձիթապողոյ (զէյթունի իւղ), մանաւ

նեխ (խարդալ), շաքար, կինսամոն (դարչեն), ընկոյզ հնէ է կաց, ընկոյզ մշկահոտ (ջավկ), միխակ, կոճապղպեղ (զէնջէֆիլ) : Քայախը նմանապէս համեմիչ է, և լինում է կամ դինից կամ զանազան պտուղներից : Հաց չ'իլած տեղումը ամենից լաւ և էժանագին ուտելուն է գետնախնձորը (կարտօֆիլը) : Նրան ուտում են զանազան տեսակ՝ ալիւր շինած և սաղսաղ : Գետնախնձորը (կարտօֆիլը) հեշտ պահվում է փոսի կամ նկուղի (սարդափի) միջումը սաղ ձմեռը : Տալիս են ուտելու անասուներին էլ : Զանազան տեսակ հողեր կան՝ աւազ, կաւ կաւիճ (մէլ), կիր : Աւազը խաւնում են կրի հետ աւազը ածում են գրած թղթի վրա, քանի որ թանաքը չե չորսացել՝ որ գրածը չըջնջուի. կաւով շինում են վառարաններ և տներ, կաւից շինում են ակուռ, զանազան ամաններ և բաժակներ. կաւիճը (մէլը) գործ են ածում գրելու և ներկելու համար. կիրը միայն շինութեան համար :

15.

Քարերը նմանապէս զանազան տեսակ օգուտներ ունին. Երկանաքարը (ջաղացքի քարը) պէտք է աղալու համար. կան քարեր, որ հարկաւոր կն դանակ կամ ածելի կամ կացին սըրելու համար. կան քարեր, որով քուչեքը ծածկում են, որ ցեխ չըլնի. կամ տան և ուրիշ շինութեան համար են գործ ածում. կան քարեր, որ երբ կոկվում են կամ սրվում են, պսպղում են, զորօրինակ մարմարիոնը : Մէկ քանի թանկապին և շատ գեղեցիկ քարեր զարդարանքի համար են և առվում են ԱԶՆԻՒ ԵՒ ԹԱՆԿԱԳԻՆ ՔԱՐ : Ալմասը ամենից թանկագին քարն է և օգուտ ունի հնդրով, որ շուշա ածովները նրանով շուշա են կտրում : Հրահանի քարը շատ հարկաւոր է մանաւանդ հրացանի (թիւֆէնկի) համար. նըմանապէս նրանից շինում են շուշա : Թանկագին քարերի առ

նուններն են՝ ադամանդ (ալմաս), քաղկեդօն ակն, ակառ, յասպիս, կիծ կարծրակուռ, ամեթովս, (լիալ, լալ), յակինթ (եազութ), զմբուխտ, տպազիսն, շափիղայ կամ սափիրայ : Երկրի միջեղ գտնում են ոսկի, արծաթ, սպիտակ ոսկի, պղինձ, երկաթ, կլայեկ, արծիճ, քարի ածուխ, քարի աղ (շուշայ աղ), թանկագին ակներ կամ քարեր : Ոսկուց, արծաթից, սպիտակ ոսկուց և պղնձից շինում են զրամ (փողեր) :

• 16

Ամէն տէրութիւններումը կան քաղաքներ և գիւղեր : Գիւղերումը կենում են զեղցիքը, որք երկրագործութիւն են անում և անտառներ են պահում : Անտառների միշտումը կենում են ածուխ (գործլե) շինողները և որսորդները (որս անողները), զետերի և ծովերի մօտ կենում են ձըկնորսները (ձուկ բռնողները) : Քաղաքների և գիւղերի միջումը (ըլած տեղերումը կան դաշտեր, արտեր, մարգաղետիններ (կանանչ տափեր), անտառներ (մեշաներ), թուփեր, լեռներ սարեր), ապառաժներ (քարեր), հովտաներ, լճակներ (գոլեր), լեճեր, զետեր, աղբիւրներ և այլն : Ինչ որ քաղաքից կամ գիւղեց դուրս է, ասում են տափ : Են տափը, որ ինքն իրանթաց է և ջրաւետ, և որի վրա դուրս է գալե խոտ, ասում են՝ մարգաղետին : Խոկ եթէ մեծ տեղէ խոտարոյս, ասում են արօտ (արածելու տեղ) : Բայց ի՞նչ է անունը էն տեղի, որ պատաժ է որմով (պատով), հիւսուածով (չափառով) և միջումը կան զանազան պտղաբեր ծառեր և ծաղիկներ :

Ահծ տեղը, որի վրա կան շատ պինդ և բարձր ծառեր, առանց կարգի գուրս եկած մէկ մէկու մօտ, ասվում է անտառ (մեշա) : Շատ տափերումը տեսնում ենք բարձր տեղեր կամ բարձրացած հողեր : Եթէ շատ բարձր են, այսինքն էնքան, որ մինչեւ նրանց գլուխը հանելու համար շատ ժա-

մանակ է հարկաւոր, էնպիսին ասում են լեառն (սար). իսկ եթէ սաղ բարից են, ասում են ապառաժ (քարափ): Էն տափերը, որի վրա սարեր չըկան, ասում են դաշտ (հաւասար տեղ): Երբեմն դաշտերումը լինում են մանր բլբակներ փորած հողեց: Եդ բլբակները շինում են զետնի միները, որք փոռում են տափերը և էնդրով վնաս են տալի արտերին:

17.

Հաւասար լայն տեղը երկու կամ շատ սարերի միջումը ասում են հովիտ. իսկ եթէ էս տեղը էնքան նեղ է, որ գըտուար կարելի է անց կենալ միջեց մէկ սայլով, ասում են փապար: Երբեմն սարերի միջումը ըլնում են փոսեր կամ մեծ ծակիր, էնպէս որ շատ մարդ կամ անասուն կարող են միջումը կենալ. էնպիսի տեղը ասում են այր (մաղարայ): — Տափերումը երբեմն պատահում են ջրոտ տեղեր, և էնքան կակուղ, որ եթէ մարդ ուղենայ անց կենալ նրանց վրայից, մէջը կըխռվի. էսպիսի տեղը ասում են Ճաշիճ,

Փոքր ջուր հաւաքուած անձրեներից ցամաք տեղումը ասում են լճակ (գօլ): Ճաշիճներումը կենում են զանազան թռչուններ, զորօրինակ արագիլ (լէկլէկ), կըռունի, չոլի սագ և այլն: Լիճ՝ ասում են մեծ և խորը ջուրը, որ մէկ տեղ կանգնած է առանց գնալու, չորս կողմը հող: Լիճերումը կենում են զանազան թռչուններ, զորօրինակ՝ կարապներ, սագեր, բաղեր, ձկնկուլե այլն. էնդուր համար, որ էդ թռչունները ձկներ են ուտում, և լճերումը ձուկներ շատ են լինում: Լճերի, գետերի և ծովերի ափներումը (եղերքումը կամ զբաղներումը) դուրս է գալի եղէգն (դամիշ), որից շենում են սակառի (սեփէթ):

18.

Կատ տեղ ջուրը բղխում է (դուրս է գալի) զետնի տառից . էս նշանակում է, որ էնաեղ աղբիւր կայ : Շատ աղբիւրներ . որք վազելով միանում են, դառնում են փոքր գետ : Աղբիւրի ջուրը համարեալ թէ միշտ լինում է սառը, բայց էնպէս աղբիւրներ էլ կան, որոց ջըերը էնքան տաք են լինում, որ կարելի է եփվել : Հիւանդների համար շատ օդուտ է լեղանալը էղպիսի տաք ջըերումը, երբ որ նրանք փոքր սառեցրած ընեն : Կան էնպիսի աղբիւրներ, որք ջուր են տալի երբեմն : Եթէ աղբիւրը էլ ջուր չի տալի, ասում են ցամաքած :

Տարածութիւնը, որ ուղեղ տանում է մէկ տեղից միւս տեղ, և որ կարելի է անց կենալ երկու սըհաթումը , ասում են ՄՂՈՆ կամ Ե0ԹՆ ՎԵՐՍ : Լայն Ճանապարհը, որի վրայից անց են կենում սայլեր, որն որ տափերի, արտերի, սարերի վրայից անց կենալով տանում է մէկ քաղաքից մինչև միւս քաղաք և չափով լինում է շատ մղոն, ասում են ՄԵԾ ՃԱՆԱՊԱՐՀ ՍԻՒՆԱՒՈՐ, Էնդուր որ նրա վրա կանգնեցրած են ամէն մէկ վերստի վրա մէկ մէկ սիւն : Իսկ Ճանապարհը, որ երկու կողմից ունի ծառեր, ասում են ԱԼԵԿՈ :

Եթէ ուղենաս մէկ քաղաքից գնալ ուրիշ քաղաք կամ գիւղ, պէտք է կամ ստով (հետիւստ) գնաս կամ ձիով կամ սայլով և կամ նաւով : Ամենից էժանադին և ապահով գնալը կընի փոստով : Փոստ կամ փոշտ ասում են էն մանր սայլերը ամէն մէկը երեք ձիով, որ կարգած են ճանապարհումը տեղ տեղ, և էս տեղերը ասում են իջևան (ստանցիս) : Ամէն իւ ջևանումը ինչպէս որ ցոյց տաս անցաթուղթ (պոդորոժնեայ), էն սհաթին կըտան ձիեր : Անցաթուղթը (պոդորոժնեան) է թագաւորական թուղթ, որի միջումը գրած է հըրաման ձիեր տալու . բայց էս թուղթը ստանալու համար պէտք

է բոլոր մղոնների (վերստերի) ծախքը հատուցանել այսինքն ինչքան մղոն որ կլընի բոլոր գնալուդ ճանապարհումը, իւշ բարան չիւր մղոնի համար կ'առնեն Զ կոպէկ ամէն մէկ ձիու համար: Ով որ իրա կառքը (սայլը) կամ կալեաս կան չունի, նրան իջևանումը կըտան սայլ և ձիաներ: Աւելի հեշտ կարելի է ճանապարհ գնալ դիլիժանսով, այսինքն մեծ կառքով, որի միջումը շատ նստելու տեղերը կան և ամէն մէկ տեղը մէկ մարդ է վարձում: Էս կառքերը գնում են ամէն շաբաթ իրա նշանակած օրին և սհամեն մէկ քառ դարից մինչև միւս քաղաք և միայն ճանապարհորդների համար են: Էսպիսի կառքի միջումը նստած գնացողի անունը ասում են ԱՆՑԱՒՈՐ. Էն մարդուն, որ ձիաներուն կառավարում է, ասում են ԿԱՌԱՎԱՐ (ձիքըող). իսկ էն մարդուն, որ դիլիժանսի հետ գնում է կարգը պահպանելու համար, ասում են ՈՒՂԵՑՈՅՅ կամ ԿՈՆԴՈՒԿՏՈՐ :

Էս մօտիկ ժամանակումն համարեա՛ թէ բոլոր Եւրոպայումը մէկ տեղից միւս տեղ գնալը և ճանապարհորդութիւն անելը շատ հեշտացաւ երկաթի ճանապարհներ շինելից: Երկաթի ճանապարհները ունին երկու, երեք կամ աւելի բեկս այսինքն երկաթից շինած խաղինչքան պէտքն է լայն և հասա, որք շարած են ողիղ ճանապարհի վրա, և որոց վրայով գրը ըրվում են կառքերը, որ քաշում է ԼՈԳՈՄՈՏԻՎԸ կամ ՕԳԱՊԱՐԻԿՅ: Այս լոգոմոտիվը շարժվում է զոլորշերով (բուղով) և մէկը երկաթի ճանապարհի վրա կարող է քաշել իրա եակից 15, 20 և աւելի կառքեր կամ սայլեր, որոց ամէն մէկի միջումը կարող են լինել 50 կամ 80 մարդ: Երկաթի ճանապարհի վրա էսպիսի կառքերը անց են կենում մէկ սհամումը 30 մինչև 90 վերստ: Երկաթի ճանապարհների վրա կան նմանապէս ուրիշ սայլեր կամ կառքեր զանազան ծանր բաներ տանելու համար, զորօրինակ՝ աղբանքի, շինութեան բաների, անսասունների և այլն: Էս դիլիժանսները ամենայն

տեղ չըկան, բայց միայն Եւրոպայի մեծ և երկելի քաղաքաներումը : Եթէ ես իմ ծնողքից հեռու լինիմ կամ ուրիշ քաղաք գնամ, պէտք է նրանց հետ խօսեմ զրով, նամակով : Ես նամակը (զիրը) պէտք է ծրարի մէջ զնեմ և կնքեմ (մըհրեմ) . յետոյ պէտք է ծրարի վրա պարզ զրեմ, թէ ո՞ր քաղաք պէտք է հասնի ես դիրը և ո՞ւմ ձեռքը : Ես ծրարի վրա դրածը ասում են ՀԱՅՑ կամ արքս : Յետոյ պէտք է տանեմ նամակը փոստի տուն և տամ, որ ուղարկեն . տալու ժամանակը պէտք է ուղարկելու համար փող տամ . ինչքան ծըրարը ծանր ըլնի, էնքան աւելի փող կ'առնեն : Էն ճանապարհորդութիւնը, որ մէկ օր է քաշում, ասում են Մէկ օր ՌԻՍՆ ՃԱՆԱՊԱՐՀ : Ամէնից մեծ ճանապարհորդութիւնը, որն որ մարդը արելէ, երկրի բոլորքը անց կենալն է : Ովոր ուղենայ անց կենալ պէտք է գոնեա 5400 միոն կամ 57,800 վերստ անց կենայ նաւով : Մեծ ճանապարհներումը, քաղաքներումը և գիւղերումը ընում են էնպիսի տներ, որոց միջումը ճանապարհորդները կարող են իջանել (վեր գալ) և հանգստանալ : Էսպիսի աները ասում են պանդոկ (իջւան) :

19.

Ես քաղաքը, որտեղ ես կենում եմ, ասում են . . . . Ես քաղաքը ո՞ր թագաւորութեան քաղաքն է : Ամէն մարդու համար իրա ծնած տեղը է նրա ՀԱՅՑԵՆԻՔ : Ես լսել եմ, որ Ռուսաստանումը 600 քաղաքից աւելի է, և նրանց միշտումը կենում են շատ մլիոնաւոր մարդիք : Ես գիտեմ Ռուսաստանու երեւելի քաղաքների անունները՝ Սանկտպետերբուրգ, Մոսկովա, Կիև, Օդեսա, Ղազան, Թիֆա, և այլն : Իմ հայրենիքը շատ մեծ է, ունի շատ քաղաքներ և գիւղեր, որոց միջումը կենում են շատ հաղարաւոր մարդիկ : Են մարդիկը, որք միասին կենում են մէկ տէրութեան միջումը և

մէկ լեկուով են խօսում, մէկ աղք են : Ոռւսաց տէրութիւնը իրա հաղարաւոր քաղաքներով և գիւղերով թէակէտ շատ մէծէ, բայց Եւրոպայի մէկ մասն է : Եւրոպան էլ բոլոր երկրի մէկ մասն է : Երկիրն էլ բոլոր աշխարհի մէկ մասն է. Էն պատճառաւ, որ աշխարհը ասելով պէտք է իմանանք բոլոր Աստծու ստեղծած բաները, այսինքն երկինքը, երկիրը, լուսնեակը, անհամար ասաղերը, որ մենք տեսնում ենք երկիքի վրա պարզ դիշերը, և արեգակը, որ մէսակ ինքը հաղար անդամ՝ աւելի մէծ է մեր երկրիցը :

Եթէ մենք մեր հայրենիքից զնաննք և հասնենք Էն տեղին, որ տեղ որ նա վերջանում է և սկսում է ուրիշ տէրութիւն, Էն կընշանակի, թէ մենք եկել ենք մեր հայրենիքի սահմանը : Մեծ քաղաքներումը կենում են՝ աղնուականներ, աստիճանաւորներ, արշեստաւորներ, վաճառականներ, ուստաշ մարդիկ, մշակներ, աղքաաներ, հարուստներ, զինուուրականներ (սոլդատներ) : Էն քաղաքը, որ տեղ կենում է կայսրը կամ թագաւորը, ասում են մայրաքաղաք : Որուսաց Տէրութեան մայրաքաղաքըները երկու են՝ Ս. Պետերբուրգ և Մոսկուա : Ավարիացւոց տէրութեան մայրաքաղաքն է — Վիեննա . Պրուսացը — Բերլին . Շվետացը — Ստոկհոլմ . Տաճկացը — Կոնստանդնուպոլիս : Էն տունը, որի միջումը կենում է կայսրը կամ թագաւորը, ասում են ՊԱԼԱՏ :

Էն քաղաքը, ուր կենում են շատ վաճառականներ, և ուր մէծ առուտուր է ընում, ասում են շահաստան (առուտուրի) քաղաք : Էսպիսի քաղաքները ըստ մէծի մասին մէծ գեաերի կամ ծովերի մօտ են ընում. Էնդուր համար, որ ծանր ապրանքները աւելի հեշտ է ջրով բերել կամ նառով անց կացնել : Ինչ որ վաճառականը ծախում է, ասում են ապրանք : Ամէն ապրանք մէկ տեսակ չի ծախվում . ումանք չափով, ումանք կշեռքով, ումանք համարքով . վայտը ծախում են կամ սայլով կամսաժենով (Յ գաղ), կտաւը՝ չու-

խան (Տահուտը), և ամէն բամբակեղէն և արրուշումեղէն բաները ծախում են կանգոնով (գաղզով) : Զրայլի բաները, զորաօրինակ՝ կաթը, ձէթը, գինին, գարեջուրը, քայախը, օղին (արաղը) շուշայով կամ չափով իւղը, շաքարը, չայը և այլն, ծախում են կշեռքով կշեռքի մեկ թաթի վրա դնում են ծախելու առրանքը, միւս թաթի վրա զանազան ծանրաշախներ, այսինքն, փութանոց, ֆունտանոց, մսխալանոց և այլն :

20.

Ի՞նչ բանով որ մարդը պարապում է և հաց է ճարում, էն նրա արհեստն (միշտին) է : Երկրագործութիւնը, տաւար պահելը, պարտիզանութիւնը (բաղուանչութիւնը) և առուտուրը արհեստներ են : Ով որ վարուցանքս է անում, առսում են երկրագործ, գեղացի, ով որ պարտէղ (բաղ) է պահհում, ասում են պարտիզան (բաղուանչի)։ Ժամացոյց շենողը (սըհաթսազը), պատկերահանը և քանդակիչը (քար փորդը) արհեստաւորներ են : Հիւմնը (դիւրգարը), հաց թխողը, գարեջուր շինողը, աղիւսագործը և այլն, արհեստաւոր են : —

Ամէն տեղ, ուր որ մարդիկ են կենում, Աստուած էնպիսի առաստութիւնով է կարգաւորել որ փոքր աշխատանքով կարող են նրանք դանելամէն իրանց հարկաւոր բաները : Թէպէտ ամէն երկիր միատեսակ առատ չէ և ամէն բանը չի տալի, բայց առուտուրով ամէն մարդ կարող է ճարել լին որ իրան պէտք ըլնի:

Եթէ ես փակիմ բերանս և քիթս, կըմեռնեմ: Էնդուր համար, որ մարդը պէտք է անդադար շունչ քաշի, այսինքն, բերանով և քիթով պէտք է օդ առնի և դուրս տայ, եթէ ուզում է ապրիլ: Եթէ մարդ լինինի էնպիսի տեղ, ուր չըկարանայ գտնել ոչ ուտելու և ոչ խմելու բան, կըմեռնի քաղծածութիւնից և ծարաւութիւնից: Եթէ շատ

ցուրտ ձմեռն ժամանակը մարդ ճանապարհումը ըլնի և ցըրա-  
տին չըդիմանայ, կըսառչի և կըմեռնի, էնգուր համար որ  
մարդուս կեռնքի համար պէտք է տաքութիւն : Եթէ նոր  
ծնած երեխին թողնեն չոլումը և հոգս չանեն նրա համար  
ոչ ուտելուն, ոչ խմելուն, ոչ խտակութեան, ոչ տաքայնե-  
լուն, ոչ հագուստին՝ նա կըմեռնի, կամ եթէ չըմեռնի, հաս-  
կացովութիւն չի ունենալ, ոչ խօսիլ կըսովթի, ոչ լաւ ման  
դալ, էնգուր համար, որ երեխէրը սովլումեն խօսիլ և ման  
դալ լսելով մեծերի խօսելով և տեսնելով մեծերի ման դալը,  
և բան էլ հասկանում են մեծերի սորվեցնելովք : — Ուրեմն  
օդը, տաքութիւնը, կերակուրը, հագուստը, բնակարանը  
(իննալու տեղը), և իրան նմանների մօտ կինալը անդատճառ  
հարկաւոր են մարդուն, որ կարողանայ ապրիլ : Ես ամէն բա-  
ները ասում են առաջին պիտոյք (հարկաւ որութիւնը) մարդոյ:  
Սենք կարող ենք ապրիլ թէ և զինի չոլամենք, Ճերմակ հաց  
չուտենք և ապրեշումի շորեր չըհազնենք : Էնդուր համար  
որ էսպիսի բանները առաջին հարկաւորութիւններ չեն մարդու  
համար, այլ միայն ունեցողների հեշտութիւնն են ցոյց տալի :

21.

Ով որ գաղրած է, հանդարտ է քնում չոր գետնի վրա  
էլ, բայց նա աւելի կ'ուղէր քնել փափուկ կողնքի վրա : Կոշտ  
աթուե վրա շատ լաւ կարելի է նստել և հանգստանալ : բայց  
ով հարկէ, աւելի հանգիստ կընի նստել փափուկ գահոյքի  
(կրեսլայի) վրա : Շատ հաստ մահուտից կարած շորերը շատ  
օդուտ է, էնգուր համար որ պահպանում է ցրտից, քամիւ-  
ից և անձրեից : բայց ով հարկէ աւելի ախործելի է ունենալ  
հագուստ բարակ մահուղից զեղեցիկ կոճակներով : Ուրեմն  
փափուկ կողինքը, փափուկ աթոռքը և թանկագին հագուստ

ող առաջին հարկաւորութիւներ չ'են մարդոյ համար, այլ  
նրա հեշտութեան և հանգստութեան համար են, բնչը համար  
են պէտք հայելին, ժամացոյցը (սահաթը) և քնարը (սաղը):  
Եթէ մենք ունինք առողջարար և բաւական կերակուր կամ  
ուտելիք, խտակ շորեր և լաւ բնակութիւն, պէտք է բաւա-  
կան ըլնենք և շնորհակալ, թէ և չունենանք շատ համավ և  
թանկադին կերակուրներ, հագուսաններ և այլն: Հագուսարը  
պահպանում է իմ մարմինը ցրտից, շրբից, քամիից, անձրեսից  
և փոշիից (թողից), և տաքսցնում է ինձ: Մէկ քանի հա-  
գուսաններ կան, որք պէտք են մէկ քանի արհեստների հա-  
մար, զօրօրինակ՝ զենջակը (փեշտամալը) հաց թխողների հա-  
մար, կաւաղործների (աման շինողների) համար, աղեւսագործ-  
ների և դիւրդարների համար: Ի՞նչ պատճառաւ ... Ուրեմն  
հագուստից կարելի է ճանաչել, թէ ով ինչ արհեստի մարդ է,  
և ես կարող եմ զանազանել շորերով գեղցուն քաղաքացուց,  
քահանին (տէրտէրին) վաճառականից, հաց թխողին ծրխ-  
նելոյզ (արուրա) սրբողից, զինուորին (սոլդատին) աշակերտից,  
Հագուստը ոչ թէ մէնակ մարմինը պահպանելու համար է,  
այլ և զարդարնք է. եթէ գեղեցիկ է կարած և թանկադին  
բանիցն է, ասում են զարդ: Ամենից լաւ զարդը մարդու հա-  
մար է խտակ շորերը, որ իրա վրա յարմարացրած է:

22.

Ես իմ շորերիս անունները գիտեմ և կարող եմ ասել,  
թէ ո՞րը նրանցից շինած է կաշիից, ո՞րը բամբակից կամ ո՞րը  
բուրդից, կամ արքեշումբից: Ես գիտեմ, թէ ինչ կ'ասեն էն  
մարդին, որ շինել է իմ գդակը, և թէ բնչիցն է շինել:  
Ո՞վ է շինել իմ շաղկիս համար քաթանը և ով է շինել կա-  
շին իմ կոշիկներիս համար: — Ես իմ մարմնովս կարող եմ  
զանազան շարժմունքներ անել, որք անասունները չ'են կարող:

Ես կարող եմ ման գալ, վազել, թռչուաել, թռչուաելով մէկ  
բանի մօտ հանել, կռանալ, մարմինս ամէն կողմ դարցնել,  
կաքաւել (պար գալ, խաղալ), սայթաքիլ (ոլլալ), չոփել,  
պառկել, նստել, վերկենալ : Ես կարող եմ ուրիշներին յայտ  
նել իմ միտքս, կամքս, ցանկութիւնս, երևակայութիւնս և  
զգայմունքս բառերով, այսինքն խօսելով . անասունները չ'են  
կարող խօսիլ : Ես կարողանում եմ տեսնել՝ էնդուր համա  
որ ունիմ երկու առողջ աչք . կարող եմ լսել էնդուր համար  
մար որ ունիմ երկու լոնչ . . . Ես կարող եմ ամէն բանի համը  
իմանալ՝ էնդուր համար, որ ունիմ լեզու և քիմք : Կարող  
եմ հոտ առնել, էնդուր համար որ ունիմ քիթ : Ես կարող  
եմ շոշափել բոլոր մարմնովս, բայց շոշափելու զօրութիւնը  
ես ունիմ աւելի մատներիս ծայրերումը : Ես տեսնում եմ  
լուսնեակը, արեգակը և աստղները, տեսնում եմ մարդիկ, ա-  
նասուններ, ծառեր, բոյսեր, խոտեր, քարեր, սարեր, բլուր-  
ներ, դաշտեր, գետեր, լճեր, աղբերներ, քաղաքներ, դիւղեր :

Օդումը ես տեսնում եմ թռչուններ, ձանձեր, մոծակ-  
ներ, թիթեռներ : Գետնի միջումը որդունքներ, ջրի միջու-  
մը ձկներ, գորսեր և որդներ : Ես լսում եմ թռչունների եր-  
գերը, որոտումը (ամպի գոռալը), զանգակի հնչեւնը (ձայնը),  
մորակի (մաթրախի) տրխկալը, ձիու խննջալը, աղբերի կար-  
կաչելը, քնարի (սազի) ձայնը և ծոցի ժամացուցի (սհաթի  
հարուածքը (չկչկալը) : Հեռու տեղից ես կարող եմ զանա-  
զանել շան հտչելը, աքլարի ձայնը, զանգակի հնչեւնը և հը-  
րացանի (թիւֆէնկի) կամ թնդանօթի (զարբազանի) թնդիւնը :

Ես զգում եմ, որ կրակը այրում է, իսկ սառը աղ-  
բերի ջուրը հովայնում է. արեգակի ձառագայթները տա-  
քայնում են, բարը կոշա է, բուրդը փափուկ է, սառուցը

սառն է, հայելին ողորկ (կոկ) է; Ես զգում եմ շաքարի բաղթ  
րութիւնը, քայտիսի թթվաթթիւնը և նուշի դառնութիւնը;  
Զուարձութիւնով հոտ եմ առնում վարդը, միխակը, ու եւ  
հանը, և զզուելով հոտ եմ առնում սխառը, և այն: —  
Ես միտս եմ բերում էն պատմութիւնը, որ կարգացել եմ  
կամ լսել եմ. էն ուրիշ երկրից եկած մարդուն, որին մէկ  
անդամ տեսայ. միտքս եմ բերում էն ցաւը, որ քաշեցի հիւան-  
դութեանս ժամանակը, և էն, ինչ որ ուսումնարանումը, սորվել  
եմ: Ես կարող եմ երևակայել մտքումս, թէ թուչձև ունինաւը,  
էնդուր համար, որ շատ անդամ տեսել եմ շնուած կամ պատկեր-  
քի վրա քաշած նաւեր: Ես կարող եմ մաքումս տեսնելիմ հօր,  
մօր, եղբօրներիս և քուրերիս կերպարանքը, թէ պէտ հիմինք  
էստեղ չեն:

Ես կարող եմ միտքս բերել ամէն բանը, ինչ որ տեսել  
եմ, լսել եմ կամ զգացել եմ, կամ ես կարող եմ նկարա-  
գել մտքումս էս ամէնը առանց օգնութեան դլլիսիս, ձեռքեւ-  
րիս, ուսներիս, աչքերիս, ականջներիս և քթիս: Էն կարո-  
ղութիւնները, որով ես մատածում եմ, միտք եմ բերում: Հասա-  
կանում եմ, ցանկանում եմ, կամենում եմ կամ պահան-  
ջում եմ, — մարմնիս զօրութիւնները չ'են, այլ հոգւոյս զօ-  
րութիւններն են: Իմ հոգիս իմ միջումն է, ես նրան չ'եմ  
տեսնում, բայց նրա զօրութիւնները իմանալով հասկանում  
եմ, որ ես հոգի ունիմ: Առանց հոգւոյ մարդը մեռած է: Նթէ ես հոգի չունենայի: ոչինչ չ'ի կարող հասկանալ. ոչ  
ինչ սովորել. չ'ի կարող ոչ համարել, ոչ զրել ոչ կարգալ:  
Էնդուր համար որ երբ ես կարդում եմ կամ համարում եմ:  
Էն ժամանակը միտք եմ անում. իսկ միտք անելը կարող եմ  
միայն հոգւով: — Հոգւովս միտք եմ անում. երբ որ համարում  
եմ թիւերը, մէկ մէկու վրա աւելացնում եմ, մէկ մէկուց  
հանում եմ, բազմապատկում եմ կամ բաժանում եմ:  
Հոգւովս միտք եմ անում էն մարդկանց վրա, որոց համար

վարժապետս մէկ բան է պատմում կամ ինչ որ ես նրանց համար կարդում եմ գրքումը : Հոգւովս միտք եմ անում էն խաղերի վրա , որ պէտք է խաղամ , երբ որ դասերս կ'աւարտեմ : Հոգովս միտք եմ անում էն պատիմների վրա , որ ռւսուցիչս նշանակել է ծոյլ և չար աշակերտների համար :

24.

Ես ոչինչ խելօք բան չ'էի կարող ասել եթէ հոգ չ'ունենայի և հոգւովս միտք չ'անէի : Ես խօսում եմ իմ վարժապետիս հետ . պատասխան եմ տալի նրա հարցմունքներին : Ես պատասխանները ես առաջ սերտած չ'էի , այլ առաջ միտք արի վարժապետիս հարցմունքի վրա , յետոյ պատասխան տուի : Ես չ'եմ ուզում իմ շորերս փոխել աղքատի կտրած շորերի հետ , էնդուր համար որ համեմատելով իրարու հետ , ես տեսանում եմ , որ իմ շորերս պատռած չ'են , մաշած չ'են , ուրի մն աղքատի շորերից լաւ են : Ես շորերի համեմատելումը և տեսնելումը , թէ իմը աղքատի շորերից լաւն է , ես գործ եմ ածում հոգիս կամ խելքս : Ես կամենում եմ իմ հին շորերը փոխել նորի վրա և էնդուր համար գործ եմ ածում իմ կամքը : Ես տեսել եմ , թէ ինչ անում դեղոցին , երբ որ կամենում է պատրաստել դետինը վարելու կամ ցանելու համար : Նա Ծում է եղները կամ ձիերը փոքրիկ սայլումը , որ ասում են գութան : Ես գութանը ունի երկու անիւ (ակը) , ետեսումը մէկ տախտակ , որի վրա հաստատած է խոփը (սուր երկաթը) , կամ անիւ չ'ունի , միայն երկաթ ունի : Ես գութանով գեղոցին ման է գալի տափումը . խոփը (սուր երկաթը) խորը մանում է գետնի մէջ , միւս երկաթը , որ նրանից աւելի լայն է , ներքի հողը գծում է դեպի վերև կտրած գետինը շուռ է տալի : Յետոյ վարած գետնի վրա ցանում է սերմեր՝ ցորենի , գարիի , բընձի , և այլն , և էս սերմերը խառ-

նում է հողե հետ սանդրի պէս փայտով որ ասում են փոցիս  
Այս ամէնը տեսնելով ես հասկանում եմ, թէ ի՞նչ է երկա-  
րագործութիւնը :

25.

Վոր մինչե էս դասը մտագրութիւնով կարգացել է, նա  
հետ կարող է պատասխան տալ հետեւեալ հարցմունքներիս :  
Ի՞նչ է ուզում քաղցածը . ի՞նչ է ուզում ծարաւը . ի՞նչ  
է ուզում աշխատասէր աշակերտը . ի՞նչ է ուզում ծոյլը . ի՞նչ է  
ուզում դադրած մարդը . ի՞նչ է ուզում հիւանդը . ի՞նչ է  
ուզում գողը . ի՞նչ կ'ասեն ամէն բանին, որ կարելի է ուտել  
ի՞նչ կ'ասեն ամէն բանին, որ կարելի է տեսնել . ի՞նչ կ'ասեն  
ամէն բանին, որ շատ զբար (փող) չ'աժի : Ամէն անասուն-  
ներին, որք կաթնով են մեծայնում իրանց ձագերուն, ի՞նչ  
կ'ասեն : Ամէն անասուններին, որք կարողանում են թռչել  
ի՞նչ կ'ասեն : Ամէն ձեռքիս վրա ես ունիմ — . ամէն ոտիս  
վրա ունիմ — . ձեռքով կարող եմ ես — . ոտքով կարող եմ  
— . լեզուով կարող եմ — . ին մանկանց, որք իրանց ծնու-  
ղաց չ'են հնազանդում, ասում են — . ին մանկանց, որ իւ-  
րանց ծնողացը ուրախացնում են, ասում են — . ի՞նչ պէտք  
է անի չ'իմացողը . ի՞նչ պէտք է անի հիւանդը . ի՞նչ պէտք  
է անի անքաղաքավարը . ի՞նչ կարող է անել հարուստը . ի՞նչ  
կարող է անել հզօր մարդը . ի՞նչ կարող է անել առողջը :  
Առանց ո՞ր անասունների չ'ի կարող մարդը կառավարուիլ երկա-  
րավարութեան ժամանակը : Ո՞ր անասունից պէտք է շնորհա-  
կալ լինիք, որ մենք հանդիսա՛ և փափուկ անկողինք ունինք :  
Ո՞ր թռչուններն են երգում : Ո՞ր թռչունները մարդու ձայ-  
նի նման ձայն են հանում : Ո՞ր անասունները հարկաւոր են  
մարդու համար : Ո՞ր անասունները վեսս են տալի արտերին  
կամ բաղերին :

Կարող ես ինձ ասել. թէ ես տանը ի՞նչ կայ հիւսի  
(դու բգարի) շինած կամ դարբնի շինած : Ի՞նչ է անունը էն  
բանի, որ ամէն տան մէջ պէտք է շինած ըլնի, թէպէտ և  
տարուայ մեծ մասը չի գործ ածվում : Ի՞նչ անօթ կամ  
աման անպատճառ պէտք է ըլնի խահանոցումը (կուխնումը) :

26.

Ասա՛ ինձ քո զլսի ամէն մասունքի անունները. ամէն  
քո հարկաւոր բաների անունները : Ամէն բաների անունները,  
ինչ որ բանեցնում ես ուսումնարանումը : Ամէն անասունները,  
որոց միսը գու կերել ես : Հիմի տաճ ինձ մէկ քանի վայրենի  
անասունների անուններ և մէկ քանի թռչունների անուններ:  
Ես կարող եմ մէկ քանի ձեկների անունները ասել և մէկ քանի  
թանկաղին քարերի անուններ: Ես գիտեմ մէկ քանի վայրենի տա-  
նասուններ, որոց միսը կարելի է ուտել, և էնողիսի անասուն-  
ներ, որոց մորթին թանկ է. կարող եմ էնողիսի անասունների ա-  
նուններ ասել որք կենում են գետնի տակումը : Ասա՛ ինձ էն-  
ողիսի բաների անուններ, որք կանանչ զյո՞ն ունին կամ սեաւ  
զոյն ունին : Հիմի տաճ էնողիսի բաների անունները, որք  
շատ թեթև են, կամ շատ ծանը են: Ասա՛ ինձ այրութենի  
տաներորդ տասի անունը, տարվայ վեցերորդ ամսի անունը  
ձմեռվայ ամիսների անունները, մէկ գարունքի ամսի անունը,  
և մէկ աշունքի ամսի անունը : Որ ամսին որ գու ծնել ես,  
նրա անունը ի՞նչէ: Ասա ինձ մէկ քանի բաների անունները,  
որք ջրի մջումը մեծանում են և ծանրանում են, կամ  
որք ջրի միջումը հալվում են կամ լողում են : Ասա ինձ մէկ  
քաղցր բանի անուն: Սայլի մասունքի անունները, դանակի,  
զրիչե, պատուհանի (փանջարի) և զռան: Աշունքին օդը ըլ-  
նում է—, ամառը ըլնում է—, աշունքին պտուղները ի՞նչ  
են ըլնում: գարունքին ծառերի վրա դուրս են գալի—:

Զմեռը ջուրը ըլնում է շատ — • ովոր ձմեռը չի ուզում  
մրսել, պէտք է — • ովոր չի ուզում աշխատել, այլ ուզում  
է պարաղ ման գալ, նրա անունն է — : Ովոր ուսումնա-  
բանումը չի հետևում և չի ականջ դնում, չի կարող ոչ  
ինչ — և կըմնայ :

27.

Եթէ ձմեռը շատ ձիւն գայ, մարդիկ ման են գալի — .  
Չը վրա ման են գալի — ջըումը կենում են — • Օդումը կե-  
նում են — • զետի միջումը կենում են — : Ամէն ծառ, որ  
պտուղ է տալի, ասում են — : Կն բաղը, որի միջումը էս-  
պիսի ծառեր շատ են, ասում են — : Նոճին պտուղ չէ տալի,  
բայց նրա փայտը շատ — : Եղեինը և կաղինը պտուղ են տա-  
լի, բայց նրանք չ'են — : Կտրած մեծ մեծ ծառերը սղոցով  
խէրխում են, որ նրանցից շինեն — : Տախտակները գործ են  
ածում — համար : Գրիչ գործ են ածում — համար : Ոսա-  
կորները — . ոտները — . ականջները — . ձեռները — . ատամնե-  
րը — . ջուրը — . ուռիանը (թոռը) — . հրացանը (թիւֆենիը) — : Ի՞նչէ էն մարդի անունը, որ չի լսում, ի՞նչէ էն մարդի  
անունը, որ չի տեսնում . — որ չի կարողանում խօսել — որ  
չի կարողանում ման գալ : Ով որ էգպիսի մարդկանց ծալը  
(մասխարայ) կ'անի և նրանց վրա կըծիծաղի, նա արժան է — :

Ես ախորժանոք լսում եմ քաղցր երշը — • բայց զզու-  
ելի ձայնը — ես չ'մ ուզում լսել : Ճնձլուկը (ծիտը) չի  
կարող — , աքլարը կարող է միայն — : Շատ անսասուններ միայն  
ձայն են հանում, երբ որ քաղցած են, բարկացած են կամ  
ուրախ են : Խողերը — . շունը — . ոչխարը — . ձին — . եղը — .  
մուկը — . հաւը — :

Ո՞ր արհեստաւորներն են, որ փայտից բաներ են շինում :  
Ո՞ր արհեստաւորները բուրդից են շինում կամ կանեփից :

Ո՞վ պէտք է գիշերը չըքնի, որ քաղաքի բնակիչները հանուցիստ քննեն: Ո՞վ պէտք է գիշերը աշխատի, որ ուրիշները ցեղեկը ուտելու բան դանեն: Ո՞ր մարդիկը իրանց արհեստց (փեշակից) չ'են կարող խտակի ընիլ: Ասած ինձ մէկ քանի էնպիսի արհեստաւորների անուններ: որք շինում են բաներ մեջ զարդարանքի կամ հանգստութենի համար: Ասած էնպիսի արհեստաւորների անուններ: որք իրանց շինած բաներով մեզ ուախսոյնում են: կամ էնպիսի արհեստաւորների, որք մեզ համար տուն են շինում: Ո՞վ պէտք է աշխատի չոքած: Ո՞վ պէտք է աշխատի գետնի տակումը: ո՞լ — ջրի միջումը և ջրի երեսն: ո՞լ — անտառի միջումը: Ո՞վ պէտք է միշտ ման դայ, որ ուտելու բան ճարէ: Ո՞վ պէտք է աշխատելու ժամանաւկը շատ շքի գիմանայ: Ո՞վ պէտք է շատ ցրտի գիմանայ — :

Ո՞վ պէտք է իրա արհեստի համար միշտ ճանապարհ ման դայ: Ո՞վ պէտք է միշտ պատրաստ ընի իրա արիւնը թափելու համար: Ո՞վէ թաղում մեռածներին: Ո՞վէ մլրատում երեխեքրին: Ո՞վէ գեղ անում հիւանդներին: — Ո՞վէ եփում կերակուրը. ո՞վէ լուանում մեր շորերը:

Ի՞նչ որ չե կարող պատահիլ, էն անկարելի է: Անկարելի է որ աշակերտը բան սովորի, եթէ ինքը ականջ զնող և աշխատասկը չըլիի: Անկարելի է որ էն մարդը առոյջ ըլիի, ով որ անչսփ կ'ուտի և կը իմի: Անկարելի է, որ մեռած մարդը էլի կենդանանայ. կամ խուլ մարդը ուրախանայ լաւ քնարի (սազի) ձայնից: Ի՞նչ է անկարելի կոյր (քոռ) մարդի համար: Ի՞նչ է անկարելի վեց ամսական երեխայի համար. ի՞նչ է անկարելի հիւանդի համար: Ի՞նչ որ պէտք է ընի, էն հարկաւոր է: Հարկաւոր է, որ մարդը ամսա կերակուր ուտի (ընչո՞ւ համար). հարկաւոր է որ գալրած մշակը հանգստանայ

և քնի. (ընչու համար) : Հարկաւոր է որ հիւանդը գեղ խմի  
և համդարտ մնայ: Հարկաւոր է որ ամէն տուն տանիք (կտուր)  
ունենայ և դռութ: (ընչու համար): — Ամէն մարդ իրա ժառ  
մանակին պէտք է մեռնի. (ընչու համար): Ամէն մանկունք  
պէտք է ուսումն տռնեն. (ընչու համար) : Պէտք է ամէն բան  
անել. ինչ որ ուրիշները անում են. (ընչու համար) : Հար-  
կաւոր է որ ամէն սեղան (ստոլ) կարմիր ներկով ներկած ընի.  
կամ ամէն սայլ չորս անիւ ունենայ: Են սեղանը սեղան չի  
ընիլ. եթէ սպիտակ ներկով ներկած ընի, կամ էն սայլը սայլ  
չի ըլնիլ. եթէ երկու անիւ ունենայ: Պէտք է ձիաներուն լու-  
ծել սայլի առաջեկից, որ առաջ քաշեն, թէ կարելի է սայլի  
ետևիցն ել լծել: Պէտք է շանը տալ ուտելու միս, իսկ ձիուն  
խոտ: թէ կարելի է շանը խոտ տալ, իսկ ձիուն միս: — Են  
սեղանը սեղան կը լնի, որ փոխանակ քառանկիւնի (չորս քոշի)  
բոլորակ (կոլոլ) ընի. կամ թէ փոխանակ մէկ պահարանի  
(եաշչկի) երկու ունենայ. կամ թէ փոխանակ կարմիր ներ-  
կի, կամ ըլնի ներկած կամ իսկի չըլնի ներկած: Եսպի-  
սի բաները պատահական որպիսութիւններ են և մարդու կամ-  
քից են կախեալ: Բայց թէ սեղանը պէտք է ունենայ տա-  
փակ տախտակ և ոտներ, էլ հարկաւոր որպիսութիւններ են.  
(ընչու համար) :

Թէ որ մէկ տան առաջել երեկոյին մէկ շուն ոռնայ,  
և եթէ էն տանը մէկ մարդ մեռնի, էդ պատահական բան է.  
Էնդուր համար որ շատ անդամ շունը ոռնումէ և ոչ ոք չի  
մեռնում: Եթէ մէկ մարդ վիճակ գձի և մէկ բան ստանայ,  
էդ պատահական բան է. Էնդուր համար, որ շատ անդամ  
պատահում է, ոչ ոչինչ չի ստանում: Մէկ մարդ վեր է  
առել կարթը (շանկալ), գնայել է զետի մօտ, զձել է կարթը

ջուրը և աչքերը դրելէ (մաիկ է անում) ջօին : Առանց պատճառի է նա մաիկ առաջ : Զի՞ւ, նա էս հնարքով ուղում է ձուկը բանել : Էս է պատճառը նրա տրած քաների : Ուրիշ մէկ մարդ գնում է գետի մօտ, շորերը հանում է և տկլոր մըտնում է ջըի մէջ : Սա՞ ինչ պատճառովէ անում, և ի՞նչ է սրա մոքի դիտաւորութիւնը :

Իմ ծնողքս ինձ ուղարկել են ուսումնարան, նրանք էին անելով միտք ունին, որ ես — : Պետրոսը զնաց սառուցի վրա, վէր ընկաւ և կուռը գուրս դձեց : Է՞ն մտքով գնաց Պետրոսը սառուցի վրա, որ վէր ընկնի և կուռը ցաւ տայ : Ուրեմն էդ չ'էր նրա դիտաւորութիւնը, այլ ի՞նչ էր : — Մէկ մարդ փորումէ խորը փոս, կանգնեցնում է փոսի միջումը բարձր գերան, փոսը կրկնն լքյնում է հողով գերանի չորս կողմը և սոքով տափորփում է : յետոյ վէր է առնում ուրիշ գերան և էլի էնալէս կանգնեցնում է միւսի մօտ . էս գերանների վրա կպցնում է միխերով (բեեռներով) հաստ տախտակներ . ընչլի համար է անում . — ուրեմն նրա դիտաւորութիւնը (միտքը) է առն շնել : Բայց ընչլի համար է շնում :

Աղէքսանդրը շատ ուղումէր բարձր ծառի վրայից կտրել հասած տանձ : Նա թափ տուեց ծառը, բայց տանձը վէր չ'ընկաւ, ուղեց ծառի վրա բարձրանալ, բայց չըկարաց : Յետոյ զնաց բերաւ երկայն բարակ փայտ, և էնքան խփեց ծառի ոստին (Ճիւղքին), մինչև որ տանձը վէր ընկաւ : Ուրեմն երեք հնարքով ուղեց Աղէքսանդրը իրա կամքը կատարել : Էն, ինչ չով հետեւում են իրանց կամքը (ուղածը) կատարելու, ասում են հնարք, միջոց : Քանի՞ հնարք բանեցրուց Աղէքսանդրը իրա կամքը կատարելու համար . ի՞նչպիսի էին առաջին երկու հընարքը և ի՞նչպիսի էր վերջինը :

30.

Ի՞նչ դիտաւորութիւն ունի հիւանդը, երբ որ զեղէ խըս  
մում : Ուրեմն նա ի՞նչէ համարում իրա համար զեղը :  
Ի՞նչ դիտաւորութիւն (միտք) ունի վարժապետը, երբ որ  
պատժում է ծոյլ աշակերտին : Ի՞նչ կարելի է ասել պատիշ-  
ժի անունը :

Ո՞ր հնարքն է լաւ առողջութիւնը պահպանելու հա-  
մար . կամ պատճի տակ չէնկնելու համար, կամ ուրախ  
մնալու համար : — Ի՞նչ լաւ հնարք կայ բան գտնելու համար,  
բան ստանալու համար, իրան տարաբախութիւնից պահե-  
լու համար . իրան տաքայնելու համար, շորերը երկար ժա-  
մանակ պահելու համար, ախորժակը (իշտահը) բաց անելու  
համար . մէկ սեղանի երկայնութիւնը իմանալու համար, ու-  
րիշներին իրան սիրել տալու համար : Ի՞նչ հնարքներ է բա-  
նեցնում գեղցին, որ գետինը վարուցանքսի համար պատ-  
րաստի : Ի՞նչ հնարք են բանեցնում ծանր բանը բարձրաց-  
նելու համար . ծանր բանի քաշը իմանալու համար . իրա  
միտքը կամ ուղածը հեռու լինող մարդուն իմաց տալու հա-  
մար : — Հայրը հրամայեց իրա կոստանդին որդուն խահանո-  
ցից (կուխնից) մէկ գանակ բերել երբ որ մութն էր : Հայրը  
ասաց նրան, թէ ճրագ վեր առ, բայց կոստանդինը կարծեց  
թէ մութը աեղումն էլ կարող է գտնի գանակը, և առանց ճր-  
բաղի վաղեց : Անց չըկացաւ մէկ բայի (մինուտ), հայրը լսեց,  
որ մէկ բան վեր ընկաւ : Իսկոյն վաղեց էն տեղ ճրագով :  
Կոստանդինը ստը խփել էր մէկ մեծ փայտի, որ ընկած էր ճա-  
նապարհի վրա . վեր էր ընկել և երեսը խփել էր պատին : Յա-  
ւից սաղ գիշերը լսց էլաւ կոստանդինը և ըլկարաց քնել :  
Ընշնչ պատահեցաւ, որ կոստանդինի դլոյն եկաւ էս փարձանքը .  
էնդուրից չէր որ նա չ'ու զեց լսել իրա հօր խօսքը, կոմ էն-  
դուրից չէր, որ նա կամակոր (իրասածի) էր : Էն բանը, ըն-

չեց որ մէկ ուրիշքան է առ աջանում կամ պատահում, ասում  
են պատճառ. իսկ ելած քանը ասում են հետեւանք : Էս աեղ  
ի՞նչն էր պատճառը և ի՞նչն էր հետեւանքը :

51.

Ծնողքը ուղարկեցին Պօղոսին իրա մօրաքուեր մօտ մէկ  
քան սակելու : Մօրաքոյը տուեց նրան մեծ կտոր շաքարի  
հաց և մէկ քանի հատ խնձոր : Պօղոսը ճանապարհին գալիս,  
կերտու բոլոր շաքարի հացը և խնձորները : Միւս օրը նրա  
վորը սկսեց շատ ցան իլ : Ի՞նչը էրաւ պատճառը Պօղոսի հիւ-  
ւանդութեանը, և ի՞նչ քանի հետեւանք էր հիւանդութիւնը :  
Կատարինէն ունէր յաւ յաւ ծաղիկներ. բայց մէկ տաք (շոք)  
օր մօռացաւ նրանց ջրել. էնուուրից ծաղիկները թառամեցան  
և պառ կեցան զետնի վրա. (ի՞նչ էր պատճառը, որ ծաղիկնե-  
րը թառամեցան) : Նա վեր առաւ իստակ սառը ջուր և ջրեց  
թառամած ծաղիկները. շատ շուտով կրեւեցան լաւ հետեւանքը  
ջրելուն. ծաղիկները կրկին կանդնեցան և մէկ քանի օրից առ-  
ռաջվայ պէս զու արթացան : Մշակը գաղրելէ և քաղցած է.  
ի՞նչէ պատճառը : Ուրեմն դաղրելը (վաստակելը) և քաղցա-  
ծութիւնը են հետեւանք ընչի՞ : Առաւոտը մօռթը անց է կե-  
նում և լուսանում է. ի՞նչէ պատճառը : Առաջ ինձ ընչի՞ հա-  
մար է պէտք քնելը և ուտելը. ի՞նչ հետեւանք ունին աշխա-  
տասիրութիւնը, ծուլութիւնը, ցուրտը, շոքը, պարապու-  
թիւնը, արաղը, սառը ջուրը և կրակը : Առաջ ինձ հրացանի  
կրակուելու և ամպի որսաալու պատճառը: Հետեւանքը նմանա-  
պէս կարող է պատճառից առաջ ըլնել: Դու ման ես գալի  
անտառումք . յանկարծ քեզ մօտ արձակվում է հրացան .  
սասակի ճայթումն է հետեւանք հրացանի արձակվելուն . բայց  
միասին պատճառ է էն բանին որ զու վախեցար և նապաստակը  
վէր ընկաւ մեռած : Էստեղ ի՞նչն է առաջ - պատճառը, թէ

Հետեանքը: Տիգրանը զնաց իրա հօր հետ դաշտը և տեսաւ որ շատ աղուաւներ զնում են երկրագործի ետևից: Բնչի՞ համար են դնում, հարցրուց Տիգրանը: Հալը պատասխան տուշեց՝ էնդուր համար, որ աղուաւները կերակրվում են որդունքով, որք կենում են գետնի միջումը. որովհետեւ դութանը փորում է գետինը, էնդրով որդունքը դուրս են դալի. էստուր համար աղուաւները զնում են դութանի ետևից: Էնժամանակը Տիգրանը էլ չ'էր զարմանում տեսածի վրա, էնդուր համար որ իմայաւ պատճառը: Ես գիտեմ պատճառը թէ ընչի՞ համար Տիգրանը շնուռ է իրա բունը տան ծածկոցի տակումը. ընչի՞ համար ձկնկուլ թռչունը թռչում է լճերի մօտ. ընչի՞ համար հաւերին պահում են բակումը և ոչ թէ բաղումը. ընչի՞ համար ամէն զրիչ զրելու համար պէտք է Ճեղք ունենայ և թէ ընչի՞ համար ես պէտք է Տիմիքնած չըլնիմ:

52 .

Այս պահնները (բաղուանչիքը) անկում են խաղողի որպեր վաղներ. նրանցից դուրս է գալի խաղող: Զբհասած կամ խակ խաղողը ասում են ժուռ, և երբեմն կերակուրի մէջ գործ են ածում: Երբ որ խաղողը հասնում է, քաղում են և քիչ քիչ տանում են քաղաք ծախելու. մնացած շատ մասը հնձանի միջումը քամում են և շնուռ են քաղցու (շիրայ). էս քաղցուն լքյնում են կարասների մէջ և մէկ քանի ամիս ոլահում են. էն ժամանակը նա դառնում է դինի: Ես գիտեմ, որ շատ դինի խմելը լաւ չէ: Ով որ շատ դինի կը խըմի, նա կը հարփի: Ես տեսել եմ հարբած մարդիք և շատ նեղացել եմ նրանց համար. հարբած մարդի գլխից խելքը զընում է և իրա խօսածը ինքը չէ հասկանում. շատ վատ բաներ և մեղքեր է անում հարբածը. էնդուր համար ես չ'եմ ուզում հարբել և շատ քիչ դինի եմ խմում ջրախառն. շատ

զինի խմելուց գանազան հիւանդութիւններ կըպատահին։  
Ուրիշ արհեստաւորներ էլ կան, որք մեզ համար գանազան  
բաններ են պատրաստում։ զգակ կարողները մեզ համար զը-  
դակներ են կարում։ մուշտակակարը (քիւրքչին) մեզ հա-  
մար մուշտակ (քուրք) է կարում։ մահուդ շինողը, կտաւ  
գործողը, կաշի շինողը, կօշակարը և ուրիշ արհեստաւորներ  
մեզ համար ամէն տեսակ բաններ են պատրաստում և էնդրով  
իրանք ապրուստ են ճարում։ Արանից երեսումէ, որ աշխարհ-  
քիս միջումը ամէն մարդ մէկ մէկ արհեստ ունի և էնդրով  
իրա ընտանիքի ապրուստն է հոգում։ Աս էլ հիմի սկսել եմ  
կարդալ զրել սովորելու։ եթէ հետեւիմ և օրէ օր առաջեր-  
թամ ուսումն առնելով, ես շատ զիտութիւններ կ'ունենամ  
և ուսեալ մարդ կըդառնամ։ Ուսեալ մարդը կարող է իրա  
համար ազնիւ ծառայութիւն գտնել և էնդրով ապրիլ կամ  
թագաւորական ծառայութիւն մտնել կամ բժիշկ դառնալ,  
կամ վարժապետ զառնալ։ Իսկ եթէ իմ հայրս կամենայ ինձ  
մէկ արհեստի տալ, էն ժամանակը ես կըհետեւիմ, որ սոր-  
ված բաններս ըսմուանամ և պարապ ժամանակս զրքեր կար-  
դամ։ զրքեր կարդառով մարդ շատ բաններ կըսովիրի։ Խմվար-  
ժապետս ասում է, թէ նորովոյի միջումը էղպէս են անում  
և էնդուր համար էնաեղ իմաստուն և գիտուն մարդիք շատ  
կան։ էնաեղի տղերքը ամէնքը լաւ կարդալ և զրել զիտեն  
և միշտ զրքեր են կարդում։

Պասերս սերակելուց յիտոյ ես սկսում եմ խաղալ։ բայց  
երկար չեմ խաղում։ Մէկ սրհաթ խաղալուց յետոյ էլենըս-  
տում եմ կարգալու։ էնդուր համար որ ամէն բանին ժառ-  
մանակ կայ։ Աս պարապ չեմ կենում։ պարապ կենալը ամէն մեզ-  
քերի սկիզբն է։ Ովոր բան անել աշխատել չեմ սիրում, նա ար-


Ժանի չէ հաց ու տելու. Էնդուր համար որ սպարապ անցկացրած  
ժամանակը կարգրած է : Ժամանակը շատ հարկաւոր և թանա-  
կադին բան է. անցկացած ժամանակը էլ յետ չի գալ : Ես գի-  
տեմ, թէ ժամանակը լինչպէս է բաժանած : Մէկ սհաթը  
ունի 60 րոպէ (մինուտ) . կէս սհաթը 30 րոպէ . մէկ սհաթը  
ունի չորս քառորդ (չարեք) . ամեն մէկ քառորդը ունի 15 րոպէ :  
Մէկ օրը և մէկ գիշերը 24 սհաթ է . ուրեմն օրը ունի 12 սհաթ  
և գիշերը 12 սհաթ : Ես պղախկուց պէտք է սկսեմ աշխատ-  
ասէր լինել և հետեւիմոր բան սովորեմ : Ինչոր ես հիմի կա-  
րող եմ սովորել, էն ծերութեանս ժամանակը չ'եմ կարող սով-  
որել : Անչ լաւ բան որ ես կարող եմ անել, էն պէտք չէ էդուց-  
վան զցել : Ես իմ զաներս երբեք էդուցվան չ'եմ զծում . այլ  
սպարապ ժամանակս իւշոյն սերտում եմ : Ինչոր հիմի կրով-  
րեմ, ծերութեան ժամանակս ինձ հարկուոր կը լնի : Մարշ-  
դու առողջութիւնը աշխատանքով աւելի կրպահուի : Առող-  
ջութիւնը աւելի լաւ է, քան թէ հարատութիւնը : Նթէ ես  
մէկ վատ բան անեմ կամ խօսեմ և ինձ մեծերը ասեն, թէ  
էդ վատ բան է, ես պէտք է միւսանդամ էն բանը չ'անեմ :  
Ես մեր տան ծառաների վաս երբեք չ'եմ բարկանում, և նը-  
րանց հետ հանդարտեմ խօսում, էնդուր համար որ լաւ ար-  
դէն ամէն մարդու հետ կը արուի և ոչ ոքի հետ կոխ չ'ի  
անիլ : Ինչպէս որ ես մեր ծառաների հետ վարուեմ, էնդէս  
էլ ինձ հետ ինձանից մեծերը կամ իմ աղջները, որոց մօտ  
ես մէկ օր պէտք է ծառայեմ, կրվարվեն . ընկերներու հետ էլ  
ես պէտք է սիրով վարվեմ . կրվով և չարասիրտ մարդու հետ  
ոչ ոք բարեկամութիւն չ'անիլ : Նթէ ինձ իմ ընկերները վատ  
բան կը սովենեն կամ խորհուրդ կը տան էնդիսի բան անել  
որ ամօթ է կամ ծնողացս և վարդապետիս հրամանքից զուրս  
է ես պէտք է չըլսեմ նրանց, և իրանցն էլ խորհուրդ տամ,  
որ վատ բան չ'անեն : Ազքատներին պէտք է ինչքան կարող  
եմ օղնութիւն անեմ, և եթէ կարող եմ պէտք է ողորմու-

թիւնտամ. բայց եթէ չեմ կարող կամ ինքս չունիմ. պէտք  
է քաղցր խօսքով ասեմ նրանց. թէ ԱՍՏՈՒԱՌ ՏԱՅ. Եթէ ես  
մէկ մարդու սիրով վիրաւորել եմ կամ բարկացրել եմ. պէտք է  
նրանից ներողութիւն խնդրեմ: Ոչ ոքի համար պէտք չէ չար  
ցանկանամ. այլ եթէ կարող եմ պէտք է ամենքին լաւութիւն  
անեմ և ցանկանամ. որ ամենքը լաւ և բարտաւոր ըլնին:  
Վարժապետա ինձ շատ անդամասելէ Քրիստոսի խօսքը. թէ  
ինչպէս կ'ուզէք. որ ուրիշները ձեզ անեն. էնալէս էլ դուք  
նրանց արէք:

54.

Ես պարտական եմ ամեն մարդու սիրել. էնդուր համար  
որ մենք ամենքս մէկ հօր (Աղամայ) որդիք ենք: Բայց աւելի  
պէտք է սիրեմ իմ աղջականներիս և բոլոր հայ աղջին. էնա  
դուր համար որ հայերը իմ եղբայրներս են. մէկ հօրից (աղամայ)  
ենք ծնել և մէկ մօրից (որ է մեր եկեղեցին). և մէկ առաս  
զանի միջումն ենք մկրտուած: Ես շատ սիրում եմ մեր եկե-  
ղեցւոյ ամեն կանոնները. հանդէսները և ժամերգութիւնները:  
Մեր հայոց լեզուն էլ շատ սիրում եմ և միշտ հետեւում  
եմ. որ լաւ սովորեմ: Ես զիսեմ. որ մեր հայոց ազգի մի-  
ջումը շատ լաւ հին սովորութիւններ կան և էնպիսի տօներ  
կան. որք յատուկ ցոյց են տալի մեր աղջի հնութիւնը: Մեր  
պատուարժան նախնիքը (մեր պատերը) առանց փախելու պա-  
հել են մեր ամենայն հին սովորութիւնները և մեզ էլ պա-  
տուէր են տուել նոյնպէս պահել: Ես պարտական եմ. որ  
իմ աղջիս գովելի բաները ամեն չիմացալ մարդու պատա-  
մեմ. և եթէ մէկը մեր աղջի վրա կամ մեր եկեղեցւոյ վրա  
անկարդ բան խօսի. ևս պէտք է. որքան կարող եմ. նրա ա-  
սածները սուտ հանեմ և ցոյց տամ մեր աղջի լաւութիւնը:  
Ով որ իրա աղջին չի սիրում կամ իրա աղջի վրա վատ բան

է խօսում, նա արժանի չէ էն աղջի անսաւնը վրէն ունենալ. և նա  
ինքն էլշատ վատ մարդ կրնի և ամէն խելօք մարդ նրան կրնաւ  
խատի և չի սիրիլ: Եթէ մեր աղջի օդոտի համար մէ՛լը կամենայ  
մէկ բան շինել ես պարտական եմ ամէն կարողութիւնովս նըս  
րան օգնել: Ամէն մարդ իրա հայրենիքին պարտական է էնս  
պէս, ինչպէս որդին իրա հօրը. և ամէն մարդ պէտք է հետ  
անի իրա որդիսկան պարտքը, ինչքան կարող է, հստուցաւ  
նել: Աս կը ինսդրեմ իմ վարժապետիս, որ երբեմն երբեմն ինձ  
պատմի իմ հայրենիքի պատմութիւնը, և երբ որ ես հայոց  
զրաբառ լեզուն լաւ կըսովուեմ, էն ժամանակը կը կարդամ  
մեր Հայոց աղջի պատմութիւնը:



# ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ :

ՄԱՆՐԱՎ. ԷՊՐ.



Ա. Անկիրթ Մանկունք

Ստեփանը և Նիկոլայը, երբ որ ուսումնարանից դուրս էին գալի, սկսում էին անկարդ վազել քուչումը, բարձր ձեռով կանչել և շատ անկարդ բաներ անել երբ որ տիմումն էին, թէ վարժապետը էն տեղ չէ: Հետո որ ուսումնարանից դուրս էին գալի քուչա, էն սհամբին գիտ մարդու նման սկսում էին վազել, մէկ մէկու վրա քար և ցեխ դճել: Եթէ անձրեւ էր գալի, նրանք երբէք ցամաք տեղերից չէին անց կենում: այլ մըտնում էին ցեխերու մէջ և մէկ մէկու վրա ցեխոտ ջուր էին ածում: Եթէ ճանապարհին պատահէր նրանց հաւ կամբադ կամ ուրիշ անասուն, նրանք սկսում էին քշելով տանել քարեր էին գցում նրանց վրա և իրանք ուրախանում էին, որ ինչքան կարողացան, տանջեցին խեղճ անասունին:

Մէկ օր, երբ որ նրանք էսպէս վատ վատ բաներ էին անում քուչումը, մէկ ծեր մարդ էն տեղից անց կենալիս նըրանց յանդիմանեց (կուիւ արեց) և ասաց՝ ամօթէ ձեզ համար, ամաչեցէք. մեծ ամօթէ է էղպիսի վատ բաներ անել էն մանկանցը, որք գնում են ուսումնարանից, ուր նրանք շատ լաւ լաւ բաներ են լսել: Բայց էն վատ տղէրքը ամենելին ծեր մարդու խօսքին ականջ ըղղրին և գոռալով վազեցին:

Էն տղէրքի էսպիսի վատ վարքը շատ ընհաւանեց ծերը. և կարելի՞ է, որ խելօք մարդը հաւանի էսպիսի բանը : Ինչ որ խելօք մարդիքը չ'են հաւանում, էն անվայելուչէ : Ես կը հետեւիմ ինձ էնսպէս պահել միշտ, որ խելօք մարդիքը ուսախութիւնով մաիկ տան խմ վարքին :

Բ. Արտի ուղելիք :

Յովսէփը և Պետրոսը մէկ օր դուրս եկան իրանց անից և գնացին ման դաշու : Ճանապարհին անց էին կենում մէկ պարտիզի (բաղի) մօտից որի դռները բաց էին : Նրանք մտան պարաեզր և տեսան, որ մէկ քանի խնձորի ծառեր էնչքան խնձոր ունին, մինչեւ որ ծառի ճիւղքերը ծանրութիւնից կուացել են : Տես, Յովսէփ, ասաց Պետրոսը, մենք էս տեղ կարող ենք ինչքան ուղենանք ուտենք : Էսաեղ ոչ ոք չել երեսում : արի շուտով մէկ ճիւղքը կոտրենք ու փախչենք : Զէ, պատասխան տուաւ Յովսէփը, մենք էդ բանը չենք կարող անել. խնձորները մերը չեն, ուրիշներինն են : — Է՞՛յ, Ի՞նչ կայ, ասաց Պետրոսը. պարտէզի տէրը խկի չի կտրող խմանալ, թէ մենք մէկ քանի խնձորներ ենք կտրել . նա էնքան շատ ունի, որ չել կարելի համարել : — Ճշմարիտ է, ասաց Յովսէփը, բայց էլլ պէտք է չ'անենք էդ բանը, էնդուր համար, որ թագուն վերառնելը ուրիշի բանը, թէ և շատ փոքր բան ըլնի, դու զութիւն կը լի : Միթէ մոռացել ես, ինչ ասաց մեր հայրը, երբ որ պատմում էր էն գողի պատմութիւնը, որ մեր տան առաջից տանում էին շղթայով (զինջիլով) կապած : — Ի՞նչ ասաց, հարցրուց Պետրոսը : — Նա ասաց, թէ փոքրով սկս վում է, մեծով վերջանում է : Պետրոսը սկսաւ խորր միտք անել և վերջը ասաց՝ դու ճշմարիտ ես ասում : սիրելի Յովսէփի, գնանք էս տեղաց : Պետրոսը ուզում էր վտա բան առնել, այսինքն ուզում էր ուրիշի խնձորները ուտել : Ի՞նչ լաւ էլաւ, որ Յովսէփը չըթողեց նրան էդ բանը անել :

Գ. Վատ սովորութիւն :

Քանի որ Սակարը իրա ծնողաց մօտ էր, ամէն երեկոյ, ինչպէս սկսում էր մթնիլ գնում էր քնելու, կտմ նստած

տեղը քնում էր, և շատ դժուար էր ըլնում նրան զարա  
թեցնել: Շատ անդամ մայրը հարկադրեալ պղախիկ տղի նրա-  
ման նրա շորերը հանում էր և տանում էր իրա տեղը պառ-  
կեցնելու, էնդուր համար, որ հնաբք չ'էր ըլնում նրան զար-  
թեցնելու: Նա էնքան երիար էր քնում, մինչև որ առա-  
ւոար անց էր կենում: իսկ ամառը, երբ որ արեգակը լաւ-  
բարձրացած էր ըլնում, նա դեռ տեղերումը պառկած էր  
ըլնում: Մայրը շատ անդամ խրատում էր նրան, որ էդ սո-  
վորութիւնը թողնի, էն պատճառի որ միշտ չէ կարող էդպէս  
մնալ: Նա խորհուրդ էր տալի նրան, իրիկունները, երբ որ  
սկսում է քունը տանել՝ ման զալ տան միջումը: իսկ ա-  
ռաւօտը, երբ որ նրան զարթեցնում են, կամ երբ որ ինքը  
զարթնում է, էն բոպէին վեր կենալ տեղից: Բայց Մակարը  
էդ խրատները չ'էր կատարում, և մնաց իրա վատ սովորութեան  
միջումը: Երբ որ Մակարը **14** տարեկան դառաւ, ծնողը  
նրան տուին աշակերտ հաց թխողի մօտ: Էս հաց թխողը  
հրամացեց Մակարին, որ իրիկները մինչև **10** սհամը չըպառ-  
էի քնելու, և զանազան ծառայութիւններ անի, իսկ առա-  
ւոար, ինչպէս ամառը, էսնպէս էլ ձմեռը՝ վեր կենայ Յ սը-  
համին: Բայց էս անկարելի բան էր վատ սովորած Մակարի  
համար, և որովհետեւ հիմի հրաման չ'ունէր վաղ պառկելու,  
էնդուր համար միշտ թմրում էր բան անելու ժամանակը:  
և շատ անդամ կանգնած տեղը վէր էր ընկնում և զլուխը ջար-  
դումէր: Հաց թխողը շատ անդամ պատժում էր նրան էսպի-  
սի ծուլութեան համար, բայց ոչինչ չ'օգնեց: Մէկ ամսից  
յեպս վարպետը, որին տուած էր նա արհեստ սովորելու, նը-  
րան յ'տ ուղարկեց տուն և ասաց, որ էլ նրան պահել չէ  
կարող, էնդուր համար, որ նա ոչինչ բանի պէտքական չէ:  
Վերջն էլ Մակարը իսկի մէկ ժամանակ լաւ և ընդունակ ար-  
հեստաւոր չըդառաւ: Էսպէս դժուար բան է վատ սովոր-  
թիւնը թողնել:

Դ. Փոքրիկ պաղճը.

Եղիսյի որդիքը տեսան, որ իրանց դրացի (հարեան) լեռնի բակումը երկու տանձի ծառեր կանլաւ լաւ պ տուղներով; Նրանք վեր ելան պատի վրա և մէի քանի տանձ կտրեցին: (Եդ բանին ի՞նչ կասեն): Հարեանը իմացաւ նրանց արած գուղութիւնը և մէկ երեկոյ թախ կացաւ բակումը որ գողին բռնի: Մէկ քանի բոպէից յետոյ տեսաւ, որ Եղիսյի որդիքը վեր էլան պատի վըա, վախենալով չորս կողմը մտիկ տուին, և որովհետեւ ոչ ոքի չըտեսան, իսկոյն ներքեւ եկան, վաղեցին ծառերի մօտ և կտրեցին տանձեր: Երբ որ ուզում էին յետ դառնալ տանձերը ձեռքերին, Լէոնը գուրս եկաւ: Ի՞նչ ամօթով և ի՞նչ վախով կանգնած մնացին փոքր գողերը Լէոնի առաջեր: Ի՞նչպէս խնդրում էին նրանք Լէոնից, որ ների նրանց էդ վատ գործը, և իրանց հօրը գանկատ չ'անի: Լէոնը ներեց նրանց էնդուր համար, որ նրանք խօստացան միւսանգամ էս բանը չանել: Բայց էս վատ տղերքը իրանց խոստ մունքը չըկատարեցին: Մէկ քանի շարաթ անց կացաւ, և Լէոնը տեսաւ, որ բոլոր իրա հասած խաղողները քաղած են: Էն ժամանակը նա գնաց իրա հարեան Եղիսյի մօտ և խնդրեց նրանից, որ իրա տղերքին պատժի երկու անգամ արած գողութեան համար: Տղերքը սկսան երդումուտել, թէ խաղող չ'են գողացել և հայրը հաւատաց նրանց: Լէոնը դնաց նրանց անից սիրու կոտրած և գնալիս ասաց՝ այ տղերք, դուք շատ տարաբախտ կը լնէք աշխարհքի միջումը: Էս խօսքը (մարդարէութիւնը) կատրուեցաւ: Պղտիկ գողերը իրանց վատ սովորութիւնը չըթողին, վերջը խաբերայ մարդիկ դառան, և իրանց կեանքը թշուառութիւնով վերջացրին:

Ե. Ժամանակ կորցնելը :

Գաբրիէլի ծնողքը բաւական հարուստ էին և էնդուր համար նա էնպիսի բաներ ունէր, որ ուրիշ տղէրքը չ'ունէին շատ անգամ ծնողքը տանում էին նրան իրանց հետ զըս սանք անելու (ման գալու) կամ բարեկամների տուն, որ նա ուրախ ժամանակ անց կացնի : Աթէ էն քաղաքումը մէկ նոր բան ընէր, զօրօրինակ՝ բերած ընէին մեծ մեծ չըտեսած անասուններ, կամ տիկինների տեսարան կամ սազ, ծնողքը տանում էին Գաբրիէլին, որ նա տեսնի կամ լսի էնպիսի նոր բաները : Նրանք յոյս ունէին, թէ նա ուսումնարանումը աւելի կըհետեւի, որ իրա աշխատութիւնովը և մտադրութիւնովը ծնողաց պարտքը վճարի նրանց էսպիսի լուսութիւնների համար : Բայց անմիտ Գաբրիէլը նրանց յոյսը չըկատարեց : Նա անշափ սիրեց խաղալը և միշտ հետեւում էր աշխատանքից հեռանալ կամ փախչիլ : Ակամայ (չ'ուզելով) էր զնում նա ուսումնարան և էնդուր համար երկար ժամանակ քուչքումը թրեվ էր գալի պարագ մինչեւ ուսումնարան հասնելը, և ուսումի ժամանակն էլ դուրս էր գնում բակից և քուչի դրան մօտ խաղում էր իրա նման ծոյլ տղերանց հետն թէպէտ ծնողքը էս բաները գիտէին, բայց Գաբրիէլը միշտ զանազան պատճառներ էր տալի և միշտ խատանում էր միւս անգամ չ'անել : Իրա դասերը, որ նա պէտք էր տանը պատրաստէր, կամ խակի չ'էր սերտում, և կամ սերտում էր էնքան անկատար, որ վարժապետը միշտ անբաւական էրնրանից : Նա մէնակ սիրում էր խաղալը և մանդալը, սաղ սհաթներով քուչքումը վաղում էր շների ետե ից, կանգնած մոիկ էր տալի (թամաշայ էր անում) զինուորների (սոլդաթների) վարժութեանը և կամ պարագ տեղը էս կողմը էն կողմը մաիկ տալով : Աթէ քուչումը մէկ կռիւ ընէր կամ խռովութիւն,

յատուկ կարեւե էր իմանալ, որ Գարբիելը էն աեղ կընի :  
Շատ անդամ ուսուցիչը նրան նախատում էր և ասում էր, թէ  
քո ժամանակը քեզանից գողանում ես, էնդուր համար որ յիշ  
մարու թիւնով կորյնում ես նրան, և քո ուսման և աշխատան-  
քի համար նշանակած սհաթները գործ ես ածում զօսանքի  
կամ պարապորտութեան միջումը : Գարբիելը տարիքով մեռ-  
ծացաւ, բայց տարիքի հետ չ'աւելցան նրա գիտութիւնը  
և խելքը և վարժապետի մարդարէութիւնը . թէ նա երբէք  
բանի պէտքական մարդ չ'զառնալ, կատարեցաւ :

Զ. Գող փչացնող տղայ :

Մեսրոպը իրա մանկանցը պղտիկուց սովորացրել էր իրանց  
աշխատանքով փող հաւաքել : Տնիերի օրերը և ամեն ուսուա-  
մից պարապ ժամանակը նրա աղջկերը բաներ էին կարում  
կամ գործում և հայրը առնում էր փողով նրանցից նրանց  
կարածները կամ գործածները : Նրա տղերքը վայտից կամ  
թղթից զանազան բաներ էին շնուրմ և Վեսրոպը նրանցից էլ  
առնում էր շնած բաները, եթէ լաւ և խառակ էին ընում  
շնած : Էնպիսի բաներով մանկունքը միշտ իրանց համար փող  
ունիին և կարող էին մսխել ինչպէս իրանց սիրու ուզէր, բայց  
հայրը միշտ խորհուրդ էր տալի նրանց փողը խարջելոգուտով  
և պահելով : Մարիամը և Ալէքսէլը, պղտիկ մանկունքը Մա-  
կարի, առնում էին իրանց համար զանազան հարկաւոր բաներ,  
զորորինակ՝ թուղթ, զրիչ, մատիտ, զրիչ կտրելու դանակ՝ և  
մլրատ : Խնձքան մեծ ուրախութիւն էր ընում նրանց հա-  
մար, երբ որ նրանք իրանց աշխատանքով փող էին ստանում  
և ինչ ուրախութիւնով էին մտիկ տալի էն բաներին, որ առ-  
նում էին իրանց փողով . բայց Մեսրոպի մեծ տղան 8իզրանը  
լաւ չ'էր պահում իրա փողերը և բանայնել չ'էր իմանում :  
Ամէն տեսած բանիը և ամէն ինչ որ առաջին տեսնելում հա-

ւանում էր, ուզում էր առնել. Էնդուր համար շատ անոց գում առնում էր էնսպիսի բաներ, որ էն ժամանակը նրան հարկաւոր չ'էին, կամ թէ իսկի պէտքական չ'էին: Զորօրիւնակ նաև նա ունէր մէկ հառ լաւ գրիչ կտրելու դանակ, բայց եթէ տեսնում էր մէկ ուրիշ դանակ առելի լաւ կոթով, էն սհաթին առնում էր, և ինչ որ ուզում էին, տալիս էր և էս պատճառով նա միշտ ուրիշներից թանկ էր առնում: Իսկ երբ որ պէտք էր ընում առնել շատ հարկաւոր բան, էն ժամանակը նա փող չ'էր ունենում և հարկադրեալ պարտք էր առնում եղբօրներից կամ քուրերից: Աերջը հայրը սաստիկ հրամայեց նրանց, որ Տիգրանին պարտքի փող չըտան: Էն ժամանակը նա ինդրում էր իրա հօրից կամ մօրից, որ նըւրան փող բաշխեն: բայց պատասխան էր ստանում նրանցից, թէ սովորի՞ր պահելով բանեցնել փողերդ, և մի՛ առնիր երբէք անօդուտ կամ անպէտք բաներ: Եթէ էդպէս կ'անես, քեզանից իսկի չի պակասիլ քեզ հարկաւոր բանը: —

Ե. Բարեգործ տղայ:

Սոսկով քաղաքի մօտումը մէկ օր մէկ տաղ գիւղ էր վեցաւ, էնդուր համար որ քամիկ սաստկութիւնից կրակը պատում էր ամէն տները չորս կողմից և գեղացիքը չ'էին կարողանում մէկ մէկու օգնել: Աւելի քան ութսուն մարդիք, որոց միջումը կային հիւանդներ, ծերեր, կանոյք, մանկունք և աղքատ մշակներ, մէկ քանի սհաթումը զրկուեցան իրանց աներից, հազուստից և բոլոր աղքուստից: Կոկծալի էր տեսնելը էս ողորմելի մարդկանցը իրանց աղքատ և հիւանդ տըղերը, որք փետանում էին ցրտից, (Էնդուր որ էս կրակը պատահեցաւ աշունքի (վերջին), որք տնօքում էին, լաց էին լենում, էս կողմը էն կողմը էին ընկնում և իրանց համար կենալու տեղ էին փնտրում: Էն տեղի բարեգործ քահանան,

որ ինքն էլ իրա ունեցածը կորցրել էր չ'էր միտք անում  
իրա զլուխը ազատելու համար և շտապում էր օգնելու ու  
զրմելի մարդկանցը, որք նրա չորս կողմը պատաժ տնքում էին  
և լաց էին ընդում: Էնդուր համար նա զնաց ման եկաւ մօ-  
տիկ գեղերումը և քարողելով հետեւեցաւ էն ողորմելի մարդա-  
կերանցը տեղաւորել ողորմած մարդկերանց տներումը. ամէն  
տեղ նա հաւաքում էր փող, հաց, շոր, և լրադիբներումը  
(գաղճթներումը) տակեց էս զարհուրելի կրակի պատմութիւնը:  
Նրա աշխատանքը և հետեւողութիւնը գարդակ չ'անցկացան.  
ամէն աեղից սկսան ուղարկել նրա մօտ օգնութիւն փողով:  
հացով և շորերով և էս պատուելի քահանան բաժանում էր  
ողորմելի մարդկերանցը ուրախութիւնով և զգուշութիւնով:  
Եդ ժամանակը եկաւ նրա տուն մօտիկ գիւղից մէ՛ պղտիկ  
տղայ: Վախենալով մտաւ նա քահանայի տունը: և ասաց՝ ես  
մէկ խնդիրք ունիմ ձեզանից, տե՛ր տէր, եթէ գուր չ'էք բար-  
կանալ: Ասաւ սիրելիս: պատասխան տուեց քաղցրութիւնով քա-  
հանան: ինչ կարեմ ես առնել քեզ համար. ես պատրաստ  
եմ: Ձէ՛. ես օգնութիւն չեմ խնդրում: ասաց պղտիկ տղան.  
ես միայն խնդրում եմ: որ դուք էս փողը և էս հին շորերը  
վեր առեք ինձանից ողորմելի այրվածների համար: ձշմարիտ  
է: թէպէտ էս շատ փոքր բան է, բայց ես աւելի ոչինչ չ'ու-  
նիմ: ես շատ կըցանկայի մէկ օգուտ բան անել մեր ողորմե-  
լի այրվածների համար. ես շատ ցաւում եմ նրանց համար:  
իմ քոյլս, որ ամենևին ոչինչ բանով չի կարող օգնել: ա-  
սում էր ինձ, որ ես էս փոքր բանով ձեղ մօտ չըդամ: բայց  
ես չ'ուզեցի իմ միտքս փոխել եկել եմ էս տեղ և խնդրում  
եմ վեր առնեք էս փոքր ընծայրերութիւնս: — Դու շատ լաւ  
ես արել, սիրելի որդի իմ պատասխան տուեց քահանան,  
և քաղցր արտասունքը վաղեցին աչքերիցը: Ամէն տուած բանը,  
ինչ որ խստակ սրսով է արվում: իրա դինը ունի, ուրեմն

քոնն էլ զին ունի. մի՛ կորցնիր երբէք էդ ազնիւ զդացամունքը, հետեւիր լաւութիւն անել ինչքան կարող ես. քու հոգին միշտ կ'ուրախանայ և Աստուած քեզ կըվարձատրի :

Ը. Կարգով և խատակ տղայ:

Սիմօնի ծնողքը պատուաւոր և խելօք էին: Նրանց տունը թէպէտ փոքր էր, բայց նրա միջումը ամէն քանը կարգով էր պահած և խատակ. էդնուր համար, որ Սիմօնի մայրը չ'էր սիրում, որ տան բաները էս կողմը էն կողմը ցրուած ընին և գետնի (պոլի) վրա աղը ընի կամ ուրիշ կեղտոտ բան: Առաւօտը ամէն բանից առաջ նա աւելում էր իրա փոքրիկ տունը, կարգումէր կողինքը և ուրիշ բաները, պատուհանները և գուռը բաց էր անում, որ տան օդը խտակուի: Կարելի էր, որ Սիմօնը անկարգ մեծանար և խտակութիւն չըսիրէր, երբ որ մայրը նրան բարի օրինակ էր ցոյց տալիք: Սրանից երեսումէ, թէ ինչքան հարկաւոր բան է, որ մանկունքը պլատիկուց սովորեն կարգին և խտակ կենալը: Զոր օրինակ՝ Սիմօնը երբէք չ'էր կամենալ որ ուսումնարան գնայ առանց մազերը սանդրելու, ուրիշ անկարգ տղերքի պէս. երբէք չ'էր թողնիլ որ ցեխոտ չ'քմէքը (կոշիկները) մնան սաղօր առանց սրբելու. կամ թանաքով կեղտոտած ձեռքերը քսել իրա շորերին, ինչպէս անում են շատ անկարգ տղերք: Նա միշտ գնում էր ուսումնարան մազերը սանդրած և ձեռքերը խտակ լուացած. նրա հաղուստը ընում էր խտակ և թափ տուած, կոշիկները խտակ սրբած. իսկ նրա զբքերի միջումը երբէք չ'էր կարելի տեսնել մէկ թանաքի կէտ կամ խազ: Նա երբէք իրա գզակը չ'էր գձում սեղանի վրա և թանաքը բանեցնելուց շատը գոյշ էր ըլում: նրա քթի աղլուխը միշտ իրա մօտ էր ըլնում: Խտակութիւն և կարգ սիրող և պահպանող Սիմօնը ուրախութիւն էր իրա ծնողաց և վարժապետների համար:

Թ. Սատիսոս.

Անդրէասի ծնողը տուին նրան մէկ շոտ հարկաւոր նառ  
մակ (բարեազիր), որ տանի փոշոր գցի: Ճանապարհին պա-  
տահեցաւ նա Գէորգին և ուրիշ տղերանց: Գէորգը ամեն դար-  
դակ բանի համոր կուիւ էր անում, և մանաւանդ Անդրէ-  
ասի հետ, որ ինքն էլքարկացող բնութիւն ուներ: Էս ան-  
դամին էլ սկսան նրանք կուիւ անել իրարու հետ, էնդուր  
համար, որ ոչ մեկը չէր ուզում միւսին ճանապարհ տայ անց  
կենալու: Կուիւ անելու ժամանակը Անդրէասը վէր գցեց նա-  
մակը, ոտքով կոխեց վըէն և էնպէս կեղտոտեց, որ վրայի դը-  
րածը չէր կարդացու իլ և ծրարը պատառեցաւ: Ի՞նչ անի հի-  
մի: Եթէ տուն գնայ և բոլոր պատահածը պատմի, նրան կը-  
պատմեն, էնդուր համար որ նրա հայրը շատ խիստ մարդ  
էր, և մանաւանդ էս անդամին յատուկ ասել էր նրան, թէ  
էս գիրը լաւ տար փոշոր, սա ինձ համար շատ հարկաւոր  
գիր է: Անդրէասը մոքումը զրեց մէկ յիմար բան, որ սուտ  
խօսելով էս փորձանքից աղատուի. և էնդուր համար, երբ  
որ հայրը հարցրուց զրի համար, նա համարձակ պատաս-  
խան տուեց, թէ գիրը ուզարկեց: Բայց էդ սուտը ասելու ժա-  
մանակը նրա սիրոր գողաց: Երբ որ տան օրը անցկացաւ և  
զրի պատասխանը չեկաւ, Անդրէասի հայրը ինքը գնայ փոշոր  
իմանալու, թէ գիրը յատուկ ուզարկած է, թէ չէ: Ի՞նչպէս  
նո զարհայաւ և սիրոր զող բռնից, երբ որ փոշի զըքե-  
րից իմացաւ, թէ գիրը ամենենին բերած չէ: Անդրէասը ա-  
կամայ հարկազրուեցաւ ասել թէ ինչ պատահեցաւ գըին:  
Նա երկար ժամանակ չէր ուզում ճշարիտը ասել բայց յե-  
տոյ, երբ որ հայրը խոստացաւ ներել նրան, եթէ բոլորը ճշ-  
մարիտ կ'ասի, էն ժամանակը նա բոլորը ասաց: Ի՞նչքան փոշիման  
էր Անդրէասը էդ սուտ խօսելու համար, երբոր իմացաւ, թէ ե-  
թէ էն ժամանակը գոր տուն և ճշմարիտը ասեր հօրը, կ'ազա-

ակը նրան մեծ կորուստից և իրա սիրտը մեծ նեղութիւնից,  
էնդուր համար, որ էն ժամանակը կարելի էր նոր գիր գրել  
ևս բանից յետոյ նա հաստատ զբեց իրա մտքումը միւսանա-  
գամ իսկի սուտ չ'ասել, աւելի լաւ համարելով ստանալի-  
րան արժանի պատիմը, քան թէ սուտ ասելովը վնաս տալ;  
Բայց շատ ժամանակ քաշեց, որ հայրը նրան չ'էր հաւատում,  
և էս բանը շատ զառն էր նրա համար; —

Փ. Ով որ իրա կամքով մտնում է վորձանքի մէջ, նա էն վորձանքից  
կըկորչի:

Միքայէլը էր որդի աղքատ ծնողաց: Նրա մայրը մեռ-  
ուաւ էն ժամանակը, երբ որ նա երեք տարեկան էր: Հայրը  
բոլոր օրը գնում էր ծառայութիւն անելու և էն պատճառ-  
ուաւ Միքայէլը կը մնար անտերունչ և բոլորովին կը վատանար,  
եթէ մէկ հարուստ և բարեգործ մարդ վեր չ'առնէր նրան ի-  
րա տուն և չըպահէր իրա որդույ պէս: Բայց Միքայէլը շատ  
չ'էր ուրախացնում իրա երկրորդ ծնողին. նա անհնապանդ  
էր, ծոյլ էր և անհանգիստ: Շատ սնդամ բարերարը խրա-  
տում էր նրան և երբեմն պատճում էր. Միքայէլը ուղղվում  
էր, բայց շատ կարծ ժամանակ: Ամենից աւելի վտանգաւոր  
էր նրա անզգուշութիւնը. նրա համար ոչ մէկ ծառ բարձր  
չ'էր, ամենի վսա համարձակ վեր էր ընտւմ, իրաքաջու-  
թիւնը ուրիշ տղերքին ցոյց տալու համար, ամեն բարձր  
տեղից համարձակ թռչում էր ներքեվ: Վերջապէս էլ անզ-  
գուշութիւնը էլաւ նրա մահի պատճառը: Ասեցէք էս զար-  
հուրելի պատճութիւնը և հետեւցէք: որ սա ձեզ համար  
զգուշութեան օրինակ դառնայ: Մէկ օր Միքայէլը խաղ էր  
անում ուրիշ տղերքի հետ. նրանք շատ վաղեցին բարձր  
սանդիստից վերեվ ներքեվ: վերջը Միքայէլը ուղեց էլի էն  
բանը անել, ինչ որ իրան սաստիկ արգելուծ էր և որ նա

շատ անգամ արել էր. այսինքն կախ ընկած սանդուխտի թևերի վրա, վերեվեց ներքեվ գալ: Ո՛չ, երանի թէ էդ բոսէին նա միտքը բերէր իրա բարերարի և երկրորդ հօր խըրաաները, որ նրան միշտ արգելում էր էդ բանը: Բայց տաքացած խաղալումը նա միտքը չորերեց ոչ ինչ, կախ ընկառ սանդխտի փայտի վրա, յանկարծ մէկ կողմէ ծռուեցաւ, վէր ընկաւ բարձրից, զլուխը ջարդուեցաւ և էն ըոպէին մեռաւ:—

Փ . Ով որ բարի խորհուրդին ականջ չի դնիլ, նա կըպատժուի:

Մէկ շատ ցուրտ օր Մովսէսը ուսումնաբանից գնում՝ էր տուն: Երկու օր էր, որ շատ ցուրտ էր, և նա ուրիշ աղերքի հետ անցկենելուց տեսաւ, որ զետի ջուրը սառելէ: Նկէք, ասաց նա ընկերներին, եկեղ գնանք սառուցի վրա: Ամէնքը էն սհաթին համաձայնեցան և սկսան ներքեվ գնալ նեղ ձանապարհով, որ տանում էր զետի մօտ: Ֆն ժամանակը էնաւելաց անց էր կենում մէկ ծեր մարդ, որ ասաց նրանց՝ տղերք, ուր էր գնում. մի' գնաք սառուցի վրա: Նա դեռ ևս բաւական հաստ չէ և ձեզ չի կարող բռնել, կը կոտրուի և դուք ջուրը կը թափուէք: Էս լսելով ամէնքը կանգնեցան և վախեցան առաջ զնալ: մէնակ Մովսէսը ականջ չողրեց ծերի խօսքերին և գնաց սառուցի վրա: Նա ծիծաղում էր միւս աղերքի վրա և ասում էր՝ ամօթէ ձեզ, ամօթ, վախկոտներ, դուք սիրտ չունիք: Ի՞նչ կայ էս տեղ վախենալու: Բայց գեռ ևս երեք ոտք չ'էր փոխել սառուցի վրա, յանկարծ սառուցը կոտրուեցաւ և նա ընկաւ ջրի մէջ մինչեւ բերանը: Ամէնքը դուալով փախսան էն աեղաց և Մովսէսը կը խեղզուէր. եթէ էս ձայները լսելով չովաղէր օգնելու և չ'ազատէր նրան էն ծեր մարդը, որ բարեսիրտ լինելու ողատճառաւ, չ'էր հետ ուայել էն տեղից: Մովսէսը սաստիկ դողում էր, և կտաւի

պէս գոյնը փախած էր երեսից, և չէր կարողա՞ւ ում խօսիլ։  
թէ ոգէտ էն սհաթին օգնեցին նրան և տաքացրին, բայց նա  
շատ հիւանդացաւ և երեք շաբաթ մնաց կողինքումը պառ-  
կած։ Նրբ որ նա առողջացաւ, հայրը ասաց նրան՝ մտքիդ  
տահիր էս կանոնը։ Ով որ բարի խորհուրդը չի լսիլ, նա կը-  
պատժուի։ Բայց եթէ էդ փորձութիւնը չըպատահէր, սա-  
ռուցը չըկոտրուէր և Մովսէսը ջուրը չընկնէր, պէտք էր որ  
միւս տղերը ափառսէին, թէ ընչի լսեցին ծեր մարդու խօսքը։—

Ժ.Բ. Կարիք օրուայ բարեկամ։

Աղէքսանդրը յետ եկաւ ուսումնարանից և ասաց իրա  
մօրը՝ «Մայր իմ, խեղճ նիկոլայը, որ ոչ հայր ունի, ոչ  
մայր, շատ հիւանդ է։ և էն մարդիքը, որ նրան վեր են առ-  
ել իրանց տանը պահելու, թողել են նրան մէկ սենեակի (օթախի) միջումը, ոչ տերութիւն են անում նրան, ոչ հոգս  
են քաշում։ Շատ մեղքս գալիս է խեղճ նիկոլը, և ես  
ցանկանում եմ շուտ շուտ գնալ նրան տեսնելու, եթէ դուք  
հրաման կըտաք»։—«Շատ լաւ, սիրելի՝ որդեակ, պատասխան  
տուեց մայրը։ պէտք է ելաւ բան է օգնելը ընկերին կարիք  
ժամանակը։ բայց զգոյշ կացիր, և առաջ իմացիր, թէ ի՞նչ-  
պիսի հիւանդութիւն է նրա հիւանդութիւնը, դիպչող է, թէ  
չէ, որ դու ինքդ էլ վտանգի մէջ չընկնես։» Աղէքսանդրը  
էն բոպէին վաղեց, իմացաւ և եկաւ յայտնեց մօրը։ թէ  
նոկոլայի հիւանդութիւնը դիպչող չէ։ Նա սկսաւ ամէն օր  
գնալ իրա հիւանդ ընկերի մօտ, նստում էր մէկ քանի սհաթ-  
նրա կողինքի մօտ, ինչ որ նրան պէտք էր ըլնում, բերում  
էր և երբեմն գիշերն էլ մնում էր նրա մօտ մէկ քանի սհաթ։  
Երբ որ նիկոլայը սկսաւ առողջանալ, Աղէքսանդրը նրան ու-  
րախացնելու համար կարգում էր մէկ քանի երես լաւ գր-  
քերից և բերում էր նրա համար զօրութիւն տուող կերա-

կուրճեր, որ նրա խնդիրքով եփում էր մայրը։ Մէկ օր Առ  
զէքսանդրի ընկերներից մէկը ասաց նրան՝ «գու շատ յիմար  
տղայ ես, որ երկոր նատում ես հիւանդ Նիկոլայի կողենքի  
մօտ, ես ամենեին չ'եմ գնալ նրա մօտ»։ «Մի՛թէ քեզ համար  
միսի՛ արութիւն չը ընիւ, պատասխան տա եց Աղէք-  
սանդրը, եթէ դու հիւանդ ընեիր, ամէնքը քեզ թաղնեին  
և մէկ ընկերդ քեզ միսի՛ արէր, հողս քաշէր քեզ համար  
և միշտ գար քեզ մօտ»։ Քիչ ժամանակից յետոյ Նիկոլը բու-  
լորվին առողջայաւ և սրտանց շնորհակալ էր Աղէքսանդրից  
նրա արած օդնութեան համար։ «Ի՞նչքան ես ուրախ կը լնէի,  
ասում էր նա, եթէ կարողանայի իմ շնորհակալ թիւնս  
քեզ յայտնել մէկ բանով, սիրելի՛ Աղէքսանդր։ բայց ես աղ-  
քատ եմ և չ'եմ գիտում, թէ ի՞նչ պէտք է անեմ քեզ հա-  
մար»։ Մէկ փոքր ժամանակից յետոյ, մէկ օր Աղէքսանդրը  
մտաւ իրա փաքը պարտէզը (բաղչան), որ ինքը իրա ձեռքով  
էր տնկել, կարգել և ողահում էր։ Ի՞նչքան վարմացաւ նա,  
երբոր տեսաւ, թէ բոլոր անպիտան խոտերը քաղած են, մանդ  
առունելը (ջրանցքները) հաւասարած են և զանազան ծաղ-  
կունքներով պարտէզը լքցրած է։ Նա չ'էր կարողանում հաս-  
կանալ, թէ ես ի՞նչպէս է սրտահել, էնդուր համար, որ երեկ  
երեկոյ նա իրա պարտէզը էսպէս զարդարած ջրմողաւ։ Ա-  
ռաջ նա կարծում էր, թէ իրա ծնողքն են արել ես բանը  
իրան ուրսխացնելու համար։ բայց հարցնելով տեսաւ, որ ոչ  
ծնողքը և ոչ ծառացքը ոչինչ չ'են իմանում։ Աերջապէս  
Աղէքսանդրը իմացաւ մէկ հարեանից, թէ երախտաղէտ  
(լաւութիւն չըմաւայնող) Նիկոլը առաւօտը շատ վաղ բե-  
րեց և անկեց ևս ծաղկները։ Ես ժամանակու անից ս'սած  
Աղէքսանդրը և Նիկոլայը հաստատ բարեկամ դառան և իրանց  
կետնքն էլ չ'ին խնայում մէկ մէկու համար։

ԺԳ. Կովասէր

Արշակը միշտ կովում էր իրա եղբօրների և բնկելների  
հետ։ Եթէ նրա պղտիկ քոյրը նրա մէկ բանին ձեռք էր տա-  
լի, նա բարկանում էր, կովում էր և շատ անգամ ծեծում  
էր նրան։ Երբոր նրան ասանում էր ուսումնարան կամ ու-  
սումնարանից բերում էր տուն, անդադար կռիւ էր անում  
երբեմն պատճառ բերելով, թէ շատ ծանր է գնում, երա-  
բեմն թէ շատ շուտ է գնում։ Շատ անդամ տանում էր  
անխնայ քաշելով, եթէ նա չ'էր ուզում գնալ նրա հետ։  
Եթէ քոյրը նստում էր մէկ տեղ, Արշակը նրան ասում էր՝  
վեր կաց էս աեղաց, ես եմ ուզում էս տեղ նստել. և եթէ  
նա իրա կամքով չ'էր փեր կինում, նա ծեծելով քշում էր  
նրան։ Ազպիսի բաներ էլ անում էր նա ուսումնարանումը,  
և վերջապէս էնքան զզուեցրել էր ամենքին, որ ոչ ոք չ'էր  
ուզում նստել կռվորար Արշակի մօտ։ Նա էս բաները իրա  
համար պարծանք էր համարում և պարծենալով ուրիշներին  
էլ պատմում էր, և մեծ յցս ուներ, թէ ամենին կարող է  
յաղթել։ Ամենից աւելի տանջվում էին նրա ձեռքից մանր  
աղերքը կամ ուժ չ'ունեցողները, որք չ'ին կարողանում  
նրան յաղթել։ Նա միշտ ծիծաղում էր նրանց վրա և շատ  
յիմարութիւններ էր անում։ Փողոցներումն էլ (քուչէքումը)  
շատ անդամ էդպիսի բաներ էր անում, բայց որո լինեաւ էն-  
տեղ պատահում էին իրանից աւելի ուժով տղերք, էնդուր  
համար նրա երեսը միշտ ջարդած էր ընտում։ Մէկ օր էս  
պիսի կռվի ժամանակը նրա զլիսին մէկ տղայ էնպէս խփեց,  
որ նա երեք շարաթ հիւանդ պառկեցաւ, և գլխի պատռածի  
աեղը մնաց բոլոր կեանքը։ Բայց էս փորձանքիցն էլ չըխ-  
րասուեցաւ կովասէր Արշակը։ Երբոր նա մեծացաւ, մէկ օր  
սաստիկ բարկացած կռվելու ժամանակը, էնպէս խփեց մէկ  
մարդու, որ սպանեց։ էստուր համար նրան բռնեցին պատ-

Ժեցին և նա իրա բոլոր կեանքը անցկացրուց Սիրիումը ծանր մշակութեան միջումը : Տեսէք թէ ի՞նչպէս վատ բաներ են զուրս գոլի կռվասիրութիւնից և բարկութիւնից :

ԺԴ. Անբաւական

Մարտիրոսի ծնողքը շատ հարուստ էին և շատ բարես սիրտ . և որովհետև Մարտիրոսից աւելի որդի չ'ունեին, էնդուր համար նրա ամէն ուզածը կատարում էին, և նա ամէն բանը ունէր՝ լաւ շորեր, լաւ կերակուրներ և ամէն աեսակ խաղալիք: Բայց Մարտիրոսին չ'էր կարելի ոչինչ բանով բաւականացնել: Նա երբէք չ'էր ուրախանում ունեցած բանի վրա, միշտ զըտնում էր նրանց միջումը մէկ պակասութիւն և միշտ պահանջում էր աւելի լաւը: Զորօրինակ, եթէ նրա համար կարում էին նոր շորեր, նա կամ կոճակները չ'էր հաւանում, կամ ասում էր, թէ նեղէ կարած, կամ լէն է, կամ երկայն է, կամ կարծ է: Եթէ ծնողաց հետ գնումէր մանդալու, անդադար գանկատ էր անում կամ շոքից, կամ ցրտից, կամ ասում էր, թէ շատ հեռու է Ճանապահը, և համարեամ թէ ամէն բոսկ ասում էր՝ ա՞խ, ե՞րբ կըհամենք; Իսկ եթէ գնում էին մէկ տեղ, նա կըկին չ'էր հաւանում էն տեղը և ասում էր, որ ծնողքը տանեն նրան ուրիշ տեղ: Եսպիսի բաներով Մարտիրոսը իրա անբաւականութիւնով իրան էլ զըրկում էր ուրախութիւնից, նեղանում էր և ուրիշներին էլ նեղացնում էր: Նրա համար ուրախութիւն ըսկար կեանքի միջումը, և ո՞լ կ'ուզէր ընկերութիւն անել էսպիսի անհաւան տղի հետ: Են պատճառով նա երբէք ուրախ սիրտ չ'ունէր և երբէք չ'էր զուարծանում իրա ունեցած բանովը: Կ'ուզէիք դուք էլնրա նման ընել: —

## How to Write

"първият" ще е първи

Ջմեռուայ մէկ սաստիկ ցուրտ օր Մակարը և Արտեմը  
անց էին կենում տափից : Ճանապարհին տեսան նրանք ձիւա-  
նի վրա պառկած մէկ անծանօթ մարդ, որ երևում էր, թէ  
շատ խորը քնով քնած է: Մակարի սիրտը ցաւեց նրա հա-  
մար և հասկանալով, թէ նա կարող է սառչել էս տեղ, գնաց  
նրա մօտ և սկսաւ զարթեցնել: Շատ շարժեց անծանօթ  
մարդուն, բայց նա չողարթեցաւ: — «Դու շատ երկար ժամա-  
նակ կը շարժես դրան, ասաց Արտեմը ծիծաղելով: Կտ չէ  
զարթնիլ, էնդուր համար, որ հարբած է. թուլ գրան և գը-  
նանք: Շատ ցուրտ է»: — «Չէ, պատասխան տուեց Մակարը, ես  
չ'եմ կարող սրան էսպէս թողնել. շատ կարելի է, որ էս խեղձ  
մարդը սառչե: թէ և սա հարբած էլ ըլնի, բայց էլի մարդ  
է, և էնողիսի մարդ է, որին պէտք է մենք օդնենք: Ինչ որ  
ձեռքից կը զայ, ես ամէն բանը կ'անեմ, որ աղատեմ սրա  
կեանքը»: — «Ինչ կամենաս արա, ասաց բարկութիւնով Արտեմը: Ես  
չ'եմ կանգնիլ էս տեղ և չ'եմ սառչել»: Ես ասելով նա  
գնաց: — Են ժամանակը Մակարը պառկած մարդուն ծածկեց  
ձնով, էնդուր համար, որ լսել էր, թէ ձիւնը տաքացնում  
է, և շուտով վազեց մօտիկ գիւղը, որ սայլ բերի: Նրա բաղ-  
դից պատաշեցաւ մէկ բարեսիրտ զեղըի, որ գնում էր քա-  
ղաքից: Նրա օգնութիւնով քիչ ժամանակումը կիսամեռ  
մարդուն շնչե բերին և Մակարը ուրախ ուրախ վազեց իրա  
տուն: Դուք ի՞նչ էք միտք անում Մակարի վրա. և ի՞նչ էք  
ասում Արտեմի համար: Արանցից որի՞ն կ'ուղէք աւելի նմանիլ:

Ժ. Յովհանն (Յակով) աղջիկ:

Կատարինէի դայեակը (երեխայ պահող կնիկ) շատ սնուտիապաշտ էր, և շատ անդամն նրան պատճում էր սուտ պատ-

մութիւններ զարհուրելի տեսիլքների վրա, և նա սովորելէր քնել ջրաքով և մենակ քնել չեր կարողանում։ Էստուրից նա դառաւ վախկոտ։ Երբ որ նրա տասը տարին լրացաւ, մէկ օր պատահէցաւ, որ նրանց տանը ամենքը հիւանդացան, և հայրը ուրիշ քաղաքումն էր։ Էնդուր համար կատարինէն ստիպուեցաւ մէնակ քնել։ Նրա համար մեծ գժուարութիւնն էր մանաւանդ էն ժամանակը, երբ որ մայրը չըկամեցաւ, որ նրա սենեակումը (օժախումը) մնայ վառած մոմ և մայրը կարծում էր, թէ կատարինէն, որ այժմ մեծ աղջիկ էր, կարողէ քնել մթնումը։ Նա շատ ցանկանում էր քնել հիւանդանների մօտ, բայց մայրը չըկամեցաւ, որովհետև հիւանդութիւնը կարող էր նրան էլ դիսկել։ Կաց ընելով գնաց կատարինէն իրա սենեակը, շուտով հանեց շորերը, պառկեցաւ և վախից ծածկեց գլուխը բարձի տոկի։ Ժամանակ առժամանակ հանում էր նա գլուխը բարձի տակից, որ շունչ քաշի և վախենալով մտիկ տայ, թէ ի՞նչ կայ տան միջումը։ Յանկարծ նրան թուեցաւ, թէ զրան վրա մէկ սպիտակ երակայն բան կայ կանդնած։ Զարհուրելով գլուխը փաթաթեց վերմակի (եօրդանի, լիհերի) մէջ և քրտինքը ծածկեց նրա բոլոր մարմինը։ Նա չըկարաց երկար ժամանակ մնալ էնպէս և վերջապէս համարձակեցաւ գլուխը դուրս հանել։ Բայց կրիին տեսաւ, որ սպիտակ բանը ոչ թէ միայն կանդնած է զրան մօտ, այլ և շարժում է։ Էն ժամանակը սկսաւ կատարինէն բարձր ձենով գոռաւ և էն բոպէին մայրը մտաւ ներս։ «Ի՞նչ էլաւ քեզ, կատարինէ, քնածես, թէ չէ»։ «Ա՞լ, մայրիմ, մայրիմ, մէկ սպիտակ բան»……«Ես լաւ դիտեմ, որ քու աչքին միշտ երեւում են հրաշքներ, ասաց մայրը։ Խելքդ գլուխդ հաւաքիր։ ընչեցն ես վախենում։» Գնելով տեսան, որ սպիտակ հրաշքը սպիտակ երեսսրբիչն է ըլել, որ կախ արած էր զրան վրա և լուսնեակի շողքը ընկել էր վրէն։ Մայրը գըրան մօտ կանդնած ականջ է ըլել զնում, թէ

Կատարինէն քնածէ, թէ չէ. և երբ նա դուռը բացելէ, երեսսրբիչը սկսել էր շարժիլ: Կատարինէն ամաչեցաւ իրա երեխայական վախկոտութիւնից, և էն ժամանակից յետոյ նը-րան միւսանցամ հրաշքնիր չ'էն երեռում:

Ժէ. Բարեսիրտ դուստր:

Վահաղը շատ հիւանդէր և նրա մայրը երեք գիշեր չ'էր քնած և նստած էր նրա կողինքի մօտ: Նրա տասներակու տարեկան Մարիամ քոյ ը վախենում էր, որ մայրը անքն ւթիւնից ինքն էլ չըհիւանդանայ, և էն պատճառաւ խնդրեց, որ իրան հրաման տայ չորրորդ զիշերը պահել հիւանդ եղօրը. բայց գորովագութ մայրը չ'էր կամենում նրան էդ հրամանը տալ մէկ էն պատճառաւ, որ Մարիամը ինքն էլ տկար էր, և երկրորդ էնդուր, որ վախենում էր, թէ նրա քունը չըտանի և Վահաղը չըմնայ առանց օգնականի: Երբ որ երեկոյ էլաւ, հայրը հարկադրեցաւ պառկել քնելու, էնդուր համար, որ նրա աչքերը դադրածութիւնից փակվում էին: Թէպէտ Մարիամը իրա մօր հրամանովը պառկեցաւ քնելու, սակայն սէրը և հոգոր չըմողին նրան քնելու: Լսելով, թէ մայրը խորը քնի միջումն է, նա կամաց կամաց վերկայաւ աեղեց, վեր առաւ իրա ձեռագործը և նստեցաւ զեանի վրա հիւանդ եղօր կողինքի մօտ: Նա մեծ ու շաղրութիւնով մտիկ էր տալիք եղօրը, և երբ որ նա շարժում էր կամ բան էր ու զում, նա խսկոյն կատարում էր ու զածը: Էսպէս անցաւ համարեա ողջ գիշերը և ի՞նչքան Մարիամը ուրախանում էր, որ կարաց իրա մօրը էն զիշերը հանգատութիւն տալ:

Ես բանից յետոյ շատ ժամանակ չ'անցաւ, մայրն էլ հիւանդացաւ, և թէպէտ շուտով առողջացաւ, բայց շատ տկար էր: Բժիշկը, Մարիամի մօտ, ասաց, և թէ հիւանդը կարողանայ

ամէն օր քիչ քիչ դինի խմել, շուտով ուժի կըգայ: Բայց  
էս խեղջ կնիկը ո՞ր տեղաց կարող էր դինի զտնել: Վահագի  
հիւանդութիւնը նրան շատ թանկ նստեցաւ: Մարիամը  
լսեց, թէ իրանց կացած տանը, մէկ ուրիշ կենող մարդ է:  
վնատում, որ կոտորած փայտերը տանի ստուատուն: Նա  
խնդրեց, որ իրան յանձնեն էդ գործը, և խոստացաւ կտա-  
րել ինչպէս պէտքն է: Զօրս սհաթի չափ աշխատելուց յետոյ նա  
ստացաւ էնքան փող, որ կարող էր իրա մօր համար քիչ  
դինի առնել: Թէպէտ նա շատ գաղթեցաւ էդ մնավոր աշ-  
խատանքից, բայց երբ որ ստացաւ իրա վարձը, էնպէս շուտ  
վաղեց, որպէս թէ էն օրը ամենեւին աշխատանք չ'էր արել:  
Ի՞նչքան ուրախանում էր նա, որ իրա ձեռքի աշխատանքով  
կարաց զնել իրա մօր համար էս զօրացուցիչ խմելքը: Իսկ  
մօր սիրոր էնքան շարժեցաւ Մարիամի որդիական սիրոյ վրա:  
որ լսց էր ընում ուրախութիւնից: Ա՞ս, ի՞նչ լսու կը լնէր,  
եթէ ամէն մանուկ էնպէս մտածէր, ի՞նչպէս որ Մարիամը:

ԺԸ. Անհիմն կարծիք:

Գինեվաճառ. Մելերի կրպակից ( զուքնից ) գողացել էին  
շատ շեշերով զանազան զինիք, և նա չ'էր կարողանում գողին  
գտնել: Մէկ օր նրա որդի թորոսը եկաւ տուն շունչը կը-  
տրուելով և պատմեց, թէ յատուկ զիտէ, ովէ գողացել գի-  
նիքը կրպակից: — Ո՞վ է, հարցրուց հետոքքիր հայրը: — Մեր  
փոքրիկ Սարգիսը. էնդուր համար, որ ես էս սհաթիս տե-  
սայ, որ նա երկու շիշ ձեռին վախենալով դուրս եկաւ կըր-  
պակից Փոքրիկ Սարգիսը երկար ժամանակ Միլերի տանն էր  
էս բանից առաջ, բայց նորերում զուրս էր եկել, և որով-  
հետեւ նա աղքատ տղայ էր, վասնորոյ Միլերի տանը նրան  
օգնում էին: Էս պատճառաւ Միլերը շատ զարմացաւ,  
երբոր լսեց. թէ Սարգիսը նրա տնից բան է գողանում և

երբէք չ'էր ուզում հաւատալ. բայց թորոսը էնապէս հաւատացնում էր, մինչև որ հայրն էլ սկսաւ կարծիք տանել Սարդսի արարքի վըա: Միլլերը կանչեց Սարդսին իրա մօտ, խորը մտիկ տուեց նրա երեսին և հարցրուց՝ «քու խղճմտանքը խտանի է, թէ չէ»: Ես հարցնելու ժամանակը, կարծես թէ, Սարդիսը խառնուեցաւ և կարմիրց: «Ճշմարիտը պատասխան տուր», ասաց Միլլերը: «Ես տմենեին չ'եմ իմանում, ասաց Սարդիսը կապկապուելով, թէ ես ինչ վատ բան եմ արելու: Քան երեսը մեղաղրում է քեզ, ասաց Միլլերը և բարկութիւնով մտիկ տուեց երեսին. էն օրը զու իմ կրպակումն ըլլել ես թէ չէ, երկու շեշ գինի տարել ես, թէ չէ»: Սարդիսը չըկարաց Զէ՛ ասել, բայց երբ նրան սկսան յայտնապէս մեղաղրել, թէ նա զողացելէ կրպակից երկու շեշ գինի, նա առանց վախի սկսեց հաւատացնել, թէ մեղաւոր չէ, և յատուկ արդարացրուց իրա զըւխը: Նա մէկ մէկ պատմեց, թէ էն օրը տանում էր իրա մօր համար երկու շեշ գարեւծուր և տարաւ զրեց կրպակումը, մինչև որ դնաց օղնելու իրա մէկ բնկերին մէկ ծանր քթոց տանելու, որ նա չ'էր կարողանում մինակ տանել: Բայց երրոր նա յետ էր գալի, մէկ անկարգ տղայ սկսեց նրան ծաղը անել և էնքան ետեից վազեց, մինչև որ նա մոտաւ կրպակը: Կրպակից զուրս զալուց նա վախենալով մտիկ էր տալի էս կողմը էն կողմը, որ տեսնի, թէ զուցէ էն ետեից եկող տղան մէկ տեղ թախ կացած ըլնի: Միլլերը հարցրուց էս բաները Սարդսի մօրից և յատուկ իմացաւ, թէ նա ճշմարիտ է ասել: Էն ժամանակը նրա սիրալ շատ նեղացաւ, որ անմեղ և խսակ ծառայող Սարդսին մեղմագրում էր էսպիսի վատ բանումը: Ես անիրաւութիւնը մոռացանելու համար նա ընծայեց Սարդսին նոր շորեր, խկ իրա որդուն խրատեց էսպիս՝ «միւսանգամ զգոյշ կացիր, որ առանց բաւական պատճառի ոչ ոքի վրա վատ բան ըրխոսես, էնդուր համար, որ զու ինքդ այժմ տեսար, թէ ինչպէս մարդուս աչքը խարվում է:

ԺԹ. Բանասէր աղջիկ:

Շուշանը պղտիկուց մեծ սէր ունէր ուսումն առնելու  
և հարկաւոր գիտութիւններ ստանալու: Արբ որ նա մէկ նոր  
բան էր առնուամ, էնքան չէր հանդսանուամ, մինչեւ որ լաւ  
տեղեկանուամ էր. իսկ եթէ իշա մտաժմուքովը չ'էր կարու  
ղանուամ հասկանալ. թէ ընչի՞համար է պէտք էն բանը, և  
թէ ընչի՞ համար էն տեսակ է և ոչ ուրիշ տեսակ, նա էնա  
քան հարցնուամ էր, մինչեւ որ լաւ հասկանայ: Նա ուրաւ  
խութիւնով զնուամ էր ուսումն առնելու, և շատ վատ եղաւ  
նակին էլ ճանապարհի երկարութիւնը նրան չ'էր վախեցնուամ:  
Նա շատ ուրախանուամ էր ամէն նոր խրատական զրքի վրա.  
ուրիշ մանր աշակերտների նման չ'էր շուռ տալի միայն թղա  
թերը, այլ կարդուամ էր ու շադրութիւնով և լաւ միտք առ  
նելով, և էնդուր համար, եթէ նրան հարցնուամ էին, թէ  
ի՞նչ է զրած էն զրքուամը, շուտով պատասխան էր տալի:  
Ամէն գործուամը, մանաւանդ կարդալուամը, նա շատ հմտա էր,  
և աւելի լաւ սովորելու համար նրան տուին մէկ երեկելի կար  
կարողի մօտ օգնական, որ յանձն առաւ նրան սորվեցնել էն  
պայմանով, որ նա մէկ բոլոր տարի կանուխ առաւօտուանից  
մինչեւ զիշեր կար կարի կամ գործի նրա համար առանց վար-  
ձի: Երբ որ էս դառը տարին անց կացաւ, նա էնքան լաւ  
սովորել էր, որ ոչ թէ միայն կարողանուամ էր իրան պատռով  
պահել, այլ և իրա հիւանդ մօրն էլ ծերութեան ժամանակը  
պահուամ էր: Որովհեաւ բանասիրութիւնը միշտ հարկադրուամ  
էր նրան ծանօթութիւն ունենալ միայն խելօք մարդկանց  
հետ, որոնցից կարելի էր հարկաւոր բան սովորել, էնդուր  
համար նա պահպանեց իրան զանազան յիմարութիւններից,  
և ամէն խելօք մարդիք նրան սիրուամ էին և պատվուամ էին:—

ի. Բարի զգացմունք:

Անտօնը շատ բարեսիրտ տղայ էր: Նրա համար մեծ ու բախութիւն էր ընտում, եթէ նա կարողանում էր ուրիշներին բաւականութիւն տալ. և շատ անդամ իրան զբկում էր միայն էնդուր համար, որ կարողանայ ուրիշներին ուրախացնել, մանաւանդ իրա եղբօրներին և քուրերին: Եթէ նա լսում էր տարաբախտ մարդկանց համար մէկ բան, նրա սիրտը նեղանում էր կարեկցութիւնից, և շատ անդամ, երբ որ հայրը սեղանի վրա պատճում էր մէկ տարաբախտի պատմութիւն, Անտօնի աչքերը լքվում էին արտասունքով: Մէկ օր հայրը պատմեց մէկ կօշկակարի համար, որին Անտօնը շատ լաւ ճանչում էր, թէ նա իրա կնկանով և երեխերքով շատ դառն վիճակի մէջն է: «Իմ մեղքս գալիս են եղ մարդիկը, ասաց հայրը, էնդուր համար, որ նրանք տանջվում են բոլորովին անմեղ, և միայն էն պատճառով, որ հաւատացին վատ մարդկերանց: Հիմքի էն խեղճ մարդուն ոչ ոք բան չի տալի էնդուր համար, որ նա կաշի էլ չ'ունի, և նրա ամեն լաւ բաները ծախած են: Եթէ ես ունենայի մէկ փոքր աւելի փող, ես նրան պարտք կը տայի և նա կը կին կ'ուղղուէր»: Անտօնը էս ամեն խօսքս լսում էր մեծ մտադրութիւնով: Ճաշեց յետոյ նա գնաց իրա հօր մօտ և ասաց՝ հայր իմ, եթէ ես կամենայի տանել խեղճ Մարտինի մօտ (կօշկակարի անունը) արծաթի մանէթը, որ ինձ ընծայելէ կիքահայրս, գուք հրաման կը տայիք ինձ: Հայրը սիսաւ մըտածել, էնդուր համար, որ դիտէր, թէ Մարտինը էս մանէթը չի կարող յետ տալ. սակայն Անտօնը էնքան խնդրեց, մինչև որ հայրը կամք տուաւ: Կարծես թէ Անտօնը երբէք էնքան ուրախ չ'էր ըլել, ինչպէս էն բուդի ին երբ որ նրան հրաման տուին տանելու իրա արծաթի մանէթը խեղճ Մարտինի մօտ: Մարտինը շատ կաշի չ'էր կարող առնել էսքան

քիչ փողով, բայց Անտօնի Հայրը երաշխաւոր կանզնեցաւ  
նրա համար և նա բաւական գործ գտաւ իրա համար: Փոքր  
ժամանակումը էս մարդի գործերը էնպէս լաւ գնացին, որ  
նա իրա կողինքն էլ որ աղքատութեան ժամանակը գրաւ  
էր գրել թափեց զրաւից և ապահովացրուց իրա ապրուստը:  
'Ի հարկէ ամէն տղայ չունի արծաթ մանէթ, որ կարողանայ  
Անտօնի նման ընծայել, բայց ամէն տղայ կամ աղջիկ կարող  
են գոնեամ մէկ փոքր բանով օգնել տարաբախտ մարդուն և  
նրան միաիթ արութիւն տալ: —

ԽԱ. Կախարդ:

Մէկ բոշայ կնիկ եկաւ մէկ զիւղ և ժողովուրդի համար  
թուղթ բաց անելով փող էր հաւաքում: Շատ մարդիք էնա  
քան շուտ հաւատացող և կարճամիտ էին, որ հաւատում  
էին էս խարերայ կնկայ խօսքին: Նա ամէն մէկին էնպիսի  
բաներ էր ասում, որ նրան հաճոյ էր: Մէկին ասում էր,  
թէ մեծ շահ կըստանայ, միւսին՝ թէ գանձ (խաղինայ)  
կըդանի, և այլն: Եսպիսի բաներ ասելու համար նրան շատ  
փող էին տալիք: Էն ժամանակը գաւառապետը լսեց նրա համ-  
բաւը, և որովհետեւ էսպիսի խարերայութիւնները սաստիկ  
արգելած են, էնդուր համար էն կնկան բռնեցին և պա-  
հապաններով տարան քաղաք: Եթէ նա յիրաւի զիտէր դա-  
լիքը իմանալ, այսինքն, մարդարէութիւն անել, ակտք էր  
որ իրա գլխին դալու տարաբախտութիւններն էլ խմանար և  
փախչէր: Սակայն շատերը հաւատացին նրա ասած խօսքերին,  
էնդուր համար, որ ցանկանում էին, որ նրա ասածները ճշշ-  
մարիտ ընին, և էս պատճառով շատերը տարաբախտուեցան,  
էնդուր համար որ, զորօրինակ, էն մարդը, որին նա ասում  
էր, թէ զանձ կըդանի, չէր աշխատում և յոյս ունէր, թէ ա-  
ռանց աշխատելու էլ կըհարստանայ: Շատ երկար ժամանակ էն

դիւղումը մնացին նրա խորհութեան մնասարեր հետևանքը :

իբ. Փողով խաղացող .

Ստեփանը երկար ժամանակ մէկ հարուստ մարդի մօտ այգեպանութիւն էր անում և նրան գովում էին նրա աշխատասիրութեան, հմտութեան և հաւատարմութեան համար։ Նա շատ շնորհակալ էր իրա վիճակիցը և աւելի ոչ ինչ չէր ցանկանում, միայն թէ մինչեւ մահը էնպէս լաւ մնայ, որովհետեւ իրա տէրը սիրում էր նրան և պատռում էր։ Մէկ օր շտապով մտաւ նրա այդին Անտօնը և ուրախութիւն նով ասայ, թէ վիճակումը ( լոտերէջումը ) տարելէ 500 մանէթ։ Հիմի ես ոչինչ բան պակաս չ'եմ ունենալ, բարձր ձեռով ասաց նա. ես էլ հիմիկւայ պէս էնքան աշխատանքով չ'եմ ճարիլ ինձ համար ապրուստ, այլ դուրս կըդամ իմ աղայի մօտից ( նա էլ Ստեփանի աղայի մօտ էր ծառյում ), փոքրիկ առուտուր բայց կ'անեմ և լաւ կ'ապրեմ։ Քեզ էլ խորհուրդ կրտամ, Ստեփան ընկնը իմ, գու էլ փորձիր քո բախտը վիճակումը. մի՛ թէ էն աւելի լաւ չի ընկլ, երբոր մենք ինքներս կը նինք մեր աղաները, և Բնչ կը նի մեզ մեր ծերութեան ժամանակը, ով կը հողայ մեզ համար, ով տէրութիւն կ'անի մեր տկարութեան ժամանակը, եթէ մենք միշտ ծառայ մնանք։ — Ստեփանը դլուխը շարժեց, և ըստ գիտէր, թէ ինչ պատասխան տայ. բայց Անտօնը էնպէս հաւատացրուց նրան, թէ անողատճառ վիճակումը կըտանի, էնպէս գեղեցիկ ցոյց տուաւ նրան անկախութիւնը, որ Ստեփանի սիրու ուզեց մէկ քանի մանէթով փորձել իրա բախտը։ Նա վեր առաւ մէկ համարի ( նոմերի ) փոքրիկ մասը, և առաջնի վիճակ գձելումը ոչինչ չըտարաւ։ Երբ որ նա սկսաւ տիսրել, Անտօնը խրախոյս ( սիրտ ) տուաւ և ասաց. թէ պէտք էր մանր մանր կտորներ վեր առնել շատ համարնեւ-

ըումը (նոմերներումը) . և պէտք է էնքան ժամանակ շարունակես զրուելք, մինչև որ տանես 300 մանէթ:

Ստեփանը չ'էր կամենում 'ի զուր կորցնել իրա փողը և էնդուր համար կրկին զրուեցաւ : Էսպէս շարունակեց նա շատ անդամ, և ամէն անդամ տանու էր տալիք: Ակրծապէս իրա սեփական վողերը աւարտվեցան . բայց նրա սիրտը ուղում էր շարունակել էդ խաղը, որովհետեւ հաստատ կարծում էր, թէ պէտք է մէկ օր տանիք: Եւ ի՞նչ արեց նա փողձարելու համար : Նա սկսաւ իրա տիրոջը և խարել այդիի սլուղների ծախսումը, երբոր առաջ ամէնքից հաւատարիմ ծառան էր . (անս, ինչքան փոխեց նրա բարքը խաղալուցանկութիւնը ): Բայց նրա խարէութիւնը շուտով յայտնուեցաւ և աղան նրան գուրս գձեց իրա մօտից:

Էն ժամանակը նա զնաց իրա բարեկամ Անտօնի մօտ, որ իրա տարած փողերը լաւ չ'էր պահել, և միշտ շարունակում էր խաղը, թէպէտ և շատ ժամանակ էր որ ոչինչ չ'էր տանում: Անտօնը պարտի տակ էր ընկել, և վերծառ պէս փախել էր իրա հայրենի երկրից: Ստեփանն էլ ուրիշ ճար ըրդտաւ, բայց միայն հեռանալ իրա հայրենի տեղից, որովհետեւ նրան, իրեւ խաբեբայ մարդու . և գողի, ոչ ոք չ'էր ուղում վեր առնել ծառայելու . և նա մեռաւ յետին աղքատութեան միջումը : Ով որ իրա աշխատանքով, իրա քըրտինքով չի ուղում փող վաստակել, նա վերջը տարաբաղտ կը լի:

#### Իգ. Անտօնիապահութիւն

Ակմօնը էնքան շուտ հաւատացող էր, որ ամէն լսած բանին հաւատում էր, միտք չ'անելով ճշմարիտ է, թէ սուտ: Էս շուտ հաւատալը սնուտիապաշտ արեց նրան: Եթէ մէկը նրան առէր, թէ այս ինչ կամ այն ինչ տանը հրաշք է երեսում,

նա էն սհաթին հաւատում էր և ուրիշներին էլ պատմում  
էր էնպէս, ինչպէս մէկ հաստատ բան. և եթէ մէկը ասէր,  
թէ էն տանը, որի վրա նստի և կանչի բու թռչունը (բառ  
յիղուշը), կամ՝ որի առաջնորդ շունը սոնայ, անպատճառ մէկ  
մարդ կըմեռնի, նա հաստատ հաւատում էր: Մէկ օր նա  
վէր ընկաւ և ոտը քարին քսուելով քերուեցաւ: Փոխանակ  
բժշկին ցոյց տալու և խնդրելու որ գեղ անի, նա լսեց մէկ  
պառաւ կնկայ խօսքը, որ նրան խորհուրդ տուաւ քերուած  
ոտի վրա գնել ջղախտի տերեներ: Նա հաստատ յոյս ունէր,  
թէ էդ անելով նրա ոտը կ'առողջանայ, որովհետեւ պառաւ  
կնիկը ասաց, թէ էս գեղով շատերին առողջացրել է և էնա  
զուր համար Սիմոնը հաւատում էր նրա խօսքերին և ուրիշ  
գեղի համար միտք չ'էր անում: — Բայց Սիմոնի վէրքը (եա  
րան) աւելի մեծացաւ և շուտով փոխուեցաւ Կեր ՅԱԻ: Էն  
ժամանակը նա հարկադրեալ գնաց բժշկի մօտ, որ ուրիշ  
հնարք չըդտաւ առողջացնելու, բայց միայն կարեց նրա ոտը.  
և Սիմոնը շատ ուրախ էր, որ էղրով ազատուեցաւ և չըմեռաւ:

Անոտիապաշտութիւնը շատ մեծ մեծ տարաբախտու-  
թիւնների աղքիւր է: բայց ի՞նչ անենք, որ շատ մարդիք  
Սիմոնի նման են:

Ի՞՞ Աշխատութեան և ծովութեան պտուղները,

Տրդատը էր որդի հարուստ վաճառականի: Նրա հետ  
միասին կենում էր Պեպրոսը, որ էր որդի պլնձործի: Երա-  
կուսն էլ համարեալ թէ մէկ հասակի էին, երկուսն էլ մե-  
ծանում էին միասին և 8րդատի հայրը սիրում էր Պետրոսին  
իրա որդւոյ պէս և ոչ միայն նստեցնում էր սեղան իրա մօտ  
և հագյուռում էր, այլ և նրա ուսման համար էլ փող էր տալի  
ուսումնարանումը: — Թէպէտ Պետրոսը շատ մեծ ընդունա-  
կութին չունէր, և էնդուր համար ինչ որ սովորում էր,

մեծ նեղութիւնով էր սերտում, սակայն նա շատ աշխատասեր էր։ Մեծ մտադրութիւնով նա հաւաքում էր իրամտքումը ամեն ուսուցչի ասածները, և ինչ որ ուսումնաբանումը դաս էին տալի, նա տանը մեծ աշխատանքով սերտում էր և կրկնում էր։ բաց յայնմանէ ինքը առանց ուրիշի ասելու միշտ պատրաստում էր իրա դասերը։ Էսպիս աշխատելով նա շուտով հասաւ իրա ընկերներին, որք նրանից աւելի ընդունակութիւն ունեին։ Ամենքը սիրում էին նրան և ասում էին, թէ նրա հայրը բախտաւոր կը նի էսպիսի որդուց։ Խոկ Տրդատը խելօք չ'էր և ուսումնաբանումը իրա վարժապետներին աւելի պատիւ չ'էր տալի։ Խաղալը, ձիու վրա հեծնելը, ձուկը որսալը և ուրիշ էսպիսի զբոսանքը նա ուսումից աւելի էր սիրում։ Երբ որ յանդիմանում էին, նա ասում էր՝ «Ես պէտք է վաճառական դառնամ, խոկ վաճառ ռականութեան համար շատ զիտութիւն հարկաւոր չէ։ Եթէ ես սովորեմ կարդալ, զրել և թուարանութիւն, ինձ համար շատ բաւարան է, և էնդունք սովորելու համար դեռ ժամանակ շատ ունիմ»։

Էսպիս անցնում էին տարին տարիի ետեից, և որովհետեւ նա կարծում էր միշտ, թէ գեռ ժամանակ շատ ունի, էնդուր համար կարդալը, զրելը և թուարանութիւնն էլ շատ վատ էր սովորում։ Ի հարկէ, նրա հայրը շատ ուրախ կը նի, եթէ նա աշխատասեր ընէր, բայց ստիպել չ'էր ուազում։ և բաց յայնմանէ ինքն էլ կարծում էր, թէ նրա վիճակի համար շատ աւելի բան իմանալը պէտք չէ, էնդուր համար որ որդին ամեն հարկաւոր բանը կ'ունենայ, երբ որ ինքը նրա համար կը թողնի լու կարդած կալուածք (միւլք)։ Բայց նրանք երկուան էլ սխալվում էին, էնդուր համար որ միաք չ'էին անում, թէ անօգուտ բաների վրա ժամանակ անցնելու սովորութիւնը շատ մեծ վատութիւններ առաջ կը բռեի, քան թէ հասարակ ուսումն չ'առնելը։

Երբ որ Տրդատը հասաւ էն հաստիին, որ պէտք էր ու-  
սումնարանից դուրս դար, Հայրը կամեցաւ նրան տան և ա-  
ռուտուրի կառավարութիւն սորվեցնել և սկսեց նրան յան-  
ձնել զանազան գործեր։ բայց Տրդատը աւելի լաւ էր հա-  
մարում իրա սովորական զըօսանքը : Փոխանակ արտը գնալու  
և ստիպելու մշակներին, որ լաւ րանեն, նա հեծնում էր  
իրա ձիում և գնում էր քաղաք իրա ընկերների մօտ, խնջոյք  
և հացկերոյթ էր տալի նրանց, իսկ մշակները, ինչքան կա-  
մենում էին, պարապ էին մնում : Թէակտ Հայրը շատ յան-  
դիմանում էր նրան էս բանի համար, բայց ոչինչ չօգնեց,  
և խեղճ ծերը մեռաւ ցաւելով իրա որդու անկարդութեանց  
վրա : Են ժամանակը Տրդատը լիակատար իշխան դառաւ բռ-  
լոր Հօրական կայքին և ինչպէս ուղում էր էնպէս էր կա-  
ռավավարում իրա կամքով : — Մէկ առակ կայ աստծ՝ թէ և ինչ-  
պէս օրօրոցումը, էնպէս էլ դերեզմանումը կը լնիա : Տրդատը  
մնաց առաջուայ պէս անկարդ։ կենում էր առանց միտք ա-  
նելու վաղուան համար, և իրա գործերը կառավարելու առ-  
մենելին հոգս չեր քաշում : Էսպիսի բաներով երկու տարումը  
ոչ թէ մէսակ քանդեց և փչացրուց բռլոր կայրը, այլ և  
էնքան պարտքի տակ ընկաւ, որ վերջապէս նրա անշարժ կայ-  
քը ծախեցին ածրդով (հրապարակաւ) : — Մէկ զրաձի ազնուա-  
կան զնեց էդ կալուածքները, և Պետրոսը, որ էսքան ժա-  
մանակ էն ազնուականի տան կառավարիչն էր, և որ իրա աշ-  
խատասիրութիւնով և փող սրահելով իրա համար բաւական  
հարստութիւն էր հաւաքել, էն կալուածքը վեր առաւ տղ-  
նուականից կապալաւ (իջարով) : — Մտխած կալուածքի դինը  
բաւական չելաւ բռլոր պարտքերը հատուցանելու համար,  
և էնդուր համար Տրդատը պարապ ման եկող և թափառա-  
կան կրդառնար, եթէ Պետրոսը, իրա կրախտագիտութիւնով  
և կարեկյութիւնով, վեր չ'առներ նրան իրա տուն և ըսպահէր:

Աշխատասիրութիւնը և չափաւորութիւնը շատ փորձան-

քից պահում են. իսկ պարագութիւնը առն անսակ մեջքի պատճառ է դառնում :

ԵՅ. Քաղցրեղէն:

Մագդաղինէն շատ վատ սովորութիւն ունէր ամէն ու-  
տելեղէնի և խմելու բաների համը տեսնել, ինչ որ ձեռքը  
ընկնէր : Եստուր համար շատ անդամ ծնողքը նրան պատ-  
ժում էին, էն պատճառի, որ քաղցրեղէն սիրելը ոչ թէ միայն  
ինքն երէն վատ բան է, այլ և սորվեցնում է մարդուս ան-  
շափաւոր ընել ամէն ցանկութեան միջումը: Ոչ մէկ տեսակ  
պատիժ չ'էր կարողանում նրան զսպել երրոր նա ուզում  
էր քաղցր բան ուտել. նրա ձեռքից պարտէղի դուռը էն-  
քան ժամանակ կողպած էր ընում, մինչև որ պտուղները  
բոլորը հաւաքէին. էնդուր համար որ նա ամէն ձեռքը ըն-  
կածը քաղում էր, թէ և խակ ընէին: Խակ խնձորները,  
տանձերը կծում էր և յետոյ դէն էր զցում. և էնքան մնաս  
էր տալի պարտէղին, ինչքան որդունքը: Նա մեծ հնարքով  
թափուն մտնում էր կաթը պահելու տեղը, և սերը ուտում  
էր: Առաջ կարծում էին, թէ էդ բանը կատուն է անում  
և էնդուր համար դուրս գձեցին կատուին. բայց շուտով ի-  
մացան, թէ Մագդաղինէն է դտնում կաթի տան բանալիքը:  
Ուրեմն զարմանալի չէ, որ ծնողքը չ'էին հաւատում նրան  
և ամէն բանը կողպում էին նրանից: Մէկ օր նա դինիի համն  
էլ տեսաւ, որ հայրը կողպած պահում էր պահարանումը,  
բայց հարբեցաւ և շատ սասաթիկ հիւանդացաւ :

Մէկ օր նա մէնակ նստած էր տանը (էսպիսի ժամանակը  
նա սովորաբար գործ էր ածում իրա ուտելու համար). փորձեց,  
թէ ո՞ր պահարանն է բաց կամ ո՞ր տեղ են պահած բանալիքը:  
Ցանկարծ տեսաւ, որ պահարնի զլիսին զրած է մէկ աման.  
իսկոյն ուզեց տեսնել: թէ ինչ կայ էն ամանումը ուտելու: Նա

դրեց սեղանը պահարանի մօտ, բայց որովհետեւ էլի ցածր էր, սեղանի վրա էլ դրեց աթոռ, և բարձրացաւ վեր առաւ ամանը : Ամանի միջումը մէկ սպիտուկ բան կար մանը շաքարի նման, նա մատով համը փորձեց, տեսաւ որ քաղցր է, և սկսաւ ադահութեամբ ուտել:

Յանկարծ մայրը մտաւ տուն : Մագդաղին էնպէս վախցաւ, որ ոտքերը դողացին և քիչ մնաց որ պէտք էր վէր ընկնէր աթոռից: Բայց մօր վախը աւելի սաստիկ էլաւ, երբոր տեսաւ, թէ Մագդաղինէն ուտում էր մահաղեղը, որ դրած էր ճանճէրի համար : — , Տարաբախստ աղջիկ, էդ ի՞նչ ես անում գոչեց մայրը: , Խսկոյն ներքեւ առաւ աղջկան, ծառային ուղարկեց բժշկին կանչելու, և նրան տուեց կաթը խմելու, որ սիրաը խառնի և վէր ածի, և ամէն հնարքը գործ ածեց, որ ազատի նրան մահուան տանջանքից: Շատ չ'անցաւ Մագդաղինէն սկսաւ զգալ սաստիկ փորացաւ և էնպէս գոռաց, որ բոլոր դրացիքը հաւաքուեցան: Բժիշկը եկաւ, հրամայեց աւելի կաթը խմել և ուրիշ գեղ էլ տուաւ, բայց երեխի թէ Մագդաղինէն շատ էր կերել մահաղեղից. Էնդուր համար որ թէպէտ կենդանի մնաց, բայց խելքը դլիսից թռաւ և բոլոր անդամները գողում էին: Աչա էսպէս Մագդաղինէի քաղցրեղէն սիրելը համարեաւ թէ անձնասպան արեց նրան: Ով որ առանց մտածելու չար սովորութիւններին կը չետեսի, էն սովորութիւնները նրան կը հասցնեն չար վախճանի :

Ի՞Զ Անաստուններին տանջելը լաւ բան չէ:

Փոքրիկ Գալուստը ուրախանում էր. երբ որ տանջում էր անաստուններին: Նա կարծում էր, թէ իրաւունք ունի էնպիսի բանով ուրախանալու, երբ որ իրան պատահում էր մէկ անաստուն և ՚ի հարկէ երբ որ անաստունը իրանից պակաս ոյժ ունէր: Առանց միտք անելու, թէ անաստունն էլ մեզ նման զգում

է յաւ, նա շատ անդամ էնքան անխնայ տանջում էր նրանց, որպէս թէ նրանք նրա մեծ թշնամիքն էին, թէ և նրանք ոչինչ վնաս չ'էին տալի նրան:

Աս բռնում էր բզեզներին, թելով կապում էր ոտքից մէկ փայտի վրա և էնքան պառուտ էր տալի, մինչև որ ողորմելիքը բոլորովին ուժից ընկնում էին: Անմեղ գորտերին, որ փոքր ինչ հարկաւոր էլ են մեզ, նա բեեւում էր (միխով ծակում էր) և էնքան ուրախանում էր նրանց տանջանքով, մինչև որ նրանք երկար և դառն տանջանքից մեռնում էին:

Ամենից առելի նա իրա հնարքները բանեցնում էր տանջելով փոքրիկ շանը, որ իրան ընծայել էր իրա հօր եղբայրը: Բոլոր օրը քաշելով ման էր ածում նրան, և ուրիշներին ցոյց տալու համար, թէ նա էս շան տէրն է, ծեծում էր նրան, ոտքով խփում էր և տկանջներից քաշում էր էնքան, մինչև որ օտար մարդ իք էլ յանդիմանում էին նրան էստուր համար: Զի չեծնելու ժամանակը, էնքան քշում էր, որ ձիերը սատակում էին և ծառաների հետ էնքան վաս էր վարւում, որ մէկ քանի լաւ ծառաներ չուղեցին նրա մօտ կինալի և դուրս զնացին նրա հօր տնից: Բայց ծնողքը ներում էին նրան էս բաները էնդուր համար, որ նա միակ որդի էր: Վերջապէս, երբ որ նա մեծացաւ և սկսաւ ինքը կառավարել իրա գործերը, ամենքը կարծեցին, թէ նա առելի խելօք կը վարուի. բայց նա շարունակում էր առաջուայ պէս, էնդուր համար, որ ասած է «ինչպէս օրօրոցումը կը նի, էնպէս էլ գեղեղմանումը»: Ամենքի հետ անզադար կռվում էր էնքան, մինչև որ միշտ հատուցանում էր էն վնասները, որ արել էր ուրիշներին, և բոլոր իրա կեանքը անցուց անհանդստուաթեան միջումը:

Բարեսիրտ մարդը ողորմած կը նի իրա անասուններին էլ, իսկ անողորմ մարդու սիրտը ոչոքի համար չի ցաւիլ. և առակ է ասած՝ չար մարդը ճանճով կը սկսի, մարդով կը վերջացնի:

ՈԼ որ ճանաչում էր Սովիային, ամենքը նրան անուանում էին ԱնջոնՅ Եկ ԹէթեհԱՄԻՏ: Եղպիսի անունը պատուաւո՞ր անուն է, թէ չէ: Երբ որ կըկարգաք էս փոքրիկ պատմութիւնը, ինքներդ կարող էք ասել, թէ արժանի՞ էր նա էս անունին, թէ ոչ:

ԱԷԿ օր նստած էր նա սեղանի առաջեր և զրում էր օրինակից, որ ուսուցիչը տուել էր նրան տանը դրելու համար: Յանկարծ նա լսեց, որ մէկ մարդ ձխով եկաւ և կանագնեցաւ դրացիի տան մօտ: Սովիան չոկարաց համբերել հետաքրքրութիւնից, իսկոյն վագեց և էս շտապելու ժամանակը վեր զցեց թանաքամանը և աթուալ: Թանաքը թափուեցաւ սեղանի վրա, յետոյ դետնի վրա: Սովիան շատ վախեցաւ, երբ որ տեսաւ, թէ ինչ արեց իրա անզգուշութիւնով: Հիմի ի՞նչ պէտք է անի, որ ծնողքը չըտեսնեն: Իսկոյն վեր առաւնա առաջին ձեռքը ընկած աղուիսը և սկսաւ թանաքը սըրսքել, բայց միտք չ'արաւ առաջ մտիկ տալ, թէ ինչ աղլուտի է: յետոյ տեսաւ թէ էն իրա հօր վզի աղլուին է: Առաջ նա վախեցաւ, այժմ աւելի ևս: Այս պատահեցաւ առաջին անգամը, և նա ուրիշ ճար չըդտաւ, բայց եթէ ճշմարիտը ասել իրա մօրը և նրան ուրիշ ոչինչ չ'արին, բայց միայն յանդիմանեցին: Սովիան խոստացաւ միւսանդամ զգոյշ կենալ, բայց միւս օրը կրկին փորձանք պատահեցաւ: Երբ որ մայրը ճաշ էր պատրաստում, հրամայեց նրան, որ վեր առնի վառարանի վրայից փոքրիկ կաթսան ( զազանը ), որի միջումը ջուր կար, ջուրը թափի և կաթսան իրան տայ: Սովիան զնաց, բայց փոխանակ վեր առնելու ջրով կտթսան, նա վեր առաւ էն կաթսան, որի միջումը կար հաւաքած կերակուրի իւղ, և պատուհանից թափեց: Էն ժամանակը պատուհանի մօտից անց էր կենում մէկ լաւ հագնուած կին

և էս եփած իւղը թափուեցաւ նրա զլիին և բոլոր շորերը  
ապականեց: Կինը եկաւ Սովիխայի մօր մօտ, յանդիմանելով և  
նախատելով պահանջեց իրա շորերի զինը: Էս անգամը Սու-  
փիային սաստիկ պատժեցին: Ի՞նչ կարող էր նա ասել իրան  
արդարացնելու համար և ընչնվ կարող էր աղատուիլ: Նա  
խոստացաւ աւելի զգոյշ լինել և ինչ որ անում է, առաջ լաւ  
մտածել: Մէկ շաբաթ անցկացաւ, նա մէկ հարկաւոր բան  
էր շինում, բայց ժամանակը քիչ էր մնացել: Կամեցաւ շու-  
տով վաղել լսահանցից տուն, բայց լաւ չընկատեց գետնի  
վրա զրած ամանը, որ ինը բքցրել էր ջրով և զրել էր,  
ոտքը խփեց նրան, վէր ընկաւ և բերանը խփելով ամանին,  
երկու ատամը կոտրեց: Ո՞վ էր մեղաւոր էս բանումը: Նա լաց  
էր ըլնում և գանկատ էր անում իրա անզգուշութիւնից,  
որովհետեւ էս երկու կոտրած ատամները շատ տղեղացրին նրա  
կերպարանքը: Այժմ երեւում էր, թէ էս տարաբախուու-  
թիւնից յետոյ նա կըխրատուի և յիշաւի նա մէկ քանի շա-  
բաթ զգոյշ էր, բայց յետոյ սկսաւ կրկին մոռանալ: Մէկ  
օր նա օգնում էր իրա մօրը շորերին ութոյ քսելով: Նա  
զրաւ արթուկի (ութոյի) մէջ տաքացրած երկաթը և կա-  
մեցաւ դնել ափսէի վրա: Մայրը նստած էր նոյն սեղանի մօտ  
և զրկած ունէր իրա տասն ամսական տղին: Երեխան խա-  
զում էր ձեռքով սեղանի վրա և էն բովէին ձեռքը զրել էր  
ափսէի վրա: Անզգոյշ Սովիխան առանց մտիկ անելու դրեց  
տաքցրած երկաթը երեխայի ձեռքի վըս: Երեխան աղէողորմ  
զոշելով սկսաւ լաց ընել, խկ Սովիխան վախից մնաց անխել-  
քի պէս: Երեխայի բոլը ձեռքը այրուեցաւ և ողորմելին  
տանջվում էր անտանելի ցաւով: Սովիխան էնքան լաց չէր  
ընում նախատանքից և պատժից, որքան սրտի նեղոնալուց,  
տեսնելով թէ ի՞նչ տարաբախութեան պատճառ դառաւ:  
Էն օրից յետոյ նա սկսեց զգոյշ ընել և թէպէտ չըկարաց  
իսկոյն իրան ուղղել, բայց միշտ մաքին պահելով և շարունակ

Հետեւ լուսական պարզ գործը առվորութիւնն շինեց իրա համար զգուշութիւնը և վերջապէս բոլորովին ուղղուեցաւ:

Ի՞՞ Վատ լեզու:

Հոխիսիմէն շատ լաւ աղջիկ կրնէր, եթէ մէկ մեծ պակասութիւնն չ'ունենար, որ նրան պատճառում էր շատ նեղութիւն և ամօթ: Ես պակասութիւնն էր—լեզու խառնելը (խռովարութիւնը): Նա ոչինչ չ'էր կարողանում ծառծուկ պահէլ: Ինչ որ լսում էր կամ իմանում էր ուրիշներից, իսկոյն պատմում էր և երբէք չ'էր կարողանում լուս կենալ: Ինչ որ դրայիների տանը պատահում էր, նա բոլորը զիտէր, էնդուր որ միշտ նստած էր պատուհանի մօտ կամ զբան մօտ, և ինչպէս որ տեսնում էր մէկ ծանօթ մարդ, էն սհաթին սկսում էր պատմել ամէն լսածը կամ զրացիների վրա կամ իրա ծնողաց վրա կամ առ հասարակ տանեցիւքի վրա: Ինչ որ ուսումնարանումը պատահում էր, նա բոլորը պատմում էր, և եթէ աշակերտներից մէկին պատմում էին, նա ամէն պատահող մարդու պատմում էր և պատմելու ժամանակը էնքան աւելացնում էր, որ արած գործը միշտ երեսում էր շատ մեծ: Ես վատ լեզուի համար ամէն ընկերաները նրան չ'էին սիրում, և միայն իրա նմանները նրա հետ ընկերութիւն էին անում: Ես տեսնելով նա շատ նեղանում էր, բայց չ'էր հետեւում էս վատ սովորութիւնը թողնել: Երբ որ նա մեծացաւ, ուկոք էլաւ որ գնայ ուրիշների տուն ծառայելու, էնդուր համար, որ նրա ծնողքը շատ աղքատ էին: Առաջին օրերը նրա ծառայութիւնից շատ բաւական էին ընտում, էնդուր համար, որ նա շատ խստակ էր և աշխատասէր, բայց շուտով իրա չար լեզուով բոլորին կռվեցնում էր և վերջապէս էնքան զզուեցնում էր, որ նրան դուրս էին գցում: Եսպէս էր ընում նրան ամէն տեղ, ուր նա

ծառայում էր և վերջապէս էնքան վատ անուն ստացաւ, որ  
էլ ծառայելու տեղ չըդտաւ: Ես պատճառով նա էլ չըկարաց  
իրա քաղաքումը մնալ և գնաց ուրիշ քաղաք: բայց որով-  
հետեւ էնտեղ էլ իրա սովորութիւնը չըթողուց, էնդու ը  
համար հասաւ էն դառն վիճակին, որ իրա օրական հայր  
հազիւ էր դառնում դառն մշակութիւնով:

Խթ. Լաւ խօսքը օգնում է կարիք ժամանակին:

Աէկ օր աշակերտները ուսումնարանումը լաւ չ'ին պատ-  
րաստել իրանց դասերը և ուսուցիչը պատմեց նրանց էս անց-  
քը, որ պատահել է Աստրախանու մօտ մէկ քաղաքումը:

Աէկ երիտասարդ (Չահիլ) գիւղացի անունը Անդրէաս  
էր լաւ որդի վատ հօր, և գեռ ևս իրա հօր կենդանութեան  
ժամանակը յանձն առաւ վարել և ցանել իրանց անտէր թո-  
ղած արտը, որ կարողանայ իրա ծերացած մօրը պահել:  
Որդիական սէրը հարկադրեց նրան էս ծանր բանը յանձն  
առնել, էնդուր համար, որ նրա հայրը պարտքեր շատ էր  
թողել: Ցրտմութիւնով վեր էր կենում Անդրէասը առա-  
ռօները և հոգսերով պառկում էր երեկոները: Թէպէտ դրա-  
ցին խորհրդական խօսք տուաւ օգնել նրան երկիրը վարելու,  
բայց ո՞լ կրտար խեղձ Անդրէասին փող, որ սէրմեր առնի  
ցանելու համար: Նա շատ բաներ միտք արաւ: Փող խնդրել  
նա չ'ը ուզում, էնդուր համար, որ ո՞ր տեղայ կարող էր  
նա հատուցանել, երբ որ առանց էն էլ նրա պարտքերը շատ  
էին: Յանկարծ նրա միտքը ընկաւ մէկ բան: Նա մատծեց,  
թէ կարելի է դաշտի մկան մօտ գտնի պահած ցորեն: Ակսաւ  
փնտրել և իրա բախտից գտաւ մէկ բուն, որի միջումը էն-  
քան ցորեն կար, որքան իրան պէտք էր: Ցորենները ամբողջ  
էին և շատ յարմար ցանելու համար: Խեղձ Անդրէասը մէկ  
ծանր հոգախց ազատուեցաւ, ուրախ գնաց յայտնեց իրա

դրացիին, թէ գտել է ցորեն և նա խոստացաւ օգնել նրան  
ցանելումը : Միւս օրը գնաց նա իրա արտը և լաց ընելով  
սկսեց ցանել որովհետեւ նրա վիճակը դեռ շատ գտան էր :  
Նա մտածում էր, թէ ի՞նչ կընի իրան, իրա ծերացած մօրը,  
իրա քուրերին և եղբօրներին, եթէ էս ցորենը գուրս չըդայ:  
Կարելի է աւելի լաւ կընէր, եթէ նա ծառայէր ուրիշ մարդ՝  
կանց մօտ, քան թէ արտ ունենար և էսքան պարտք: Բայց  
յանկարծ նա ուրախացաւ և ուժի եկաւ, միտքը բերեց էն  
ուրախարար ոտանաւորը, որ մանկութեան ժամանակը սորմել  
էր՝ «Ով, ՈՐ Ա.Ր.Տ.Ա.Ս.ՈՒ.Ն.Ք.ՈՎ, ԿԸՑԱ.Ն.Ի, ՈՒՐԱ.Խ.ՈՒ.Թ.Ի.Ի.Ն.ՈՎ, ԿԸ-  
ՀՆՁԻ, : Ես ոտանաւորը նա համեմատեց իրա կեանքի հետ:  
Ես մտածելով նա զգաց մէկ մէծ ուրախութիւն և ինքն իւ-  
րան ասաց՝ իմ տրտութեան արտասունքներս էլ, եթէ Աս-  
տուած կամենայ, ուրախութեան արտասունք կըդառնան,  
երբ որ հնձելու ժամանակը կըդայ: Ես յոյս կ'ունենամ լաւ  
վիճակի և ինչ որ ձնոքիցս կըդայ, կ'աշխատեմ առանց վհատու-  
թիւնի: Ամեն օր նա միտք էր անում էս ոտանաւորի վրա  
և մսիթարվում էր: Աստուած յաջողեց, նրա հունձը առատ  
էլաւ և շուտով նրա գործերը էնպէս լաւացան, մինչեւ որ  
կարաց մէկ ձի առնել: Էն ձիու օդնութիւնով նա վարում  
էր իրա արտը, իսկ ձմեռը նրա վրա բեռներ էր կրում ու-  
րիշների համար և վարձ էր ստանում: Ես ձին նրան էնքան  
օգուտ էր տալի, որ նա շուտով կարաց մէկ ուրիշ ձի էլ գը-  
նել, և քիչ ժամանակից երրորդ ձի էլ. բոլոր պարտքերը  
հատոյց և երեք չորս տարումը պարտքերը վճարեց և իրա  
համար փող հաւաքեց: Երկար ժամանակ ապրեց Անդրէասը  
հանգարտ և հարուստ, և ծերութեան ժամանակը իրա քա-  
շած նեղութիւնների վրա խօսելուց միշտ կընում էր՝ .. ՈՎ,  
ՈՐ Ա.Ր.Տ.Ա.Ս.ՈՒ.Ն.Ք.ՈՎ, ԿԸՑԱ.Ն.Ի, ՈՒՐԱ.Խ.ՈՒ.Թ.Ի.Ի.Ն.ՈՎ, ԿԸ ՀՆՁԻ, :

ԱՅՀ արհեստաւորի որդի, անունը Սաելիան, էք առողջ  
և տասնը չորս տարեկան ժամանակը ուներ կատարեալ մար-  
գու հասակ : Նրա երկու եղբայրները քարտաշ էին : Ստեփա-  
նըն էլ կամեցաւ նրանց արհեստը սովորել և էնդուր համար  
նրան էլ ծնողքը ուղարկում էին նրանց հետ բանելու : Էս-  
ակղ անդադար տեսնում էր նու անհանդիստ և կոպիտ մար-  
զիք, որը անդադար կուվում էին և ծեծվում . և եթէ կարծ  
ժամանակ հաշավում էին, սկսում էին երլել զանազան վատ  
երկեր . բաց յայնմանէ օղին (էրաղը) միշտ զրած էր նրանց  
առաջեր սեղանի վրա : Փոքր ժամանակից յետոյ սկսան նը-  
րանք Ստեփանին էլ հակադրել որ նրանց հետ խիթ : Նա ա-  
ռաջ չըկամեցաւ խմել էնդուր համար, որ մէկ անդամ հա-  
մը տեսաւ և բոլորվին ուշաթափեցաւ, բայց ընկերները ծիս  
ծաղում էին նրա վրա, և նրանցից մէկը ասաց՝ լսիր, եղա-  
բայր . եթէ ուղում ես լսա քարտաշ ըլնել, պէտք է սովորես  
էրաղ խմելը : (Ի՞նչ էք կարծում . ճշմարթ էր ասում) :  
Որովհետեւ էս բանը շատ անդամ կրկնում էին նրան, վերջը  
հասացրին էն աստիճանին, որ Ստեփանը սկսաւ էրաղ խմել .  
թէպէտ առաջ չ'էր հաւանում, բայց փոքր ժամանակումը  
նա էլ էնդէս էր խմում, ինչպէս իրա ընկերների : (Վան բան  
էր էս) : Ստեփանը նկատեց, որ ուրիշ քարտաշների բերա-  
նումը ծխեղէկն (չիրուխ)կայ . վասն որոյ կարծեց, թէ ծխա-  
խոտ (թիւթիւն) ծխելն էլ լսա քարտաշ ըլնելու համար ան-  
պատճառ պէտք է : Էնդուր համար շուտով ճարեց իրա հա-  
մար ծխեղէդն . բայց առաջ շատ տանջուեցաւ մինչեւ որ սո-  
վորեցաւ առանց գժուարութեան քաշելը : Շատ անդամ էն-  
պէս սիրտը խառնում էր և զզվում էր, որ մտքումը դնում  
էր միւսանդամ չըքաշել . բայց ընկերները էնքան ծաղը էին  
անում նրան, որ նա կրկնին սկսում էր և վերջապէս սովորեցաւ

ծխախոտ քաշել; Այժմ Ստեփանը իրան համարում էր կատարեալ չսովհահատակ մարդ, էնդուր համար, որ կարողանում էր ամէն բանը անել, ինչ որ ուրիշները անում էին: Բայց փոքր ժամանակից յետոյ սկսաւ հասկանալ թէ առողջ չէ, երեսի զուարժ կարմիր գոյնը թռաւ, ինքը լզարեցաւ, ծուլացաւ և միշտ անբաւական էր, ախորժակը (իշտահը) կապուեցաւ, ստամոքսը շատ անդամ՝ չէր կարողանում մարսել կերած կերակուրը, որ առաջ նրան ոչինչ վնաս չէր տալի. երբեմն զլուխն էր ցաւում, երբեմն փորը, շատ անդամ՝ դողում էին նրա ձեռքերը և ոտքերը: (Ընչեց էին պատահում Ստեփանին էս տկարութիւնները:) Մէկ քանի անխելք մարդիկ խորհուրդ էին տալի նրա ծնողացը, որ երբեմն նրան փոքր էրաղ տան խմելու: (Ես խորհուրդը ընչով լսե չ'էր): Նրանք կարծում էին, թէ էդ հնարքով նա կ'առողջանայ, բայց աւելի թուլացրին, և Ստեփանը ցանկանում էր մոռանալ էս կարծ ժամանակումը անցիացրած կեանքը: (Զարմանալի՞ է, որ Ստեփանը երբէք կատարեալ առողջութիւն չի ունենալ:) Բայց էս զեռ ևս չ'էր բաւական, որ կարծավիտ Ստեփանը հասնի յետին անտառակութեան: Մէկ կիւրակի օր, երբոր պարապութիւնից չ'էր խմանում, թէ ի՞նչպէս անցիացնի իրա ժամանակը, տեսաւ որ իրա ընկերներից մէկ քանիսը զնում էն պանդոկ, որ տեղ էն ժամանակը սազ էին ածում: Ստեփանը կարծեց, թէ էնտեղ զուարձալի կընի և զնաց: Նրա ընկերներից մէկ քանիսը նստած էին մէկ ցածր և մութ սինեակումը և սասաիկ խմում էին. և որովհետեւ խմելու հետ միասին ծխախոտ (չիբուխ) էլ էին քաշում, վասնորոյ բոլոր տունը լքցրած էր ծխով: Քիչ ժամանակից յետոյ մէկը առաջարկեց թռողիթ խաղալ, ամէնքը ուրախութիւնով համաձայնեցան և Ստեփանին էլ հրաւիրեցին, որ ոչինչ չ'էր հասկանում խաղալումը, էնդուր համար մէկը յանձն առու էլու սովորացնել և Ստեփանը մինչև երեկոյ լսւ սոս

զորեցաւ խաղալը: Մեւս կիրակի նա էլի գնաց նոյն պանդոկը  
և տեսաւ, որ թուղթ էին խաղում փողով: Նա ամօթհա-  
մարեց չքիտաղալը, մանաւանդ, որ առաջի խաղալումը տա-  
րելէր: Ես անդամին էլ տարաւ: Ատեփանը շատ սիրեց խա-  
ղը բայց միշտ էնպէս բախտաւոր չ'էր, ինչպէս առաջին խա-  
ղումը. շատ անդամ նա տանուլէր տալի մէկ արասի, եր-  
կու արասի, որ պահած էր ունենում իրա ուտելիքի հա-  
մար, և էս պատճառով բոլոր օրը քաղցած էր մնում: Ի հար-  
կէ էս բանը նրան ախործ չ'էր, բայց նա չ'էր կարողանում  
թողնել խաղը, էնողուր համար, որ թէպէտ քանիցս անդամ  
ինքն իրէն ասում էր՝ էլ չ'եմ գնալ պանդոկը և չ'եմ խաղալ.  
բայց եթէ գալիս էր ընկերներից մէ՛լը և առաջարկում էր, նա  
էն սհաթին գնում էր: Յոյս ունենալով, թէ տանուլ տուա-  
ծը յետ կըտանի՝ նա գնում էր պանդոկ խաղալու. բայց  
ի՞նչ տրտմութիւնով էր վերադառնում իրա տուն, երբ որ  
կրկին տանուլ էր տալի կամ ոչինչ չ'էր տանում: Խսպէս խու-  
ղալը մէկ օր զցեց նրան էնպիսի փողի կարիքի մէջ, որ  
չ'էր իմանում, թէ ինչ անի փող ճարելու համար. և էն ժա-  
մանակը նրա միտքը ընկաւ զարհուելի գործ, այսինքն, մէկ  
բան գողանալ էն տնից, որ տեղ նա բանում էր: Նա գողա-  
ցաւ մէկ չուխայ (մահուղ) կապայ և արձաթի գդալ. բայց  
իրա խղճմտանքը շատ տանջում էր իրան: Ո՞չ . . . լաւ կըւ-  
նէր. որ նա քաղցած մնար կամ ողորմութիւն խնդրէր, քան  
թէ էս բանս անէր: Երբ որ նա կամեցաւ էն գդալը ծախել,  
նրան կարծիք տանելով բռնեցին, գողութիւնը յայտնուեցաւ  
և նա երկար ժամանակ մնաց բանտումը: Էս բանը շատ կոտ-  
րեց նրա բնութիւնը. էն օրից յետոյ նա երբէք բոլոր սրտով  
չ'էր ուրախանում և երբէք չքիտաղաց իրա վիճակը լաւացնել:  
չեսէք, թէ ի՞նչ տեղ է հասցնում լախչք և խաղ սիրելը,  
որոյ համար ասում են, թէ ուրախացնող նն և զուարճացնող:

ԱԱ. Անշնորհակալ աշակերտ

Թիէպէտ Անտօնի ծնողքը տուել էին նրան ուսումնարան, բայց մտիկ չէին տալի, թէ նա միշտ գնումէ, թէ չէ : Կաշատ անդամ ուշ էր գնում, և եւբեմն բոլորովին չէր գնում ուսումնարան : Եթէ վարժապետը հարցնում էր, թէ ուր էր, պատասխան էր սաւանում, թէ հայրը ուղարկել էր Անտօնին իրա կրպակը (գիւղանը), կամ թէ Անտօնը հիւանդ էր, կամ թէ Անտօնը հսօր շատ հարկաւոր բան ունէր տանը : Ի հարկէ վարժապետը շատ անբաւական էր, որովհետեւ ի՞նչպէս կարելի էր յոյս ունենալ, թէ Անտօնը յառաջաւ զիմութիւն ցոյց կըտայ, երբ որ նա էնքան անդամ չէր դրանում ուսումնարան : Բայց վարժապետը աւելի բարկանում էր, մէկ էն պատճառաւ՝ որ Անտօնը բոլորովին ոչինչ էր համարում ուսումը, և երբորդ՝ որ նա առանց ստիպելու չէր սովորում, և երբորդ՝ որ նա չէր սիրում ուսումը, մանաւանդ, երբ որ քիչ սովորեցաւ կարդաղ և դրել, որովհետեւ էս տղան էնքան յիմար էր, որ կարծում էր, թէ մեծ լաւ ուղիւն է անում վարժապետին, երբ որ աշխատասէր է ընում : Խսկի չէր մտածում, թէ էն իրա յատուկ պարտաւորութիւնն է և ուսումը իրա օգուտն է : Էն պատճառով նա վատ անց կացրուց իրա չորս տարին, որ ուսումնարան էր գնում, և շատ քիչ բան սովորեցու :

Մէկ օր Անտօնը եկաւ ուսումնարան և յայտնեց վարժապետին, թէ էլ չի գալ Վարժապետը զարմացաւ և հարցրուց՝ միթէ քո հայրը քեզ ուրիշ ուսումնարանն է տալիս զէ, պատասխան տուեց Անտօնը, ես էլ չի մի կարդալու : Ես տանը պէտք եմ : Շատ զարմանում եմ, ասայ վարժապետը, թէպէտ զու չորս տարի է որ դալիս ես ուսումնարան, բայց էդ ժամանակումը մէկ շարտթ չի անցել, որ երեք կամ չորս օր յետ չըմնայիր, և ինքդ էլ աւելի աշխատասէր չ'էիր :

Հայրս ասում է, թէ ես բաւական գիտեմ, և նա ինքն էլ  
մինչեւ **Ա** տարին է դնացել ուսումնարան։ այժմ ուզում է  
ինձ տալ մէկ արհեստ սովորելու, որ ինքս ինձ համար հաց  
գտնեմ։ — Դու ի՞նչ ես կարծում, ասաց վարժապետը։ մի  
թէ լաւ արհեստաւորը կ'ուզե՞լ վեր առնել էնպիսի աշակեր-  
տին, որ լաւ չըգիտէ կարդալ, զրել և թուաբանութիւն։  
Եւ գու ինքդ էլ ի՞նչ կ'անես, երբ որ կըդառնաս արհես-  
տաւոր, և քեզ պէտք կընի զրել բո հաշեւը կամ ուրիշ  
բան։ — Անտօնը ուրիշ բան չըկարաց պատասխան տալ, բայց  
միայն, թէ հայրը հրամայել է, որ էլ չըդնայ ուսումնարան։

Վարժապետի ասածները ճշմարիտ էին, բայց չըկա-  
րացին փոխել Անտօնի հօր կամքը։ Անտօնը ճարում էր շատ  
սակաւ հաց իրա արհեստից։ իսկ եթէ նա մանկութեան  
ժամանակը լաւ ուսումն առներ, ամէն բանը աւելով կ'ու-  
նենար։ — Էսպիս Անտօնը թողեց ուսումնարանը, այսինքն,  
էլ չ'եկաւ և իրա վարժապետներից էլ շնորհակալ չ'էլաւ նրանց  
աշխատանքի և ուսումն տալու համար։ — Հաւանում էք դուք  
էս գործը։ Դուք էլ Անտօնի պէս անխելք և անշնորհական  
պէտք է գուրս գնաք մէկ օր ուսումնարանից։

ԱՅ. Սուտ ամօթ։

Էնպիսի մարդիք կան, որք վայելու և լաւ բան անեւ-  
լուց ամաչում են, բայց անվայելու և վատ բան անելուց  
չ'են ամաչում, և երբեմն պարծենում էլ են, թէ էնպիսի  
բան են արել, որ արգելած է կամ ամօթ է։ Էսպիսի բնու-  
թիւն ուներ Փիլիպը, որ մէկ վաճառականի որդի էր։ Նա  
երբէք չ'էր ամաչում վաղոցներումը անքաղաքավարութիւն  
անել, զոռալ, չարութիւն անել և ընկերների հետ ծեծ-  
ուիլ, նա չ'էր ամաչում յիշոց տալ և վատ խօսքեր ասել և  
պարծենում էր, թէ մէկ օր իրա ընկերներից մէկին, որ չ'էր

ու զում նրան Շանապարհ տալ, սաստիկ ծեծեց և վէր դցեց:  
(Մի՞ թէ էսպիսի գործերը գովելի գործեր են: ) Մէկ օր նա  
համարձակուեցաւ անհնաղանդ ընիլ իրա վարժապետին :  
Հայրը իմացաւ էս բանը, էնդուր համար որ նա ամեն տեղ  
պարծենում էր, թէ վարժապետին անկարգ խօսքեր է ասել,  
կարծելով, թէ վարժապետի խօսքը չըլսելով նա շատ լաւ  
բան է արել: Հայրը հրամայեց, որ նա վարժապետից ներո-  
ղութիւն խնդրի և խոստանայ միւսանդամ չ'անել, բայց նա  
չ'էր կամենում: Նա ամաչում էր իրա վատ գործը ուղղել  
և կարծում էր, թէ շատ ամօթ բան է ներողութիւն խըն-  
րելը, և աւելի լաւ էր համարում ամեն տեսակ պատիժ ստա-  
նալ, քան թէ ներողութիւն խնդրել: ( Հաւանում էք էս  
գործը Փիլիպի: Կարծում էք, թէ պէտք է նրան նմանիլ: )  
Անչ և իցէ վերջը հարկադրեցին Փիլիպին ներողութիւն խնդ-  
րել: բայց նա էնպէս ակամայ խնդրեց, որ կարծես թէ ա-  
մօթ բան էր զջաջալով իրա պակասութիւնը ուղղել: ( Դուք  
ի՞նչ կ'անէիք եթէ նրա տեղը ընէիք: ) Փիլիպի եղայր կա-  
րապետը, թէպէտ նրանից լաւ վարք ունէր, բայց երբեմն  
նա էլ ամաչում էր էնպիսի բաներից, որից երբէք ամաչել  
պէտք չէ: Մէկ օր նրան հրամայեցին սերտել մէկ փոքրիկ  
պատմութիւն, գուրս գալ ընկերների առաջ և պատմել նը-  
րանց, էնդուր համար որ նա գիտէր ոչ միայն սղարդ կար-  
դալ, այլ և լաւ արտաքերութիւնով ասել: Բայց կարապե-  
տը ամաչեցաւ, և առաջ չ'էր ուղում գուրս գալ աշակերտա-  
ների առաջ թէպէտ և միշտ հնաղանդ էր վարժապետին:  
Երկար ժամանակ պէտք էլաւ նրան խրատել և յորդորել, և  
վէրջապէս վարժապետը շատ բարկացաւ, մինչև որ կարաց նրան  
ասել տալ պատմութիւնը, բայց ասելու ժամանակն էլ կա-  
րապետը զլուխը կուացըել էր և էնպէս ծանր էր ասում և ան-  
կարգ, որ վարժապետը շատ անբաւական մնաց նրանից: Հմի-  
պէտք էր որ նա ամաչէր, որովհետև իրա գործը լաւ չըկատա-  
րեց. իսկ առաջ ի՞նչ կար ամաչելու:

Երբ որ Աղէքսանդրը լսում էր ալքերի կամ ուրիշ տեսիլքների պատմութիւն, բոլոր գիշերը չ'էր քնում, որովհետեւ շատ վախկու էր. և թէպէտ ծնողքը և վարժապետաները նրան հասկացնում էին, թէ ինչքան յիմար բան է ալքերից վախենալը, բայց նա չ'էր կարողանում սրտից հանել վախը : Երբ որ մեծացաւ, նրան տուին աշակերտ մէկ հիւսնի (գիւրդարի) մօտ, որ հրամայեց նրան քնել վերնատանը նրա երկու որդւոց հետ: Էս տղերքը խկոյն հասկացան, թէ Աղէքսանդրը վախենում է ալքերից և մէկ օր խօսք կապեցին իւրանց միջումը նրան խաղ առնել (օյն դալ): Էս դիտառութիւնով նրանցից մէկը երեկոյին ասաց, թէ դաղրած է և ուզում է վաղ քնել բայց իրա եղբօր հետ խօսել էր, որ կ'երթայ թախ կըկենայ Աղէքսանդրի անկողնակալի (կարավատի) տակումը, և երբ Աղէքսանդրը կըդայ կրպառի, նա առաջ շղթաներ կըշարժի և յետոյ վրէն կըծածի սպիտակ կտաւ, յանկարծ դուրս կըդայ և կ'երթայ նրա անկողնակալի մօտ: Խսկ եղբայրը պէտք էր սենեկակի դուռը կողպէր, որ Աղէքսանդրը չըխափչի: (Ի՞նչ էք կարծում էս խորհուրդի մասին): Խնչպէս որ խօսած էին, էնպէս էլ կատարուեցաւ. և վախկոտ Աղէքսանդրը շղթաների ձայնից էսպէս վախեցաւ, որ սառը քրտինքը ծածկեց բոլոր մարմինը. նա սկսաւ գոռալ, բայց պատասխան չըկար: Էն ժամանակը նրա վախը հասաւ յետին աստիճանը, նա վեր կացաւ տեղերից և կամեցաւ վախչել բայց սպիտակ տեսիլքը եկաւ կանգնեցաւ առաջեր և ձեռքից բռնեց: Աղէքսանդրը, լեզուն կապուած և խելքը կորած, առանց ձայն հանելու վէր ընկաւ գետնի վրա: Վերջապէս անկարգ տղերքը տեսան, թէ ինչ են արել իրանց յիմար հանակովը և աշխատում էին հաւատացնել Աղէքսանդրին, թէ նա խարուած է. բայց ժամանակը անցել էր: Աղէքսանդրդը

պառկած էր նրանց առաջելը անշունչ : Յօւսահատուած սկզբան նրանք օգնութիւն կանչել իրանց ծնողացը, որք վազելով եկան և շատ դժուարութիւնով ու շամբավի Աղեքսանդրին կարացան շնչել բերելու բայց նա շուտով խելքի չեկաւ և վախից ընկաւ ողորմելին սաստիկ ջերմի մէջ : Երկու տղերքը շատ փոշիման էին իրանց արածից, որովհետեւ չեին կարծում, թէ էդպէս վատ կրվերջանայ: Հայրը սաստիկ պատժեց նրանց և ամենայն հնարքը բանեցրուց, որ Աղեքսանդրին թողնուլ տայ իրա առանց պատճառի վախը:

ԼԻ. Ճշմարաւթիւնը ամէն բանից լաւ է:

Սահակը տասներկու տարեկան էր, երբ որ նրա հայրը վախճանեցաւ: Ո՛չ ոք ըսմնաց, որ նրա համար հոգս աներ, որովհետեւ հիւանդ մայրը չեր կարողանում իրա ձեռքի աշխատանքով նրան պահել: Ենդուր համար Սահակը յանձն առաւ ինքը իրա համար ապրուստ ճարել, որ ծանրութիւն ըլնի իրա մօրը: Ես դիտեմ կարշալ, գրել և թուարանութիւն, միաք էր անում նա. մի՞ թէ ես աշխարքումը ինձ համար ճանապարհ չեմ գտնիլ, եթէ աշխատասէր ըլնիմ և ճշմարիտ: Նա մնաս բարով ասաց իրա մօրը և գնաց մօտիկ քաղաքը, ուր կենում էր նրա հօր բարեկամ մէկ հարուստ վաճառական: Սահակը գնաց նրա մօտ, պատմեց իրա դառն վիճակը և խնդրեց օգնութիւն: Ամենայն ջերմեռանդութիւնով կը ճառացիս ձեզ առաւոտուանից մինչեւ երեկոյ, ասաց նա, եթէ դուք վեր առնէք ինձ ձեր տուն: Մուրադեանը (անուն վաճառականին) շատ ուրախութիւնով խոստացաւ վեր առնել իրա տուն էս որբ տղին, միայն եթէ կրխոստանայ հաւատարիմ և ճշմարիտ ծառայել: Սահակը էնպէսի խատկ սրտով խոստացաւ, որ Մուրադեանը հաւատաց նրան, վեր առաւ իրա տուն և սկսաւ մանր գործեր յանձնել նրան,

որոց միջումը Սահակը կարծ ժամանակումը կարաց ցոյց տալ  
իրա հաւատարմութիւնը և հոգացողութիւնը . և Մուրաշ  
գեանը ոչինչ պատճառ չէր զանում նրանից անբաւ ական  
րինելու : Աւելի հաւանում էր նա Սահակի իստակ սիրար ,  
որով նա շատ անդամ ինքը իրանից գանկատ էր անում , երբ  
որ մոռանում էր մէկ բան . նմանապէս սիրում էր նրա ջան-  
քը , որով նա աշխատում էր միշտ բան սովորելու : Կարծ  
ժամանակումը էս տղան էնքան հաւատարմութիւն ցոյց տո-  
ւեց իրա բարերարին , մինչեւ որ նա իրա դրան բանալիներն էլ  
թողնում էր Սահակի մօտ : Մէկ խօսքով Սահակը շատ բաղշ-  
գաւոր կրնէր , եթէ նրան անհաշտ թշնամի չոգառնար տան  
կառավարիչ կնիկը , որ ամէն հնարքով աշխատում էր չար  
խօսել նրա վրա և տնից դուրս ցցել , որովհետեւ նա դառել  
էր էնալիսի պահապան , որի մօտ էս կնիկը իրա առաջուայ սո-  
վորութիւնով չէր կարողանում տիրոջ ծախառվը հրաւիրել  
իրա բարեկաներին : Սահակի բաղդն էր , որ Մուրադեանը  
կասկածոտ մարդ չէր և էնդուր համար միշտ նկատում էր  
Սահակի լաւութիւնը և էնքան չէր հաւատում , մինչեւ որ  
բաւական պատճառ չ'ունենայ իրա միտքը փոխելու : Էս  
պատճառով նա չէր հաւատում պառաւ կառավարչի չարտ-  
խօսութեանը , բայց զգուշութեան համար աւելի նկատում  
էր Սահակի վարքին և շատ անդամ փորձում էր նրա ճշմար-  
տութիւնը : Որովհետեւ երբէք չէր տեսել նրա միջումը ուշ-  
տութիւն , վասնորոյ կարծիք չէր տանում , թէ նա կըխաբի  
իրան : Շատ անդամ , երբ որ ուղարկում էր նրան բաներ առ-  
նելու , դիտութեամբ աւելի փող էր տալի . բայց Սահակը  
միշտ ամբողջ (թամամ) յետ էր բերում աւելցածը և շատ  
անդամ սովորական գնիյն էլ էժան էր առնում : Մէկ օր  
Մուրադեանը դիտութեամբ թողեց իրա հին քսակի միջումը  
մէկ տրծալթ մանէթ , որպէս թէ մոռացած է , որ տեսնի ,  
թէ Սահակը կըպահպանի՞ իրա ճշմարտութիւնը , թէ վեր

կ'առնի իրա համար: Սահակը գտաւ էն մանէթը էն ժամանակը, երբ որ Մուրագեանի միւս ծառան էլ սենեակումն էր: Ահա լաւ դիւտ, ասաց ուրախանալով ծառան: Էդ փողով մենք կարող ենք էսօր լաւ ուրախութիւն անել, սիրելի Սահակ: Ես կարծեմ, որ դու էնքան յիմար չ'ես ընի: , որ յետ տաս էդ մանէթը աղային: Անպատճառ կրտամ, ասաց Սահակը, էնդուր համար որ էս մանէթը նրանն է, և ոչ թէ մերը: Խղճմտանքը արգելում է մեզ թաքցնել, և ես չ'եմ ուղղում: որ իմ խղճմտանքս ծանրանայ: Ես ասելով նա խիսյն տարաւ մանէթը Մուրագեանի մօտ, որ էնքան ուրախայցաւ, մինչեւ որ ընծայեց նրան էն մանէթը: Էն օրուանից յետոյ Մուրագեանը բոլորովին հաւատաց նրան, և որովհետեւ ինքը որդի չ'ունէր, վասնորոյ իրա մեռնելու ժամանակը ճշմարիտ և հաւատարիմ՝ Սահակին կարգեց ժառանդ բոլոր իրա կայքին:

ԵԵ. Մանկական անհոգութիւն:

Պրիդորի հայրը շատ խիստ մարդ էր, բայց ճշմարտասոէր: Նա անգագար հրամայում էր իրա որդուն աշխատել և շատ քիչ ժամանակ էր տալի զրուանքի համար. որովհետեւ նա միտք էր անում: Թէ շատ օգուտ բան է, որ պլանիկ աղերքը մանկութիւնից սովորեն միշտ աշխատանք անել և աշխատութիւնը իրանց համար ծանը ըսհամարեն: և էնդրով ժամանակով հեշտ կը լնի իրանց համար ամեն վիճակի ծանրութիւնը քաշել: Գրիդորին մէկ քանի ընկերներ ունէր, որք լաւ սննդած չ'էին: Ես ընկերները նրա գլուխը մտցրին, թէ հայրը շատ խիստ է վարդում նրա՛ հետ և թէ նա պարտական չէ ամեն հրամանքը զրուստ կատարելու: Եղանք ապղելով քո կեանքդ էլ քեզ համար ուրախութիւն չէ, ասում էին նրանք, քեզ արգելած է շարաթը մէկ անգամ էլ անից դուրս եալը, ասաց մէկը: Եթէ ես քո տեղը ընեի, ասաց միւսը,

ես վաղուց էն կ'անէի, ինչ որ շատերը արել են, և կ'երթայի  
աշխարքումը ինձ համար դործ ճարկելու, շատերը էսպիսի  
բանով իրանց համար բազդ են գտել, նօրումն էլ ես լսեցի,  
թէ մէկ մարդ էղպիսի բանով մեծ հարստութիւն է գտել  
Պետերբուրգումը; Յիմար կը ընես, եթէ կը թողնես, որ էսպիս  
աանջեն քեզ; Գրիգորը ես ամէն յիմար խօսքերը և գատու-  
ղութիւնները հաւաքեց իրա գլխումը, և փախաւ իրա ծնու-  
ղաց մօտից, և որովհետեւ բաւական հաւաքած փող ունէր,  
վասնորոյ կարծում էր, թէ ոչինչ բան չի պակասիլ իրան; —  
Մէկ առաւօա վաղ հաւաքեց նա իրա բոլոր փողերը և սկսաւ  
ճանապարհ գնալ, բայց սիրու գողաց, որովհետեւ հասկաւ  
նում էր, թէ մեղաւոր է ծնողաց մօտ: Սակայն իրան միսիւ-  
թարում էր էն գարդակ յօւսովը, թէ բաղդաւորութիւն կը-  
դժնի և էն ժամանակը շուտով կըստանայ իրա ծնողից նե-  
րողութիւնը: Մէկ քանի օր գնաց նա հեռու, բայց երբ որ  
տեսաւ, թէ իրա փողերը պակասում են, շատ վախեցաւ:  
Ոկտաւ ինչըրել, որ իրան մէկը վեր առնի ծառայելու: Բայց  
ոչ ոք չ'էր կամենում վեր առնել, էնդուր համար, որ հասակ  
չ'ունէր և տկար կաղմուածք ունէր: Այնու ամենայնիւ Գրի-  
գորը շարունակում էր իրա ճանապարհորդութիւնը, էնդուր  
համար, որ վախենում էր իրա հօրից և ամաչում էր յետ գալ  
տուն: Վերջապէս քաղցածութիւնը հարկադրեց նրան խնդ-  
րել մէկ գեղցուց, որ իրան վեր առնի ծառայ, և գեղցին  
ուրախութեամբ վեր առաւ: բայց ծանր մշակութիւն էր  
անել տալի և էնպ'ս վատ և քիչ կերակուր էր ուտեցնում: որ  
Գրիգորը ըկարաց համբերել: Էն ժամանակը նա խելքը հա-  
ւաքեց, դառն արտասունքով զզաց և մաքին զրեց, ինչպէս  
որ ընի, գնայ տուն իրա հօրն ու մօր մօտ: Յետին թշուա-  
ռութեան միջումը, գեղնած, ուժից ընկած և կտրտած շըրե-  
րով եկաւ նա իրա քաղաքը և սպասեց մինչև երեկոյ, որ մթնով  
գնայ իրա ծնողաց տունը: Հայրը առաջ չըճանաչեց նրան և

վախեցաւ նրա ողորմելի վեճակից. յետոյ ընկալաւ նրան ողորմած սրտով, բայց խիստ բարկանալով; Մայրը ուրախութեան արտասունք էր թափում կորած և կրկին դանուած որդւոյ համար: Աշմարիտ զղջումով ասում էր Գրիգորը, թէ արժանի չէ որդի յիշուելու, և առանց տրտունջի յանձն առաւ իրան արժանի պատիմքը: Պատիմքն էլ էն էր, որ բաւական ժամանակ նրան արկելած էր հօր և մօր հետ սեղան նստիլ և կամ նրանց մօտ ընկիլ, այլ պէտք էր նստէր և աշխատէր առանձին սենեակումը: Սրանից յետոյ Գրիգորը մասացաւ իրա ընկերների յիմար դատողութիւնները:

ԼԶ. Խնայողութեան և ժլատութեան զանազանութիւնը:

Մէկ փոքրիկ քաղաքի կառավարութիւնը ընտրեց մէկ քանի քաղաքացիք, որ ման գան ամէն աները և փող հաւատէ: Էն քաղաքի աղքատ ընտանիքին բաժանելու համար: Էս քաղաքացիքը ման գալով մէկ օր առաւօտը վաղ եկան մէկ հարուստ զիւղացիի տուն: Նրանց գալու ժամանակը նարակացած անարդում էր իրա ծառային էնկուր համար, որ նա զիւղերը թոկը զրառումն էր թողել անձրեի տակը և չէր դրել ցամաք տեղ: — Ամմա՛ տեղ ենք եկել համար, ասաց մէկ քաղաքացին միւսին. երեխ սա շատ ժլատ մարդ է. էստեղ մենք ոչինչ չենք կարող ստանալ: Փորձենք, ասաց միւսը, և գնացին մօտ: Տանտէրը ուրախութեամբ առաջ եկաւ և ինզրեց, որ տուն հրամանեն: Գնալու ժամանակը նրանք յայտնեցին, թէ ընչել են եկել: Գիւղացին ուրախութեամբ ստորագրեց մէծ գումար և խստացաւ ամէն տարի էս ժամանակին նոյն գումարը հասուցանել: Քաղաքացիքը զարմացան, և շնորհակալ ընելով չոկարացին թաքցնել, թէ երբէք յոյս չունէին էսողիսի օդնութիւն ստանալու, որովհետեւ լսեցին, թէ ինչպէս կռվում էր նա էնքան անպիտան բանի համար,

որով նրանք կարծեցին, թէ նա շատ ժլատ մարդ է:— Արովա  
չետեւ ես միշտ հոգս էի քաշում ամէն բանի համար, ողա-  
ընայք, պատասխան տռւեց զիւզացին, էնչուր համար ես  
այժմ էնքան կարողութիւն ունիմ, որ կարող եմ ուրիշներին  
էլ օդնել: Մի՛ ամաչքր բան պահելից, և էդ մի՛ համարիր  
ժլատութիւն: ամաչքր միայն ժլատութիւնից: Բարեբարու-  
թիւն անելից մի՛ փախչեր և բարեբարութիւնը փուչութիւն  
մի՛ համարիր, բայց բարեբարութիւն արա յարմար ժամա-  
նակին և մեծ զգուշութեամբ:

~~ԱՀ Փեթակ:~~

Մամիկոնեանը ուներ չորս դաւակ՝ Միքայէլ՝ Պետրոս,  
Հեղինէ և Աննա: Աէկ օր ասաց նրանց՝ որդիք, ովոր ձեզանից  
վաղը վեր կըկենայ վեց սհամբին առանց զարթեցնելու, նրա  
համար տօն կընի: Մանկունքը զարմացած ականջ էին չը-  
նում:— Խ՞նչ տօն կընի, հայրիկ, ասաց Հեղինէն:— Գու-  
իրա ժամանակին վեր կաց, ասաց հայրը, ինքդ կըտեսնես,  
ինչ տօն կընի:— Ես կըզարթեմ վեց սհամբից առաջ, ասաց  
Հեղինէն, առանց ձեր զարթեցնելու:— Սո էլ, ասացին միսսա-  
ները:— Գիշերուայ տասը սհամբը խփեց, հասաւ ժամանակը,  
որ նրանք զնան քնելու: Ամենքը իրանց ծնողոց ձեռքը համ-  
բուրելով տասցին ԲԱՐԻ ԳԻՇԵՐ և ամէն մէկը ասայ՝ կըտես-  
նէք, հայրիկ, որ վաղը վեց սհամբին ես վեր կացած կընիմ:  
Նրանք պառկեցան քնելու և ամենը քնելից առաջ կրկնեց  
ՎԵՅԻ ԿԵՍՐ, ՎԵՅԻ ԿԵՍՐ: Միքայէլը զբեց էլ իրա անկողշ  
նակալի (կարավատի) վրա՝ «վաղը վեց սհամբի կէսին Մի-  
քայէլը վեր կըկենայ»: Ահա քեզ առաջոց, թէ մարդս ամէն  
բանը կարող է անել, ինչ որ որառվ կամենայ: Միւս առաօ-  
տը ինչպէս վեցերորդ սհամբի առաջին քառորդը խփեց,  
մանկոնքը վեր կացան, հագնուեցան և զուրս եկան իրանց

սենեակից առանց խօսելու, որովհետեւ ամէն մէկը կարծում  
էր, թէ ինքը առաջէ վեր կացել, բայց համարեալ թէ ա-  
մէնքը միասին հաւաքուեցան սեղանատանը : Բարի՛ լոյս ա-  
սում էին նրանք մէկ մէկու, այժմ ահանձնը ի՞նչ տօն է պատ-  
րաստել մէզ համար մէք հայրը:

Նրանք գնացին հօր մօտ: Ահա, ասաց նա, երեխ թէ,  
երբ հայրը տօն է խստանում, որդւոց համար դժուար չէ  
վաղ վերկենալը: Աւքնն ես էլ իմ խօքը կրկատարեմ: Բայց,  
որդիք, առաջ կատարեցէք ամէն պարաւորութիւնները, ինչ  
որ անում են լաւ մանկունքը առաւօտը վերինալուց յետոյ:  
Նրանք գնացին, երեսները լուացին, բերանները մազրեցին  
խտակ ջրով, զլուխները սանողրեցին, տղօթքը արին և կրկնն  
եկան հօր մօտ: Աննան անհամրերութիւնից հարցնում էր,  
երբ կը լինի տօնը: — Ահա ձեզ տօն, ասաց հայրը, ծածկելով  
նրանց զլիսին փոքրիկ դդակներ արդնձի թելից շինած մաղի  
սկս ծակ ծակ, որ ծածկում էր աչքերը, քիթը, բերանը  
և բռլոր երեսը, խակ թնացեալ մասը զւսի ծածկվում էր մաս-  
հուկով: — Հիմի հասկանում էր, հարցրուց Միքայելը միւս-  
ներին, ես կարծում եմ, որ էսօք մեր հայրը կամենում է  
մեղք հանել: — Յիրաւի, էպահս է, ասաց հայրը: զուք ի՞նչ  
էք կարծում, լաւ տօն չէ: — Ա՞ս, ինչպէս զեղեցիկ տօն է,  
ասացին ամէնքը, և վաղելով գնացին հօր ետելից, որ նմանա-  
տէս ծածկեց իրա զլիսին էն զգակից և ամէն մէջին տուեց  
մէկ մէկ բան տանելու: Պետքուին առեց կրակարանը (մանւ-  
զալը) վառած զործ լոյլ, Միքայելին մէկ կապ ափսինդ (խոտ),  
աղջկերքին երկայն զանակներ, նրանց ետելից հայրը և մայրը  
տանում էին մազ և ամաններ:

Եկան պարտէվը և տօնը սկսու: Հայրը բաց արաւ ցանկը,  
որ տեղ կենում էին մեղրաճանձերը, և վիթակները վիր ա-  
ռաւ իրանց աւելիքից, յետոյ վեր էր առնում մէկ կապ ափ-  
սինդ, զնում էր վառած ածուխի վրա և ծուխուցնում

էր փեթակներին : Երբոր մեղուները մուխից փախան թռչեւ  
լով , հայրը առաջ կտրեց մեղքամոմը , դարսեց մաղի վրա , և  
յետոյ կտրեց և հանեց մեղքը մեծ մեծ կտորներով : Ի՞նչ  
ուրախութիւն էր : Մեղքը տարան տուն , մանկունքը հաւա-  
քուեցան , խակ մայլը բերաւ սպիտակ հաց , կտորեց , կտոր-  
ների վրա քսեց մեղք և տուեց մանկանցը : Հայրը նմանապէս  
եկաւ և ասաց՝ որդիք , ձեզ համար էլի տօն կընի . քսեցէք  
մեղքը հացի վրա և կերէք : Բայց ոչ ոք խորիսին ձեռք չը-  
տայ : Ամէնքը լսեցին հօր խօսքը , բաց ՚ի Աննայից : Նա շատ  
ուզում էր խորիսին համը տեսնել . գնաց սեղանի մօտ , ա-  
մանի միջից մէկ կտոր խորիսի վեր առաւ և բերանը դրեց :  
Յանկարծ էնպէս զոռացնա , որ բոլոր տան միջումը լսուեցաւ  
ձայնը : Եղբայրները և քոյրը սկսեցին վախենալով հարցնել  
— ի՞նչ էլաւ քեզ , Աննա ջան : Հայրը և մայրը վաղելով եւ-  
կան և նմանապէս հարցըն՝ ի՞նչ էլաւ քեզ , Աննա : Բայց Ան-  
նան բերանը բռնած դուռում էր և չէր կարողանում խօսել :  
Մայրը բաց արաւ նրա բերանը և մտիկ տուեց : Բայց ի՞նչ  
տեսաւ . . . մէկ փոքրիկ մեղքածանճ նստած էր նրա լեղուի  
վրա և իրա խայթը ցցել էր լեղուի մէջը : Թէպէտ մայրը էն  
սհաթին վեր առաւ մեղքածանճին . բայց ողորմելի աղջկայ  
լեղուն էնպէս ուռաւ , որ նա բոլոր օրը ոչինչ չըկարաց ու-  
տելու : — Միւս տղերքը կերան իրանց մեղքը հացով . որ նրանց  
շատ ախորժ թռւեցաւ և Պետրոսը ասաց , թէ շատ հաւա-  
նում է էս տօնը : — Հեղինէն դուրս մտիկ տուեց ալտուհա-  
նից և տեսաւ , որ իրանց դրայիի աղջիկ Մարիամը անց էր  
կենում : Խեղճ Մարիամ , ասաց նա . նրա հայրը մեղքածան-  
ճէր չունի և չի կարողանում տալ նրան սպիտակ հաց մեղք  
քսած : Մայր իմ , մայր իմ , չի կարելի Մարիամին տալ  
մեղքով հաց : Մեծ ուրախութեամբ , որդեակ իմ , ասաց  
մայրը , և տուեց նրան մէկ ամբողջ հաց մեղքով , խակ հե-  
ղինէն վակելով տարաւ տուեց Մարիամին : Ի՞նչպէս ուրա-

Խացրուց նա էն աղջկան. ի՞նչպէս նա շնորհակալ էր չեղեւ նէից: Էն ժամանակը չեղինէի համար մեղքը աւելի քաղցր թռւեցաւ:

Ա. Կէակ ձկնալից:

Կամսարականի լճակումը շատ մանր ձկներ կային: Երբ որ հայրը կամենում էր ուրախայնել իրա որդիկերանցը, տառնում էր նրանց լճակի մօտ: Ամէն մէկը վեր էր առնում մէկ կտոր սև հաց, բերում էր և մանր կտորներով գծում էր ջրի մէջ և ձկները սկսում էին ուտել էն կտորտանքը: Ենտեղ նրանում էին նրանք երկար ժամանակ և մտիկ էին տալի, թէ ինչպէս ձկները խաղում էին, ինչպէս մանր մժեղները թռչուում էին ջրի երեսին և ինչպէս գորտերը հանում էին զլուխները ջրից և կրկին մտնում էին ջուրը, երբոր տղերքից մէկը մօտենում էր լճակին:— Մանկունքը շատ անգամ խօսուում էին իրարու հետ՝ միս եթէ մէկ անգամ պատահէր մեզ բռնել էս ձկներից մէկին: կամ էս գորտերից, որ մօտից տեսնէինք. բայց կամսարականը չ'էր թռողնում նրանց: (Իրաւո՞նք է էս չըթողնելը: Աս կարծում եմ, որ իրաւոնք է. մանկունքը գորտ չ'են, ձուկը չ'են և նրանց նման չ'են կարող կենալ ջրի միջումը: Խոկ եթէ աղան ջուրը ընկնի, էն ժամանակը լառ կրնի: Խապէս էլ ձկան համար է ջրից դուրս էլած ժամանակը:) Մէկ օր կամսարականը ասաց իրա որդիկերանցը՝ ուզո՞ւմ էք գնալ լճակի մօտ: Ուզում ենք, ուզում, ենք, ձայն տուխն ամէնքը, և վագեցին հօր ետելից: Կոստանդինը վաղեց առաջ և ողջից առաջ հասաւ լճակի մօտ: Ինչպէս հասաւ լճակին, իսկոյն յետ դարձաւ և ոկտաւ գոչել՝ վասիլ Նղեսարէթ, Աննա, մեր հայրը հանակ է անում, շուտով եկէք: Ամէնքը վագեցին ով ինչպէս կարաց, և տեսան որ բոլոր ջուրը թռողած էր լճակից և յատակումը շարժում

էին մեծ և մանր կենդանիք։ Մէկ տեղ շորժում էր մեծ  
 ձռւիր, միւս տեղ ուրիշ ձռւիր աշխատում էր մանելցելիս  
 մէջ։ ուրիշ մանր ձկներ, գորտեր, զեռուներ, որդներ, և այլն,  
 ծածկել էին բոլոր լճակի յատակը։ Են ժամանակը պէտք էր  
 տեսնելու բոլերանց ուրախութիւնը։ մէկը ձայն էր տալի՛ հայրիկ,  
 տեսէք ինչ մեծ դորտ է։ միւսը՝ Աննա, Աննա, աես ինչ  
 մեծ խեցգետին է։ Եղիսարէթը դոչում էր՝ ովկ է կարող ինձ  
 համար հանել էն ճիճուն, այ։ Էն ճիճուն, կոստանդին, որ  
 մեծ ձկան մօտ է։ Նրա թերի ծայրերը դեղին են։ Վերջուա  
 սկս հաստանողինը ասաց՝ ախ, հայրիկ, եթէ դուք ուղղում էք  
 մեղ ուրախացնել, հրաման տուեք մեղ մանել լճակի մէջ։  
 Կրանից յետոյ միւսներն ել սկսեցին խնդրել սիրելի՛ հայրիկ,  
 հրաման տուեք մենք ձկներ կը բռնինք, խեցգետիններ և  
 դորտեր, կարծենք որ շատ ուրախ կը նենք։ — Գնացեք, ասաց  
 հայրը, բայց առաջ հանեցեք ձեր կաշեիները և դուքնեքը։  
 հանեցեք ձեր վարտիքը և բարձրացրեք ձեր շրերի թերը,  
 որ չաղտոտէք։ Են տեղ դրած են սակառներ (սեփեթներ)։  
 դուք կարող էք նրանց միջումը ձկներ հաւաքել մէկ սակառ  
 ոի կայ, որի մէջ պէտք է զձէք խեցգետիններ, իսկ ուրիշ  
 ամսների մէջ զձէք դորտեր, ճիճուններ և ուրիշ ինչ որ կը-  
 դանէք ցելսի միջումը։ — Ի՞նչ ուրախութիւն էլաւ։ Բոլոր  
 սհաթէ է քաշում, երբ որ նրանք հանում են շրերը քնելու  
 ժամանակը, իսկ այժմ մէկ բուփէի միջումը ամենքը պատ-  
 րաստ էին, և ինչպէս հայրը հրաման տուեց, իսկոյն վաղեցին  
 լճակի մէջ։ Եւ ի՞նչ մեծ ուրախութիւն էր։ Անչպէս մէկը  
 բունում էր կամ ձուկը, կամ մէկ դորտ, կամ մէկ խեցգետին  
 և կամ ճիճու, իսկոյն ուրախութիւնից դոչում էր և իմաց  
 էր տալի միւսներին։ Երկու սհաթէ հրաման տուեց նրանց  
 հայրը զբօսանք անել էս զուարժութիւնով։ յետոյ ծափ տա-  
 ւեց և հրամայեց նրանց դուրս դու լճակից։ բայց դուրս դալը  
 էնպէս շնոր չ'էլաւ, ինչպէս մանելը, ամենը ուզում էր էլ

մէկ բան բռնել։ մէկը ձայն էր տալի՛ էլի մէկ խեցղեախն։  
միւսը՝ էլի մէկ ձուկը, սիրելի՛ հայրիկ։ բայց հայրը ասաց  
մէկ, երկու, երեք, և էս նշան էր, թէ որդիքը պէտք է հնա-  
պանդին։ Յետ այնորիկ նրանք ամէնքը դուրս եկան լճակից,  
բայց ընչի նման էին։ ամէնքը ցեխոտ և աղասոտ։ Մայրը վա-  
ղուց զիստէր, որ էստէս կընին, և էնդուր համար հրամայել  
էր բերել խտակ շաղիկներ և ուրիշ շորեր։ Հայրը տարաւ  
նրանց ազբիւրի մօտ։ Էնտեղ նրանք լուացին իրանց ոտնելը,  
ձեռները և երեսները։ յետոյ ամէն մէկը վիր տուաւ իրա շա-  
պեկը, վարտիքը և շորերը, պնաց մէկ թուփի ետեւ և էնտեղ  
շորեւը փոխեց։

Այժմ, որդիք, ասաց հայրը, դուք բռնեցիք էսօր  
շատ ձկներ։ բայց տեսնենք էն գերիների համար էլ լու-  
է, թէ չէ։

— Լաւ է, ասացին ամէնքը։

ՀԱՅՐԸ։ Դուք կարծում էք, թէ նրանց համար էլ էն-  
պէս հեշտ է շունչ քաշելը սակառիների և ամանների միջու-  
մը, ինչողէս ջողումը։

ԿՈՍՏԱՆԴԻՒՆ։ Ես չ'եմ կարծում։

ՀԱՅՐԸ։ Ուրեմն անիրաւութիւն է երկար տանջել նրանց։  
Սամուէլ (այս էր ձկնորսի անունը, որ ջուրը թողել էր լճա-  
կից) բեր էստեղ ամէնը, ինչ որ բռնեցին տղերքը, մէնք կր-  
խոսենք նրանց վրա։ Դուք, որպիք, կոստանդին, վամսիլ,  
եղիսաբէթ և Աննա, և զու սիրելին կին իմ, նստեցէք ինձ  
մօտ և ասացէք Ճշմարիտ կըխօսիմ, թէ չէ։ Կոստանդին,  
երբ մարդս հրաման ունի սպանել ահասունին։

ԿՈՍՏԱՆԴԻՒՆ։ Երբ որ նա վկասում է մեղ։

ՀԱՅՐԸ։ Ուրեմն ես երիկէք պէտք չէ սպանեմ կովին, որով-  
շերեւ կովը ինձ վնաս չէ տալի։

ԿՈՍՏԱՆԴԻՒՆ։ Կովին մէնք սպանում ենք էնդուր հա-  
մար, որ նրա միսը ուտում ենք։

**ՀԱՅՐԸ:** Ուրեմն ես կարող եմ սպանել անասունին, երբ  
որ նա լնձ զնասում է, կամ երբ որ պէտք է նրա միսը ուշ  
տեմ: Բայց ընչե՞ համար են սպանում կէտ ձուկին. նա վնաս  
չէ առլի և նրա միսը չ'են ուտում:

**ԿՈՍՏԱՆԴԻՆԸ:** Ճշմարիտ է, բայց նրա խողը պէտք է  
մարդուն:

**ԱՆՍԱ:** Ոսկորներն էլ:

**ՀԱՅՐԸ:** Ուրեմն երկու պատճառ կայ: որ մարդու համար  
մեղք չէ անասուն սպանելը. մէկ՝ երբ որ նրանք վնաս են մեր  
կեանքի համար, և երկրորդ՝ երբ որ օգուտ են բերում իրանց  
մեանելից յետոյ: Հրամայեցէք բերել էստեղ դատաստան առ  
նելու բոլոր մեր գերիներին. տեսնենք իրաւունք ունի՞նք  
նրանց սպանելու: Ահա երկու սակառի լիքը ձըկներով. էս  
ձկները մեղ վնաս տուել են:

**ԱՄԷՆՔԸ:** ՈՉ:

**ՀԱՅՐԸ:** Օգուտ կը լի՞ մեղ, եթէ մենք սրանց սպանենք:

**ԿՈՍՏԱՆԴԻՆԸ:** Կը լի. էնդուր համար որ մենք կ'ուշ  
տենք սրանց միսը. սրանց միսը շատ համեղ է:

**ՀԱՅՐԸ:** Մի և նոյնը կարելի է ասել միւս ձկների և խեցա  
զետինների համար. կարելի՞ է ուտել սրանց միսը:

**ԱՆԻԱ:** Փորձիր, մայրիկ, եփել սրանց, դու կը տեսնես,  
թէ ինչպէս համեղ են:

**ՀԱՅՐԸ:** Ուրեմն էս խեղջերը պէտք է ամենքը մեռնեն:  
Բայց որովհետեւ մենք բոլորին միասին մէկ անգամումը չ'ենք  
կարող ուտել էնդուր համար, դու Սամուել, մնացածներին  
ածակառինների համար: ԽՄ կինը կը հոգայ, որ սրանք ամեն օր  
ուտելիք ստանան: Այժմ կարզը հասաւ պարոն գորտերին.  
սրանք մեղ վնաս տուել են, թէ չէ:

**ԱՄԷՆՔԸ:** Ո՛չ, ո՛չ:

**ՀԱՅՐԸ:** Օգուտ կը լի՞ եթէ մենք սպանենք սրանց :

կամի՞ք որ ձեր մայրը հրամայի տապակել սրանց ձեզ համար:  
Եղիսաբէթը: Ֆռւ, ես չեմ ուահել դրանքը: Դու չե՞ս  
ուզում, Աննա:

Աննա: Թող ուրիշները ուտեն զորանքը, ես սիրում  
եմ խեցգետիններ:

ՀԱՅՐԻ: Ուրեմն թող կենդանի մնան դորտերը:

Էսպէս էլ վճարեցին կենդանի թողնել բոլոր Ճիճունեւ  
քին և զեռուներին: Յետոյ Կամարականը վեր առաւ ամեն  
մէկ սեսակից մէկ մէկ հաս, ցոյց տուեց որդւոցը և պատ-  
մեց, թէ ի՞նչպէս են նրանք կենում, ի՞նչ են ուտում և  
ընչե՞ համար պէտքական են մեզ:

Երբոր էս ամենը վերջացաւ, հայրը ասաց՝ Հիմի, ո՞ր-  
պիք, որովհետեւ էս ամեն անառուները մեզ ոչինչ վկաս չեն  
անում իրանց կեանքովը, և իրանց մահովն էլ ոչինչ օգուտ  
չեն բերիլ, ուրեմն թողնենք սրանց ազատ:

— Այս, այս, ձայն տուին ամենքը. էղպէս անենք:

Էն ժամանակը ամենքը կրկին զնացին լճակի մօտ և  
իրանց հետ տորան ամանները, որոց միջումը կային զանազան  
կենդանիք, և թափեցին լճակի մէջը: Ուրախութեանը վերջ  
չըկար: Ի՞նչպէս ուրախանում էին նրանք տեսնելով, թէ  
ի՞նչ ուրախութեամբ սկսան կենդանիքը ազատ թռչուել և  
սովոր:

Ժամանակը հասաւ տուն դնալու: բայց Ճանապարհ  
ընկնելից առաջ հայրը հարցրուց Կոստանդինին՝ մենք ընչե՞  
համար կրկին թողնենք էս կենդանիներին լճակի մէջ. ապ-  
քելու թէ մեռնելու համար:

— Ի՞ հարկէ, ապրելու համար, պատասխան տուեց  
Կոստանդինը:

— Ուրեմն մենք պէտք է հոգանք, թէ ի՞չով ողեաք է  
նրանք ապրին: — Էս ասելից յետոյ հայրը հրամայեց փակել  
են ծակը, որտեղաց զուրս էք զնացել ջուրը, և շուտուկ

ջուրը կըկին սկսեց հաւաքուիլ:

Արանց խօսելու ժամանակը մայրը առաջուց դնացել էր տուն, պատրաստել էր լաւ ճաշ, և հրամայել էր ևս եփել ձիներ և խեցղետիններ: Որովհետեւ տղերքը բաւական ժամանակ մնացին բաց օդւամբ, էնչուր համար ամէն կերաւ կուրները նրանց շատ ախորժ թուեցան:

Ճաշեց յետոյ ամէնքը դնացին հօր մօտ, ձեռքը համբուրեցին և ասացին՝ շնորհակալ ենք ձեզանից, հայրիկ, գուք էսօր մեղ համար պատուական տօն արիք:

լթ Պէտք չէ խաղալ հրացան դէնքով:

Մէկ որսորդ դնաց մէկ օր որս անելու. բայց որովհետեւ ոչինչ չըպատահեցաւ նրան, որ սպանի նա տուն եկաւ և քաշ արեց լքցրած հրացանը (թիվենիը) պատի վրա միւս գարդակ հրացանի մօտ: Մէկ երիտասարդ տղայ 15 տարեկան, որ կենում էր որսորդի հետ մէկ տանը, եկաւ կոշիկաները սրբելու համար: Նա շատ ժամանակ էր որ ուզում էր որսորդ գառնալ, և եթէ գանում էր հրացան, խիզին սկսում էր խաղալ, թէ և ամէնքը շատ աշխատամ էին էդ սովորութիւնը նրան թողնուլ տալ ծեծելով և սպառնալով: Ես անդամն էլ նա չըկարաց համբերել և վեր առաւ պատից հրացանը, քաշեց չախմախը, թողուց և արձակեց հրացանը: Նրա տարարախմութիւնից լքցրած հրացանը, գնդակը (գիւլան) անցաւ պատուհանից և դիպու մէկ փաքրիկ աղջկայ: Ես աղջիկը թէպէտ վէր կացաւ վեր ընկած տեղեցը և անցկացաւ մէկ քանի քայլ անքալով, բայց աւելի չըկարաց առաջ գնալ և կրին վէր ընկաւ: Են ժամանակը նրան օդնութիւն հասաւ կառավարը: Աղջկան զրին կողինքի մջ և խիզին ձիւաւոր մարդ ուզարկեցին քաղաք բժիշկ բերելու. բայց նա կէս սհամթից յետոյ մեռաւ առանց օդնութեան:

Երիտասարդը, որ խղճմանքից տանջվում էր, վեր ընկառ պատռւհանից պարտիզի մէջ և փախաւ. բայց միւսօրը բըռւնեցին նրան, և իրա անզգուշութեան պատճառով, որով մարդաբան կառաւ, երկար ժամանակ մնաց բանտումը: Աերջն էլ նա երբէք չ'էր կարողանում հանդիստ մնալ, էն դուք համար որ բոլոր կեանքումը քրկարաց իրա մոքից հանել էն պարհուրելի պատահմունքը:

Խ. Աչափ խաղալու արտմալի վախճանը.

Մէկ աղքատ այրի կնոջ որդի անունը Մարկոս, պղոխի ժամանակից չար էր, անհնազանդ և անզգոյշ: Նրա հայրը, որ նրան սաստած էր պահում, մեռաւ էն ժամանակը, երբ որ Մարկոսը Յ տարեկան էր. իսկ մայրը էնքան փափկասիրտ էր, որ չ'էր կարողանում պատժել չար Մարկոսին նրա անշնագանգութեան համար: Նա կարծում էր, թէ բաւական է քաղցր խօսքերը և խրառները, բայց անզգամ որդին չ'էր հասկանում: Շատ անզամ արտասունքով ինչըրու մ էր նրանից մայրը, որ չըթոչի և չըդնայ բարձր բաների վրա և էնդրով իրա կեանքը չըպձի վտանգի մէջ. բայց ինչպէս մայրը հեռանում էր նրա մօտից, նա խսկոյն սկսում էր էլի թռչուակը, բարձրանալ առաջվայ պէս, և շատ անզամ տուն էր դալի էնպէս թռւացած և դաղրած, որ խեղճ մայրը վաւենում էր մորիկ տալով նրա երեսին: Քանի անզամ խրատում էր նրան մայրը քրտնած ժամանակը ջուր չըխմել. բայց նա չ'էր կարողանում համբերել և խսկոյն ջուր էր խմում էն ժամանակն էլ, երբ որ քրտնքը վազում էին ելեսիցը: Եւ ի՞նչ էլաւ էս ամէն բանի վերջը: Մէկ շոք օր նա տռւն եկու սաստիկ քրանած և լաց ըլնելով ասաց, թէ կողքը ցաւում է և սիրտը խառնում է: Վախճան մայրը ՚ի դուք աշխատեց օգնել նրան, բայց որովհետեւ նրա զոռալը սաստ-

կոցաւ, նա բժիշկ կանչեց: Բժիշկը լու հարցում քաջանելով  
և մարմնին մտիկ տալով յայտնեց, թէ Մարկոսը ստուիկ  
թռչելով շատ վասնկաւոր ոսկոր է կոտրել: Կարող էք երեսո-  
կայել ձեր մաքումը, սիրելի՛ մանկունք, թէ ի՞նչպես վախե-  
ցաւ նրա խեղճ մայրը: Թողնենք զեռ ևս էն խարջերը (Ճախ-  
սերը), որ նրա յիմար անհաւաղանդ թեան պատճառաւ քա-  
շեց խեղճ մայրը: Աւ էր, որ բարեսիրատ բժիշկը բան չ'առեց  
կոտրած աեղը կապելու համար: Բայց էս չ'էր նրա միայնակ  
և ողջից մեծ տարրութիստութիւնը, որ նուր բերու իբա զլիսն  
իրա չարութիւնով: Շուտով սկսաւ նրա կուրծքը յաւել և  
առողջութիւնը թուլացաւ: Նա կարող էր իրա մօր ծերու-  
թեան ժամանակը օգնել նրան, իսկ այժմ՝ նա պատճառ դա-  
ռաւ նրա տարաբախտութեան և տրամութեան:

Ասացէք. ի՞նչ օգուտ բան էք քաղաքմ էս սրտոմու-  
թիւնից: Ո՞րպիսի խաղերից զուք հեռու կրկենաք: Ի՞նչ բա-  
նին ականջ կըդնէք և բնչէ՞ն կըհանիք: Ընչե՞ համար ոկտոք  
է էդսիս անէք, և ոչ թէ նմանիք չար Մարկոսին:

ԽԱ. Թրթուրների բան:

Անկ երեկոյ կատարինէն իրա մօր չետ ման էր դալի՞  
տափումը, և մայրը սորվեցնել էր նրան ամէն բանի վրա մակի  
անել ու շաղբութեամբ: Հիմի էլ նու էնորէս էր անում: Յան-  
կարծ նա կանգնեցաւ և ձայն տուեց՝ մայրիկ, ալի՛ էստեղ  
շուտով և անս թէ ի՞նչ է: Մայրը եկաւ և տեսաւ, որ մէկ  
եղինջի (Ճինճառի) թռուփ բոլորավին ծածկած էր թրթուր-  
ներով. նստած էին տգեղ որդունք մազոտ մէջքով և կանաչ  
խաղերով մազերի միջում: — Սպանե՞մ էս թրթուրներին, ա-  
սաց կատարինէն: — Եէ, ասաց մայրը, զու տեսնում էս, որ  
թրթուրները հաւաքուած են եղինջի վրա, ուրիմ անվասա-  
նն. բայց որ ժամանակ ականես նրանց նստած կեռասի վրա,

կամ ռւրիշ պաղաքեր ծառի վրա, են ժամանակը կարող եա  
սպանել իրեւ վեատարեր զեռուներին : Յայց ես որդունքը  
կարող են չեզ մեծ ուրախութիւն տալ վերառ գրանց, տաք  
տուն և կերակրիր:

Ապատարինէն խկոյն ձեռքը զձեց որ մէկին վեր տանի,  
բայց խկոյն ձեռքը քաշեց դոչելով որովհետեւ միտք չ'արաւ,  
թէ եղինջը ձեռքը կը ծանիի : Միթէ զու ըզի խանո՞ս ի՞նչողէս  
պէտք է վեր տանել եղինջը, որ ձեռքդ չըծա՛ի, հարցրուց  
մայրը : Կատարինէն մասածեց, հանեց իրա ձեռքի աղուխը,  
փաթաթեց նրա միջաւմը իրա ձեռքը և կարեց եղինջը : Ու  
բախութիւնով տոքեց նոս թրթուրներին իրանց տաւն, զրեց  
եղինջով մէկ մեծ շուշայ ամանի մէջ, որ նրան տաւեց մայրը  
և ամանի բերանը կապեց թղթով :

Միթէ դու ուզում ես, որ գրանք խեղղվե՞ն, հարցրուց  
մայրը :

— Ամենեին չեմ ուզում, պատասխան տուեց կատարինէն :

— Ուրիշն ծակեր շինիր թդդ թդի վրա, որ ամանի մէջօդ  
անց կենայ:

Կատարինէն մօր առածը արեց և ուրախութիւնով մասիկ  
էր տալի, թէ ինչողէս թրթուրները ուտում են եղինջը : Ոիւս  
օրը, երբ որ Կատարինէն ուտում էր իրա նախաճաշիկը,  
մայրը հարցրուց՝ մուտքել ես քո թրթուրներին, և նրանց  
էլ տուել ես էսօր նախաճաշիկի:

— Օ, ասաց կատարինէն, թրթուրների ամանը լիքն է  
եղինջով :

— Բայց մտիկ տուր, ասաց մայրը, կարելի է եղինջը  
չորսած ըլնի, ես խեղձ կ'ենդանիները չորսած եղինջ չ'են  
ուտում: Որովհետեւ զու նրանց բերել ես քո տուն հիւր  
(զննադ), ուրեմն քո պարտաւորութիւնն է հսկալ նրանց կե-  
րակուրի համար և ամէն օր նրանց տալ կանանչ եղինջ .  
նրանք իրանք չ'են կարող հիմի իրանց համար կերակուր ծա-

թել էնդուր համար, որ դու զօկիլ ես նրանց աղտառաթիւնից:

Արանից յետոյ Կատարինէն էլ չէր մոռանում իրա մանր հիւրերին: Հինգ օր շարունակ տալիս էր նրանց ուտելիք և ուրախանում էր մտիկ տալով նրանց ուտելուն: Վեցերորդ օրը նա ուղում էր նրանց կերակուր տալ բայց ով զորմանք. • • երբ որ ուղում էր բայց անել թուղթը, աեսաւ որ բուլը թրթուրները կազմ էին թղթին. եաքի ստքերով ոմանք բռնած էին շուշան, ոմանք թուղթը, և կործես թէ միաշածած էին նրանց հետ: Վաղելով զնաց Կատարինէն իրա մօր մօտ և ցոյց տուեց կախ ընկած թրթուրներին: Ի՞նչ է պատահել դրանց, սիրելի մայրիկ: Ես սրանց ամէն օր բաւական կերակուր էի տալի, բայց սրանք մեռել են:

— Հանդիսան կացիր, պտտասխան տուեց մայրը, սրանք մեռած չ'են, և գեռ քեզ երկար ժամանակ կ'ուրախացնեն. թող մեռն կախ ընկած, ձեռք մի՛ տար դրանց:

Կատարինէն իրա մօր հրամանը կատարեց և զդուշութեամբ կապեց շուշոյ ամանի բերանը: Միւս օրը ինչպէս զարթեացաւ Կատարինէն, իսկոյն վաղեց և տեսաւ որ շուշի միջումը նոր բաներ է էլել. թրթուրները կորել էին: իսկ թղթի վը կախուած էին երկայն մաշկեր, գլխներին մանր պատկի: Նըր բանք կենդանի էին և շարժվում էին: Կատարինէն զսրմացած չ'էր իմանում ի՞նչ անի. յանկած ծափ տուեց և զսրմացած մնաց անխօս: Վերջապէս ձայն տուեց՝ մայրիկ, շուտով եկ էսաեղ, տես թէ ի՞նչ են էլել իմ թրթուրները:

— Ես քեզ չի ասում, թէ թրթուրները գեռ շատ կ'ուրախացնեն քեզ: Հիմի լաւ մտիկ տուր, աես նրանք հանել են իրանց վասդի մորթը, որ նրանց մօտ կոխուած է: և իրանք գառել են ուրիշ կենդանի, որ ասում են ԿԻՍՍԹԻԹԵԼԻՆ. թող կախ ընկած մնան, և գու ամէն օր մտիկ տուր շուշին: կարելի է շուտով ուրիշբան էլ կըտեսնես, որ քեզ կըզա մայնի:

Էնդէս էլ էլաւ: Ժամանակը շատ երկար էր երեսում

անհամ, եր Կատարինէն և նա սկսել էր յոյսը փարել: Մէկ քանի շաբաթից յետոյ, Կատարինէն մէկ օր գնաց տեսնելու իրա շուշան: Եւ ի՞նչ տեսաւ . . . բոլոր շուշան լիքն էր գեղեցիկ թիթեռներով: — Ա՞ս, մաիկ տուր, ինչը ունեմ եմ. սիրելի մայրիկ, ասաց նա, ի՞նչ ունիմ ես իմ շուշի միջումը:

Մայրը ուրախ գէմքով եկաւ, և երբ որ երկուսն ելլաւ մտիկ տուին, ուրիշ նոր հրաշք էլ տեսան: Մէկ թրթուր, որ գեռ փակուած էր իրա բժոժումը, ոտքերով հանեց իրա վրոյից և գուրս եկաւ միջից. նրա թեւերը գեռ փափուկ էին և ծալած էին միասին ինչպէս մէկ թրթի կտոր: Շուտով նա սկսեց վազել շուշի վրա և կախ ընկաւ թրթից. նրանք տեսան, թէ ինչպէս բացվում էին նրա թեւերը և կէս ոհաւ թումը բոլորովին կարգուեցան: Էսողէս անցաւ բոլոր տուաւուր մինչև ճաշ, անդադար թիթեռները մէկ մէկու ետևեցից գուրս էին գալի իրանց բժոժներից, և ճաշից յետոյ ամէնքը գուրս եկան:

Այժմ քեզ համար նոր ուրախութիւն կլնի, ասաց մայրը, առ քո շուշի ամանը, տար պարտէզը, բաց արա թուղթը և թող թիթեռներին, որ աղատուին:

Կատարինէն մօր հրամանը կատարեց, և անսպատմելի է լաւ նրա ուրախութիւնը, երբ որ տեսաւ, թէ թիթեռները սկսեցին գուրս գալ և թռչել մէկ ծառից միւս ծառի վրա: Էս բանից յետոյ, երբ որ Կատարինէն գնում էր պարտէզը և տեսնում էր սեւազոյն թիթեռն սեւ սեւ նաշխիրով, միշտ ասումէր՝ կարծեմ որ դու իմ շուշայ ամանի միջին ես:

ԽՅ. Ոչ ոքի մէ անարդիր որ վեճակից ուզում է ըլնի,

Մէկ քաղաքական ուսումնարանումը կարդում էին դեղոց աղերք էլ: Քաղաքացիքի աղերքը միշտ կարծում էին, թէ իրանք գեղցիքի աղերքից լաւ են, իսկ գեղցիքի աղեր-

քը ծիծաղում էին քաղաքացիքի տղերքի վրա: Ես բաները էնքան երկարեցան, որ վերջը կռիւ բայցուեցաւ: Վարժապետը իմացաւ էս բանը և պարզ մեկնեց նրանց, թէ ինչքան յիմար բան է եսովէս վարուիլը: Դուք ամենքդ գեռ մանկունք էք, ասում էր նա: և երբէք չ'էք կարու խմանալ թէ ի՞նչ վեճակումը կընիք ժամանակով: Կարելի է, որ շատ քաղաքաց որդիք իրանց համար աղբուստ ճարեն զիւղաւմն, և շատ զեղբցիքի որդիք իրանց համար հաց ճարեն քաղաքումը: Անձ համար աշխատասէք և բարի վարքով աղան ամենից լաւն է, ի՞նչ վեճակից ուղղում է ընի: Մենք ամենքս մարդիք ենք: մեզ ամենքիս Աստուածէ սաեղծել և ամենքի վրա հաւասար սղորմած է: Կաւ միտք արէք, եթէ իսկի մեկ մարդ չըկա մնար էն գործով պարապել ինչ որ մարդիք հասարակօրէն զայելու չ'են համարում: ի՞նչ մեծ գժուարութիւններ կը քաշէնք մենք:

Բայց էս անխելք արերքը ականջ չողրին էս խօսքերին: Նրանք պատմեցին էս բանը իրանց աներումը և երկու կողմիցն էլ զնուաւեցան էնոպիսի ծնողք, որք իրանց աղերքի նման էին հասկանում բանը: Կուրը և անբաւակութիւնը հասաւ էն աստիճանը, մինչև որ քաղաքացիք չըկամեցան թողնելզեղցոնց որդիերանցը գալ քաղաքի ու ոռումնարան: Էն ժամանակը գիւղացիքը խօսք կապեցին, որ մեկ փոքը ժամանակ ոչինչ բան չստանեն քաղաք: Արկու կողմից անբաւականութիւնը սասաւ կացաւ, և քաղաքացիքը և դիւղացիքը միմեանց յիշոց էին տալիք: Ես պատճառով շուտով երևեցաւ մեծ պակասութիւն և բաները խառնուեցան: Քաղաքացիքը ալիւր չ'ունեին, ուրիմն հաց էլ չ'ունեին: Մորթողները չ'ունեին արջառ մորթելու համար: Վաղացներումը չըկար ոչ կաթը, ոչ ձու, ոչ խոտ, ոչ փայտ և ոչ ուրիշ շատ հարկաւոր բաները որք բերում են զեղերից քաղաք ծախելու համար: Գեղցիքնոց հատ քար էլ էս կոխները մեծ վնաս բերին: Ճշմարիտ է, թէպէ

նրանք ամեն շատ հարկաւոր բաները ունեին, բայց շատ էին հաւաքում էն ուսելեղին բաները, որ նրանք առաջ տառ նում էին քաղաք ծախելու. էս բաներից շատը փչացան և փթեցան, որից նրանք միշտ փող էին ճարում։ Շատ բանումը սկսեցին շուտով պակասութիւն քաշել, որ առաջ էն բաները շատ էժան առնում էին քաղաքումը, էնդուր համար, որ քաղաք բերում էին շատ ապրանք. և երբ պէտք էլաւ հատուցանել գարբինին, զերձիկին և մշակներին, էն ժամանակը թէպէտ նրանք շատ աւելորդով ունեին հաց, կաթը, իւղ, խոտ և փայտ, բայց փող չունեին։

Երկու կողմիցն էլ տեսան, որ քաղաքացիքը չ'են կարող կենալ առանց զեղցոց, իսկ զեղցիքը առանց քաղաքացոց։ Համաձայնեցան որ թաղնեն ամէն ծաղրածութիւնը, նաև խատինքը և պարծենալը։

Ա. մէնքը վերջապէս համաձայնեցան, թէ քաղաքներու մէնք գեղերումն էլ կան բարի և չոր մարդիք. բարենունդ և անքաղաքավար մարդիք, խելոք և յիմար մարդիք. թէ բը նակիչները պէտք է լինին քաղաքումն էլ, զիւղումն էլ և թէ քաղաքացին էլ, զիւղացին էլ պէտք է կատարեն իրանց պարտաւորութիւնները, և էն ժամանակը երկուսն էլ կընին հաւասար պատուելի։

ՎԵՐԴ.



*Archaeologia  
1747*









UNUSUAL VIEWS & 1954 p.

2013

4184

